

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

4♦95



ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՄՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է



Հայաստանի Հանրապետության Նախագահ,
զինված ուժերի Գլխավոր հրամանատար *Լևոն Տեր-Պետրոսյանը*
և Ամենայն Հայոց կաթողիկոս *Գարեգին Ա-ն* Սուրբ Էջմիածնում



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Լույս է տեսնում 1995 թվականից
տարին վեց անգամ

4.1995

Ծառայողական օգտագործման համար • № 000153



Խ Մ Բ Ա Գ Բ Ա Կ Ա Ն
Կ Ո Լ Ե Գ Ի Ս

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

- Ծիրիխանյան Վ. Գ.
(նախագահ)
- Քոթանջյան Հ. Ս.
(գլխավոր խմբագիր)
- Աբրահամյան Մ. Ա.
- Ավետիսյան Մ. Վ.
- Գորդիենկո Ի. Վ.
- Խորիսորունի Վ. Վ.
- Հայրապետյան Վ. Ա.
- Հարոյան Հ. Վ.
- Հարությունյան Ա. Թ.
- Հարությունյան Գ. Բ.
- Հարությունյան Մ. Հ.
- Մարդանյան Ա. Գ.
- Մարտիրոսով Լ. Ա.
- Միրզոյան Ս. Վ.
- Ծահսովարյան Ս. Ն.
- Պետրոսյան Ա. Ա.
- Պետրոսյան Ա. Ս.
- Պետրոսյան Գ. Լ.
- Սարգսյան Ա. Գ.
- Սարգսյան Ա. Ե.
- Սարգսյան Մ. Ս.
- Տեր-Գրիգորյանց Ն. Գ.
- Տեր-Թադևոսով Ա. Ի.
- Օհանջանյան Մ. Մ.

Բ. Պ. Բալայան, Ռազմաքաղաքական իրադրու-
թյունը Անդրկովկասում XVIII դ. վերջում. Երևանի և
Ղարաբաղի ապստամբման գործույան նախագիծը . . . 3

ՌԱԶՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հ. Ս. Բոթանջյան, Սրբազան պատերազմի ազ-
գաքաղաքականությունը Աֆղանստանի օրինակով . . . 18

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԹՈՒԹՅՈՒՆ

Ռ. Ռ. Ղամբարյան, Կադրերի ընտրության և տե-
ղաբաշխման, պիևկորական կոլեկտիվների կազմա-
վորման հոգեբանական տեսանկյունները. 32

ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Վ. Ա. Հայրապետյան, Հրետանու մարտական կի-
րառությունը ՄՀԲ-ի (ՄՀԳ-ի) պաշտպանությունում
լեռնաանտառային տեղանքում 39

Բ. Բ. Մայիլյան, Ֆ. Ֆ. Բազրատյան, Մոտոհրա-
ձգային վաշտի հենակետի ճարտարագործական
սարքավորումը 49

ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱԿԱՀԵՏԱՆՈՒՋՈՒԹՅՈՒՆ

Մ. Ա. Բոչարյան, ՀՀ պինված ուժերի պինձա-
ռայողների պոնտության բարձրացման մասին 61

ՀՕՊ-Ի ԶՈՐՔԵՐՈՒՄ

Բ. Ռ. Տոնյանց, Ռադիոտեխնիկական գործերի
կազմակերպումը, մարտական հնարավորություն-
ները և կիրառման սկզբունքները 69

ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Վ. Խ. Բաղդասարյան, Հայերենի ռազմագիտա-
կան տերմինաբանության մշակման պրոբլեմները . . . 78

«ԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ» («Армянская армия»)
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
N 4, 1995

Издается 6 раз в год

Редакционная коллегия:

В. Г. Ширханян (председатель); *Г. С. Котанджян* (гл. редактор);
М. А. Абрамян; *М. В. Аветисян*; *В. А. Айрапетян*; *А. В. Ароян*; *А. Т. Арутюнян*;
Г. Б. Арутюнян; *М. А. Арутюнян*; *И. В. Гордиенко*; *А. Г. Мардарян*; *А. А. Мартиросов*;
С. В. Мирзоян; *М. М. Оганджанян*; *А. А. Петросян*; *А. С. Петросян*; *Г. А. Петросян*;
А. Г. Саркисян; *А. Е. Саркисян*; *М. С. Саркисян*; *Н. Г. Тер-Григорьянц*; *А. И. Тер-Татевогов*;
В. В. Хорхоруня; *С. Н. Шахсуварян*.

Научное консультирование и редактирование

генерал-майор *М. А. Абрамян*; подполковник, д. мед. н., профессор *Б. Н. Арутюнян*;
к. филос. н., доцент *В. Х. Багдасарян*; подполковник, д. ист. н., профессор *Б. П. Балаян*;
полковник, д. полит. наук, профессор *Г. С. Котанджян*;
генерал-майор *С. С. Мартиросян*; майор, к. филос. н. *М. Ш. Мусаелян*;
майор, д. тех. н. *А. Е. Саркисян*; генерал-лейтенант *Н. Г. Тер-Григорьянц*.

«ԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ»
MILITARY-SCIENTIFIC JOURNAL
OF THE MINISTRY OF DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA
N 4, 1995
Is published 6 times a year

Editorial board:

V. G. Shirkhanian (Chairman), *H. S. Kotanjian* (Editor-in-chief),
M. A. Abrahamian, *M. V. Avetisian*, *I. V. Gordienko*, *V. A. Hairapetian*, *H. V. Haroian*,
A. T. Haroutunian, *G. B. Haroutunian*, *M. H. Haroutunian*, *V. V. Khorkhoruny*, *A. G. Mardanian*,
L. A. Martirosov, *S. V. Mirzoian*, *M. M. Ohanianian*, *A. A. Petrosian*, *A. S. Petrosian*, *G. L. Petrosian*,
A. E. Sarkisian, *A. G. Sarkisian*, *M. S. Sarkisian*, *S. N. Shahsouvarian*, *N. G. Ter-Grigoriants*, *A. I. Ter-Tatevosov*.

Scientific Consultations and Editing:

M. A. Abrahamian, Major-General; *V. Kh. Baghdasarian*, Ph. D. (Philosophy), Ass.-Prof.;
B. P. Balayan, Lieutenant-Colonel, Dr. of History, Prof.;
B. N. Haroutunian, Lieutenant-Colonel, Dr. of Medicine, Prof.; *H. S. Kotanjian*, Colonel, Dr. of Polit. Sc., Prof.;
S. S. Martirosov, Major-General; *M. Sh. Mousacian*, Major, Ph. D. of Philosophy;
A. E. Sarkisian, Major, Dr. of Tech. Sc.; *N. G. Ter-Grigoriants*, Lieutenant-General.

ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ XVIII դ. ՎԵՐՋՈՒՄ. ԵՐԵՎԱՆԻ ԵՎ ՂԱՐԱԲԱՂԻ ԱԶԱՏԱԳՐԱՆ ԶՈՒԲՈՎՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

Բ. Պ. ԲԱԱՅԱՆ, փոխգնդապետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

XVIII դ. վերջում Անդրկովկասում գերիշխանություն հաստատելու համար պայքար էր ընթանում երկու իրար ուղղահայաց ուղղություններով. հյուսիսից հարավ՝ Ռուսաստանի և Պարսկաստանի, արևմուտքից արևելք՝ տարածաշրջանի ներսում՝ վրաց Հերակլ 2-րդ թագավորի և Ղարաբաղի խան Իբրահիմի մահմեդական դաշնադրության միջև:

Պարսկաստանի օրենսդրությամբ գահին հավակնել կարող էր միայն շիա մահմեդականը, որը հաղթանակ ստնած լինելը հպոր տերությունների դեմ պատերազմներում: Հնդկաստանին և Օսմանյան կայսրությանը հաղթած և գիլյուլների աֆղանական ցեղերին Պարսկաստանից դուրս քշած Նադիր շահից հետո գահի հավակնորդներին դժվար էր նոր հաջողություններ ակնկալել, քանի որ պետք կլինեք հաղթել կամ Ռուսաստանին, որը պատերազմում էր հունուն Անդրկովկասում իր գերիշխանության հաստատման, կամ Օսմանյան կայսրությանը, որը Պարսկաստանի դեմ պատերազմում էր փոփոխակի հաջողությամբ, մինչև որ այս երկու հարևան պետությունների միջև համաձայնություն կայացավ ապրիլայության ոլորտների բաժանման մասին: Դրանից հետո Ղազարների տոհմի ներկայացուցիչներն արդեն չէին կարող ակնկալել հեշտ հաղթանակ հպոր Ռուսաստանի նկատմամբ, ուստի և ստիպված էին խուսանավել իրենց արտաքին քաղաքականության մեջ:

Նախքան Պարսկաստանի շահ դառնալը գահի հավակնորդ Աղա-Մահմեդ խանին հարկ եղավ հաղթահարել բազմաթիվ արգելքներ: Պատրաստվելով դե-

պի Անդրկովկաս արշավանքին՝ նա փորձում էր օգտվել ռուս-թուրքական պատերազմի նախօրեին Վրաստանում Ռուսաստանի դիրքերի թուլացումից, քանի որ Հերակլ 2-րդը, պաշտանալով Վրաստանի տարածքը պատերազմի թատերաբեմի վերածվելուց, պայմանագիր կնքեց Ախալցխի փաշա Սուլեյմանի հետ: Փոխարենը Թուրքիան պահանջեց դուրս բերել Վրաստանից գնդապետ Բուռնաշևի երկու զուգարակները, որի հետևանքով ի դերևս էր ելնում 1783 թ. Գեորգիևսկի համաձայնագիրը:

Մյուս կողմից, Աղա-Մահմեդ խանը բանակցություններ էր վարում դարաբաղյան խան Իբրահիմի, Ղարաբաղի մեկիքների, ինչպես նաև վրաց թագավոր Հերակլ 2-րդի հետ:

Ղարաբաղի խան Իբրահիմին Աղա-Մահմեդ խանն առաջարկեց բանակցություններ վարելու համար Պարսկաստան ժամանել: Իբրահիմ խանը պատասխանեց, որ բանակցություններին իր փոխարեն ուղարկում է իր սպգական Աբու-Մամեդ բեկին: Պարսկաստանում վերջինիս սպանեցին, և Աղա-Մահմեդ խանը պահանջեց, որ ներկայանա խանըն ինքը, սակայն այդ պահանջը չկատարվեց:

Զգալով վերահաս վտանգը՝ Իբրահիմը որոշեց օգնություն խնդրել Ռուսաստանից, ուր ուղարկվեցին դիվանագետ Մամեդ Ղուլին և դարաբաղյան երկու մեկիքներ՝ Հովսեփը և Զուհուրը: Այս երկու հայերի ընդգրկումը պատվիրականության կազմում բայառորվում է այն բանով, որ Ղարաբաղի մեկիքները վաղեմի կապեր ունեին Ռուսաստանի հետ:

Բացի այդ, լինելով քրիստոնյա՝ նրանք կարող էին արժանանալ Ռուսաստանի բարյապակամ վերաբերմունքին:

Երկդիմի քաղաքականություն էր վարում և Ղարաբաղի խան Իբրահիմը:

ՀԽՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտի հրատարակած փաստաթղթերի ժողովածուում հրատարակվել է Բուռնաշևի՝ 1787 թ. փետրվարի 25-ի գաղտնի պեկուցագիրը Պ. Ս. Պոտոյովկինին: Գրանում մասնավորապես նշվում է, որ «Ռուսական զորքերի Ախալցխա մոտեցող ժամանակ ինքը հայտնաբերել է վկայի Իբրահիմ-Մոլլա խանի փախուստի ժամանակ մոռացված մի պարտակ՝ նամակի կամ Իբրահիմի նամակը՝ հասցեագրված Բարձր Դռանը և կնքված Իբրահիմի կնիքով»: Այս գրույթում ևս Ղարաբաղի խանն աղաչում էր Թուրքիայի սուլթանին «սղառուկ իրեն իսլամի թըշնամիներից կամ զլիսվայր կախել»¹:

Հերակը 2-րդին հղած նամակներում Աղա-Մահմեդ խանը ձգտում էր ապացուցելու, որ վրաց թագավորը մորթված է Ռուսաստանի հետ հարաբերությունների հարցում, և նրան խոստանում էր, անդրկովկասյան երեք խանություններից բացի, ևս երկու խանություններից հավաքվող հարկը, միաժամանակ առաջարկում էր նրան նորից ընդունել կախվածությունը Պարսկաստանից՝ ապառնալով հավատակ դնալու և պարսից զորքերը մոտեննել Վրաստանի սահմաններին:

Պատմաբան Բլիսի կարծիքով, Աղա-Մահմեդ խանի այս առաջարկներն ու սպառնալիքները լույս մարտավարական քայլեր էին, որոնց նպատակն էր ստիպել Հերակին հրաժարվելու Գեորգիևսկի համաձայնագրից և ճանաչելու Վրաստանի կախումը Պարսկաստանից²: Սակայն Հերակը 2-րդն սպասողական դիրք գրավեց՝ մինչև Ռուսաստանի հետ

բանակցություններում իրադրության պարզվելը, թեև շարունակեց հարկ գանձել Երևանի, Նախիջևանի և Գանձակի խանություններից, որոնց Աղա-Մահմեդ խանը խոստացել էր ավելացնել նաև Շիրվանը և Շեքին: Ի դեպ նշենք, որ այս խանությունների բնակչության մեծամասնությունը, ինչպես հայտնի է, հայեր էին:

Բաֆթին «Թամսայի մեկիրոյությունները» ուսումնասիրության մեջ նշում է, որ Աղա-Մահմեդ խանը Ղարաբաղի մելիքներին առաջարկեց կցնել դարարադյան խան Իբրահիմի դեմ և հաղթել նրան: «Բայց հայոց մելիքները ավելի բարձր համարեցին հավատարիմ մնալ ռուսներին, և Աղա-Մամադ-խանին բնդդիմադրելու համար միացան մինչև անգամ իրանց վաղեմի թշնամի Իբրահիմ խանի հետ, մտածելով, որ նրան հետո հեշտ կլինի ոչնչացնել, բայց եթե մի անգամ հալածակվեցան Աղա-Մամադ-խանին, այնուհետև հայրենիքը պարսից լրծից սպառելը անհնարին կլինի»³:

Բացառված չէ, որ Աղա-Մահմեդ խանը հետապնդելիս լինել նաև այլ նպատակներ: Օրինակ, մինչ Լևոնային Ղարաբաղում Աղա-Մահմեդ խանի հայտնարվելը Ղարաբաղի հայերը կարող էին պայքար սկսել ամբողջ մահմեդական դաշնադրության դեմ, իսկ դիմակայությունը հղի էր անկանխատեսելի հետևանքներով, քանի որ հակառակորդ կողմերը այդ պայքարի րնթացքում անխուսափելիորեն կակարացնեին միմյանց:

Այսպիսով՝ Ղարաբաղի հայերի վճիռը՝ հրաժարվել Իբրահիմ խանի դեմ պայքարից, այն կոնկրետ իրավիճակում լիովին հիմնավորված էր:

Դիվանագիտական այս նախապատմությունից հետո պարսկական զորքերը ներխուժեցին Անդրկովկաս:

1795 թ. վաղ գարնանը 50-հազարանոց պարսից բանակը կուտակվել էր Ղազվինի շրջանում: Այստեղից առաջին կորպուսը մեկնեց հարձակման համար

¹ «Армяно-русские отношения в XVIII веке, 1760–1800 гг.», сборник документов, т. II, рапорт С. Д. Бурнашева П. С. Потемкину, л. 234, Е., 1990, с. 352–353.

² П. С. Княпина, М. М. Блиев, В. В. Дегаев. Кавказ и Средняя Азия во внешней политике России, Москва, 1984, с. 78–92.

³ Բաֆթի Թամսայի մեկիրոյությունները (1600–1827). նյութիկ հայոց նոր պատմության համար, Երևանի ժողովածու, հ. 10, ն., 1959, էջ 266:

Երևանացիները՝ Արդարիլի շրջանում, որպեսզի Մուղանի դաշտով և Թալիշով մտնի Շիրվան, այնուհետև գրավի Բարվի խանությունը, Ղուբան և Գաղղստանը: Պարսկական երկրորդ կորպուսին հրամայված էր Նախիջևանի շրջանից շարժվել դեպի Երևանի բերդը և ճանապարհվելով դեպի հյուսիս, մտնել Վրաստան:

Երևան ուղևորվելիս պարսկական զորքերը կողոպտեցին Էջմիածնի վանքը և առևանգեցին 80 հազար ռուբլի և 8 ֆունտ ոսկի, սակայն Նախիջևանի շրջանում հայերի հետ բախումներում կրեցին մեծ կորուստներ⁴:

Բանակային երրորդ կորպուսը գործում էր Ղարաբաղի ուղղությամբ՝ խընդիր ունենալով վախճելու Շուշի բերդը և այնտեղ ստեղծելու ամրացված շրջան:

Շուշու պաշտպանությանը մասնակցում էին 15 հազար դարաբաղյի հայեր, 3 հազար վարձկան լեզգիներ՝ ուղարկված դարաբաղյան խան Իբրահիմի կնոջ կողմից, և արքայսպան Ալեքսանդրի վրաց ջոկատը, որն ուղարկվել էր Հերակը 2-րդի կողմից⁵:

Գիլակի, Խաչենի և Վարանդայի մելիքությունների հայ գյուղացիները և նրանց օգնության հասած ցեղերը («խլաթները») բաժանվեցին մանր ջոկատների: Անտառներում և ճանապարհներին նրանք անընդմեջ գրոհում էին թշնամու վրա, փախչելու նրա ուղտերն ու նժույգները և կողոպտում նրա քարավանները⁶:

1795 թ. սեպտեմբերի սկզբին, երբ Աղա-Մահմեդ խանի զորքերը ներխուժեցին Վրաստան, Հերակը 2-րդը թա-

վաղների դավաճանության հետևանքով հայտնվեց ծանր կայության մեջ: Օգնության եկած Իմերեթի Ստրանն թագավորի 3-հազարանոց ջոկատի հետ մեկտեղ Վրաստանը կարող էր դուրս բերել ոչ ավելի, քան 7 հազար աշխարհագորային՝ 35-հազարանոց պարսից բանակի դեմ:

Չնայած դրան, 1795 թ. սեպտեմբերի 10-ին վրացիներին և նրանց հույ գաշնակիցներին այնուամենայնիվ հաջողվեց հետ շարժել թշնամու առաջագահ ստորաբաժանումները:

Սեպտեմբերի 12-ին Թիֆլիսի հարավային դարպասների մոտ տեղի ունեցավ վճռական ճակատամարտը:

Պարսիկների կողմից նվաճված քաղաքը կողոպուտի ենթարկվեց, իսկ Հերակը 2-րդի պալատը ավերվեց: Ինչպես նշում է իրանցի պատմաբան Խ. Էշվին, «Թիֆլիսի համար մղված արյունահեղ մարտերում սպանվեցին հազարավոր վրաց ռազմիկներ: Իրանցի զինվորները ծանակում էին անպաշտպան կանանց և երեխաներին»⁸: Իսկ Ռ. Մեհդևին գրում է, որ «քրիստոնեական եկեղեցիները գետնին հավասարեցվեցին, քահանաները չարաչար խոշտանգվեցին, իսկ գերեզմարված կանայք և երեխաները թշվույցին Իրան՝ վաճառքի»⁹:

Թեհրանցի պրոֆեսոր Մ. Մահմուդի կարծիքով «Աղա-Մահմեդ խանը Վրաստանն ավերեց այն պատճառով, որ վերջինս ինքն իրեն կապել էր Ռուսաստանի հետ և համակրություն չուներ դեպի Իրանը, իսկ Հերակը դավաճանեց Իրանին»¹⁰: Մեհդևին գովերգում է պարսից շահերի կրոնական հանդուրժողականությունը, քանի որ նրանք հաշվի էին առնում վրացիների և հայերի քրիստոնե-

⁴ جمیل خوزاندلو تاریخ نظامی ایران

Տարիքի Գուպակուր, Իրանի ռազմական պատմություն, հ. 2, Թեհրան, 1315 թ. հ. (1936 թ.), էջ 68:

⁵ میرزا حسن مستغنی تاریخ روابط خارجی ایران

Արցաղ Ռեզա Մեհդևի, Իրանի արտաքին քաղաքականության պատմություն, Թեհրան, 1349 թ. հ. (1970 թ.), էջ 107:

⁶ Ахмед Бек Джаваншир. История Карабахского ханства (перевод с персидского), 1747–1805 гг., Баку, 1961, с. 75–76.

⁷ Мирза Джамал Джаваншир Карабаху. История Карабаха, Баку, 1959, с. 80.

⁸ خانک عشق سیاست نظامی روسیه در ایران

Իրանի Էշվի, Ռուսաստանի ռազմական քաղաքականությունն Իրանում (1790–1815), Թեհրան, 1353 թ. հ. (1974 թ.), էջ 38:

⁹ *Արցաղ Ռեզա Մեհդևի*, նշված աշխատ., էջ 108:

¹⁰ محمود محمود تاریخ روابط سیاسی ایران و انگلیس در قرن نوزدهم میلادی

Մ. Մահմուդ, XIX դ. իրանա-անգլիական հարաբերությունների պատմություն, հ. 1, Թեհրան, 1328 թ. հ. (1949 թ.), էջ 18:

յա լինելը, Վրաստանին ինքնուրույնություն տվեցին ներքին գործերում, իսկ վրաց թագավոր Հերակլ 2-րդին ոչ միայն սպատեցին Պարսկաստանին հարկ վճարելուց, այլև Երևանի և Գանձակի խանությունների կառավարիչներին պարտադրեցին նրան հարկ վճարել: Մեհդեվին համարում է նաև, որ դավաճանած դրածոյին պատժի ենթարկման վրա հիմնված կառավարման մեխանիզմը պարսից գերիշխանության կայունությունն ապահովեց Պարսկաստանի կողմից նվաճված տարածքներում¹¹: Այդ կապակցությամբ Մեհդեվին նշում է, որ ցարիզմը սքողում էր իր արտաքին քաղաքականության նվաճողական բընույթը և Անդրկովկասի ժողովուրդների սպատագրական ձգտումներն օգտագործում էր դեպի Սև և Կասպից ծովերի ավազանները իր պորթերի առաջխաղացման համար, ինչպես նաև սահմանագիծը ն Արաքսին հասցնելու նպատակով, և այդ նվաճողական պլանների իրականացման գործում Ռուսաստանն ավելի շատ հենվում էր Վրաստանի, քան Հայաստանի և Ադրբեջանի վրա, քանի որ XVIII դ. վերջում Վրաստանն Անդրկովկասի միակ պետությունն էր, որին պատկանում էր Ռազմավիրական ճանապարհը և որն ուներ նավահանգիստներ Սև ծովի եզերքում: Այս կապակցությամբ իրանցի պատմաբան Էշդին հիշեցնում է, որ օգնության վերաբերյալ Վրաստանի դիմումին ցարիզմը պատասխանեց 1801 թ. վրաց թագավորության վերացումով: Միևնույն ժամանակ նա համարում է, որ Վրաստանի ավերումը Աղա-Մահմեդ խանի պորթերի կողմից, իբր, լոկ համապատասխանեց ցարիզմի շահերին, քանի որ նպաստեց դեպի Ռուսաստան Վրաստանի կողմնորոշման ուժեղացմանը, և ցարիզմն օգտվեց դրանից¹²:

Ի տարբերություն իրանցի այլ պատմաբաններից, Ռ. Մեհդեվին Աղա-Մահմեդ խանի արտաքին քաղաքականությունը դիտում է եվրոպայում

հեղափոխական շարժման համատեքստում: Այս հեղինակը նշում է. «Աշխարհում հեղափոխական գաղափարների լայն տարածման սպեկտրությամբ ցարական Ռուսաստանի ողջ քաղաքական և դիվանագիտական գործունեությունը տոգորված էր երկյուղով վերահաս հեղափոխությունից: Այդ պատճառով Ռուսաստանը սակավ ուշադրություն էր դարձնում Մյոջին Արևելքի վրա, իսկ Աղա-Մահմեդ խանն օգտվեց այդ հանգամանքից. պորթ ժողովեց, ներխուժեց Անդրկովկաս և ցախցախեց Վրաստանը, մինչ ռուսական պորթերը վերջինիս օգնության կհասնեին»¹³:

Մ. Աֆշարը և իրանցի այլ պատմաբաններ հիշատակում են միայն Վրաստանում Աղա-Մահմեդ խանի ձեռնարկած վայրագությունների մասին¹⁴, մինչդեռ պարսկական պորթերը կողոպտեցին և ավերեցին ողջ Անդրկովկասը, այդ թվում նաև Հայաստանը:

Խ. Էշդին խստորովանում է, որ «XVIII դարի երկրորդ կեսից հայ հոգևորականները, կարվածատերերը և բուրժուաները կողմնակից էին Հայաստանի արագ մերձեցմանը Ռուսաստանի հետ, իսկ հայ հասարակական գործիչներ Հովսեփ Էմինը, Մովսես Բաղրամյանը, Շահամիր Շահամիրյանը մեծ ջանքեր գործադրեցին Ռուսաստանին Հայաստանի միացման ուղղությամբ»¹⁵: Գեռևս 1769 թ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, Ռուսաստանում գործում էր հայերի մի մեծ խումբ, որի անդամները ձգտում էին վերականգնելու հայկական պետականությունը Ռուսաստանի կողմնու ներքո¹⁶:

Հատկանշական է, որ 1795 թ. սեպտեմբերի 12-ին Թիֆլիսի հրդեհման մասին պեկուցագիրը Կովկասյան կորպուսի հրամանատար գեներալ Գուդովիչը Պետերբուրգ ուղարկեց միայն սեպ-

¹³ Արդայ Ռեզա Մեհդեվի, նշված աշխատ., էջ 107:

¹⁴ M. Afshar. La politique européenne en Perse Quelques pages de l'histoire diplomatique, Berlin, 1921, p. 32, 33.

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Խ. Էշդի, նշված աշխատ., էջ 24:

¹¹ Արդայ Ռեզա Մեհդեվի, նշված աշխատ., էջ 107-108:

¹² Խ. Էշդի, նշված աշխատ., էջ 207-208:

տեմբերի 28-ին՝ այդ բարբարոսական իրադարձությունից 16 օր անց, իսկ Եկատերինա 2-րդը միայն հոկտեմբերի 16-ին հրավիրեց խորհուրդ, որը որոշում կայացրեց «պարսիկներին դուրս բջել Անդրկովկասից և հետագա արշավանք ձեռնարկել»:

Պատասխան գործողությունները գեներալ Գուդովիչն սկսեց երկու ջուկատների կազմավորումով: Դրանցից մեկը՝ կազմված երկու գումարտակներից, գնդապետ Միրախնևի հրամանատարությամբ Ռազմավիրական ճանապարհով ուղարկվեց Վրաստան, իսկ մյուսը՝ բաղկացած երեք գումարտակներից, գեներալ Սավելևի գլխավորությամբ ուղևորվեց դեպի Դաղստան՝ Դերբենդը գրավելու և հետագայում դեպի հարավ արշավելու առաջադրանքով: Ինչպես երևում է, Գուդովիչը վճռել էր փոքր ուժերով լոկ վախկնցնել Աղա-Մահմեդ խանին՝ ապստամբով նրա պորքերը շրջապատել Վրաստանի և Կասպից ծովի կողմերից: Սակայն Դերբենդը գրավելու գեներալ Սավելևի բոլոր փորձերը ավարդյուն էին, իսկ գնդապետ Միրախնևի գումարտակները դանդաղորեն առաջ էին շարժվում Ռազմավիրական ճանապարհով և Մուխրան հասան 1795 թ. ուշ աշնանը, երբ պարսկական պորքերն արդեն հեռացել էին Անդրկովկասից: Սակայն առանց ռուսական պորքերի հետ որևէ բախման էլ Աղա-Մահմեդ խանը իրեն ներկայացնում էր որպես ռուսներին հաղթող: Դա վճռորոշ նշանակություն ունեցավ 1796 թ. տեղի ունեցած նրա թագադրման համար:

Բացառված չէ, որ Աղա-Մահմեդ խանը շիմանար ռուսական ջոկատների փոքրաթիվության մասին ու բնականաբար վախենար ծուղակն ընկնել կամ կարող էր ենթադրել, որ գեներալ Սավելևի ջոկատը մարտերով Մուղան կհասնի, կփակի ճանապարհները և կխոչընդոտի պարսկական պորքերի նահանջը: Սակայն Աղա-Մահմեդ խանն Անդրկովկասում անպատիժ ասպատակությունների ամիսների ընթացքում հավաքել էր, որ ռուսները նուրիպես պիռուշանում

էին մարտական բախումներից և գեներալ Գուդովիչի հետ ամեն բանի նայում էին «մատների արանքով»:

Մայիսի 2-ին Կասպիական կորպուսի պորամիավորումները մտանցան Դերբենդին և դիրքեր գրավեցին քաղաքի շուրջը վեր խոյացող բարձունքներին: Բերդի վրա առաջին գրոհը, որ տեղի ունեցավ լույս 3-ի գիշերը, հաջողություն չբերեց՝ հիմնականում գրոհասանդուղիների բացակայության պատճառով: Սակայն, երբ մայիսի 7-ի առավոտյան ժամանեց գեներալ Բուլգակովի բրիգադը, երկրորդ գրոհն ավարտվեց ռուսական պորքերի հաղթանակով:

Դերբենդը հանձնվեց 1796 թ. մայիսի 10-ին, բերդի պաշարման 5-րդ օրը:

18-ամյա շեյխ Ալիխան Դերբենդացին առաջինն ընդունեց ռուսական հպատակություն: Այնուհետև կրկում ավելյին մահմեդական բեկերը, ավագանին, ինչպես նաև հայ հոգևորականները: Շուտով Շեմախայի ճանապարհին փախուստի դիմեց շեյխ Ալիխանը: Դաշինք կնքելով Սուրխայ խան Ղազիկումիկացու հետ և «ջիհադի» (սրբական պատերազմի) կոչ անելով՝ նա շուրջ 10 հազար զինված լեռնայիների ժողովեց Ալփան գյուղի մոտ¹⁷: Շեյխ Ալիխանի դեմ ուղարկված գնդապետ Բակունինի գումարտակը և կապիտան Սեմյոնովի վաշտը Ալփանի կիրճի մոտակայքում ջախջախվեցին ասպատամբ լեռնայիների կողմից: Ռուսները մեծ կորուստներ ունեցան, իսկ Բակունինը և Սեմյոնովը ըսպանվեցին:

Դերբենդի բերդի պաշարման և գրոհման ժամանակ ռուսներին մեծ օգնություն ցույց տվեցին Դերբենդի և քաղաքի մտակալքում ու Մուշկուրի շրջանում գտնվող հայկական ինը գյուղերի հայերը, որոնց ասպատամբությունը կազմակերպել էր Զուբովի խորհրդատու Հովսեփ Արղությանցը:

Ռուսաստանի թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանցը հայ պատագրական շարժման եռանդուն

¹⁷ Бакиханов Аббас-Кули-Ага Кудси. Гюлистан-Ирам, Баку, 1926, с. 146.



ԻՇԵԱՆ ՀՈՎՍԵՓ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԴՈՒԹՅԱՆՑ
(1743–1801)

(Վերցված է Լեոյի «Հովսեփ կաթողիկոս Արղության» գրքից, Թիֆլիս, 1902 թ.)

գործիչներից էր, երկու՝ ռուս և հայ ազգերի միջև պայմանագրի հեղինակը: Նա ակտիվ մասնակցել է Ղրիմի և Մոլդավիայի հայերի Ռուսաստան տեղափոխմանը, մասնակցել է Նոր Նախիջևան և Գրիգորիոպոլիս հայկական քաղաքների հիմնադրմանը: Եղել է ռուս-թուրքական պատերազմի մասնակից, ակտիվ նամակագրական կապ է ունեցել Հնդկաստանի հայ հասարակական գործիչներ Հովսեփ Էմինի, Մովսես Բաղրամյանի, Շահամիր Շահամիրյանի, վրաց թագա-

վոր Հերակլ 2-րդի, Ռուսաստանի հայտնի պետական և հասարակական գործիչների, Ղարաբաղի մելիքների հետ: Նա ընտրվել է ամենայն հայոց կաթողիկոս, սակայն չի հասցրել օծվել՝ վախճանվելով Թիֆլիսում:

Դերբենդի բերդի գրավման կապակցությամբ Արղությանը ճառով դիմեց Դերբենդի հայությանը: «Վերջ եկավ անհավատների լծին, — հայտարարեց Արղությանը, — ցրվեց խավարը, հեռացան հարստահարիչները, և վերջացավ

* * *

նրանց բարբարոսական տիրապետությունը: Արդությանցը Դադասանի հայերին շնորհավորեց «առանց արյունահեղության և հաջ բնակչության կորսից կորուստների ձեռք բերված հաղթանակի առթիվ» և կոչ արեց «ապացուցելու հավատարմությունը Ձուբովին»¹⁸:

Հուլիսի 15-ին գեներալ Ռախմանովի ջոկատը ատաման Օսլովի կոպակյան գեղի հետ գրավեցին Բարու, իսկ գեներալ Բուրգակովի ջոկատը՝ Ղուբա քաղաքները: Հակառուսական ելույթների թափը կտրելու նպատակով Կասպիական կորպուսի հրամանատար Ձուբովն անջատեց Ղուբայի շրջանը Դերբենդից¹⁹, իսկ երբ հունիսի 19-ին ուղևորվեց դեպի Շեմախա, Շիրվանի կուսակալ շեյխ Ալիխանը թաքնվեց Հոյկ ավանում, որտեղից պուրայիներին դրդում էր դիմադրելու ռուսական զորքերին: Երբ նրան հայտնի դարձավ, որ ռուսական հրամանատարությունը միևնույն է իրեն, փախավ Դադասան՝ լեզգիների մոտ և սկզբնայ ադրանքով դավիկումիկյիներին և այլ լեռնականների դրդել հակառուսական ելույթներին²⁰:

Ռուսական զորքերի կողմից Շեմախան գրավվելուց հետո Վ. Ձուբովը թաքնվող Ալիխանի փոխարեն ժամանակավորապես նշանակեց Աղա-Մահմեդխանի կրտսեր եղբորը՝ Մորթեկա-Ղուլիխանին, որը գրանից հետո շատ ժամանակ չանցած մասնակցեց ռուս գեներալի դեմ ուղղված դավադրությանը:

Դերբենդի, Ղուբայի, Բաքվի, Շիրվանի և Շեքի գրավումից հետո Կասպիական կորպուսի շտաբը տեղափոխվեց Ձավադ կոչվող բնակայր (Արաքսի և Բուռի խառնատեղում):

¹⁸ Վալերիան Ձուբովը 24 տարեկան հասկում նշանակվեց Կասպիական կորպուսի հրամանատար: Մինչ այդ նա իր թաքտ թյամբ աչքի էր բերել Իզմայլի գրոնի ժամանակ, ռուս-թուրքական սրտերազմում մատուցած ծառայությունների համար նրան շնորհվել էր գեներալի կոչում:

¹⁹ *Дубовин И. Ф., История войны и владения русскими на Кавказе, т. III, СПб., 1886, с. 114.*

²⁰ *М. И. Шихевич. Покорение Кавказа. Персидские и Кавказские войны, «История русской армии и флота», с. 26-27.*

Երևանի բերդի ազատագրման նախագիծը մշակվել էր Կասպիական կորպուսի շտաբի մայոր Բագդանյան-Սեդերբովի կողմից՝ գեներալ Վ. Ձուբովի հանձնարարությամբ: 1796 թ. հոկտեմբերի 3-ին Ձավադում մայոր Բագդանյանը գեներալ Ձուբովին հանձնեց Երևանի բերդի ազատագրման մասին «Գրություն» նախագիծը²¹:

Այդ «Գրությունը» քննարկվեց և հավանության արժանացավ Կասպիական կորպուսի ռազմական խորհրդի կողմից, որից հետո Դեմերբուրգ ուղարկվեց հաստատման համար²²: «Գրությունը» բաղկացած էր 18 բաժիններից: «Գրության» մեջ Երևանի բերդի ազատագրումը դիտվում էր որպես ամբողջ Արևելյան Հայաստանի ազատագրում՝ ներառյալ Նախիջևանը, Արարատը, Շորապյալը, Լոռին, Փամբակը, Շամշաղինը, Արախսը, Ափանը, Ձանգեկուրը և Մաքիի շրջանը²³:

Գեներալ Ձուբովը Իբրահիմ խանին պրկեց Արարատի վրա ունեցած իշխանությունից, որին նա թոնատիրել էր Բերիմ-խան Ձենդի մահից հետո և հատկապես 1796 թ. Աղա-Մահմեդ խանի թագադրումից հետո, ընդ որում նոր շահը Իբրահիմ-Խալիլին չճանաչեց Արարատի խան: Կանխատեսելով այս սահմանը՝ Իբրահիմ-Խալիլը գլխավորեց Արևելյան Անդրկովկասի մահմեդական դաշնադրությունը՝ ռուսական զորքերի դեմ պայքարելու նպատակով: Սակայն գեներալ Ձուբովը մտադիր էր ձեռնամուխ լինել Արարատի հարյի լուծմանը ոչ թե ռուսական զորքերի գործողությունների սկզբից, այլ հիմնական գործողությունների ավարտից հետո, որոնց հետևանքով Իբրահիմ-Խալիլի դաշնադրությունը

²¹ ЦГВИА, ф. ВУА, л. 2801, л. 3 («Занеска» главнокомандующему Кавказским и Каспийским корпусами войск, находящимся в пределах Персии; Его сиятельству генералу Валериану Александровичу Дубову от майора Сереброва. Лагерь при реке Куре у Джавада. 3 октября 1796 г.»).

²² ЦГВИА, ф. ВУА, л. 2802, л. 1.

²³ ЦГВИА, ф. ВУА, л. 2801, л. 3.

գոյություն ունեւր միայն անվանապես: Այս պայմաններում Իբրահիմ-Պալի խաւը սկսեց նախապատրաստվել Չուբովի դեմ ուղղված դավադրությանը նրան սպանելու նպատակով: Չուբովի համար հեշտ էր կանխատեսել իրադրության նման փոփոխությունը և նախօրոք պատրաստվել դրան, մանավանդ որ Ղարաբաղի բռնատիրոջ վերացման հարցն արդեն վճռված էր: Իր՝ որպես հավաքուբովյան դավադրության կազմակերպիչ, մերկայումսից հետո Իբրահիմը փորձեց փախչել Գաղստան, սակայն Կորսակովի բրիգադը կտրեց նրա ճանապարհը:

Պատահական չէր, որ Ռ. Կորսակովի բրիգադն արշավանքի մեկնեց Ղարաբաղի խան Իբրահիմի կողմից դեկավարվող մահմեդական դաշնադրության դավադրության բացահայտման նախօրեին: Արշավանքում գեներալ Ռիմսկի-Կորսակովին ուղեկցում էր արքեպիսկոպոս Հովսեփ Արղուբյանցը: Բանն այն է, որ Գանձակը Հայաստանի պատմական տարածքի մի մասն էր և այնտեղ բնակվում էին հազարավոր տեղացի հայեր: Ընդ որում, գեներալ Կորսակովը ջանում էր խուսափել Գանձակի խան Ջավադի հետ բխումից, թեև Ջավադը համագործակցում էր Աղա-Մահմեդ խանի պորքերի հետ և մասնակցել էր նրա թիֆլիսյան արշավանքին: Ի դեպ, Ջավադ խանը մասնակցում էր նաև գեներալ Չուբովի դեմ Իբրահիմ-Պալի խանի կողմից նյութված դավադրությանը:

Ջավադ խանի հետ բանակցություններ վարում էր արքեպիսկոպոս Արղուբյանցը: Նա հայտնեց Ջավադ խանին, որ գեներալ Չուբովը ցանկանում է խուսափել առյուծահեղություններից և Գանձակ է ուղարկել գեներալ Ռիմսկի-Կորսակովին, որը քաղաքում ռուսական կաշափոր տեղաբաշխելուց հետո Ջավադին կտողնի Գանձակի խան՝ Ջավադի կողմից ռուսական հպատակության հետագա ընդունման պայմանով: Բանակցությունների արագ ավարտին նպաստեց նաև Ջավադի մասնակցությամբ հավաքուբովյան դավա-

դրության բացահայտման մասին լուրը:

Չուբովն իր նամակում «բարձր սրբազնություն տիր» Հ. Արղուբյանցին հայտնեց իր «անկեղծ շնորհակալությունը հանուն ընդհանուր շահի նրա ջանադիր ծառայության համար»²⁴:

Այն բանից հետո, երբ վախճանվեց Եկատերինա 2-րդը (1796 թ. նոյեմբերի 6) և Պավել 1-ինը Կասախական կորուստը հետ կանչեց Ռուսաստան, վրացական պորքերը արշավեցին Երևանի խանության վրա՝ ոչ միայն հարկ գանձելու նրպատակով. ըստ երևույթին, դա Հերակլը 2-րդի կողմից ձեռնարկված հանդուգըն փորձ էր՝ պահպանելու Երևանի խանությունից հարկ գանձելու իրավունքը: Համաձայն հայոց կաթողիկոս Սիմեոնի և վաղարշասպատցի քահանա Ոսկերչյանի հաղորդման, այն նույն ժամանակ, երբ վրաց 20-հազարանոց կորուստը պաշարում էր Երևանի բերդը, պարսպի ներսում սարդաբ Հուսեյն-Ալի խան Երևանցին խոչնդանում էր տեղացի հայերին, որոնք կասկածվում էին հավատակից վրացիների հետ կապեր ունենալու մեջ²⁵:

Թեև վրացական պորքերի այս արշավանքը ձախողվեց շնորհիվ արքայազն Ալեքսանդրի, որը դեմ էր իր հոր՝ Հերակլը 2-րդի, ռուսամետ կողմնորոշմանը և հակառուսական սպասամբության կոչ էր անում Քարթլի թավադներին, այնուամենայնիվ պարզ դարձավ, որ Հերակլը 2-րդն շտապում էր վերականգնել իր գերիշխանական քաղաքականությունը, քանի որ Կասախական կորստան Անդրկովկասից դուրս բերելու ուղղությամբ Պավել 1-ի ձեռնարկված քայլի հետևանքով այդ տարածաշրջանը մնաց առանց ռուսական պորքերի և առանց Ռուսաստանի աջակցության որևէ հույսի:

Ղարաբաղը և Գանձակը Ռուսաստանին միացնելու և Երևանի բերդը Պարսկաստանի տիրապետությունից ապատելու ուղղությամբ Կորսակովի բրի-

²⁴ АВПР, ф. СРА, оп. 100/3, 1764–1800 гг., л. 462, лл. 50-51.

²⁵ А. Р. Иоаннисян. Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Е., 1947, с. 112.

գաղի գործողությունները մնացին անավարտ՝ 1796 թ. դեկտեմբերի սկզբներին Պավել I-ինի կողմից Կասպիական կորպուսը Ռուսաստան հետ կանչվելու պատճառով: Այդ ժամանակ գեներալ Ռինսկի-Ստրասկովի բրիգադը, դեռևս գտնվելով Քանձակում, ռուսական զորքերի՝ Ռուսաստան հայրենադարձվելու մասին խնայով մեծ ուշադրանով և Վրաստան շարժվելը՝ Փարսյալի կիրճով Մոպոդկ համակու նպատակով²⁶:

Այս պայմաններում Աղա-Մահմեդ շահը հույս ուներ Ռուսաստանի դեմ պայքարում օգտվել անդրկովկասյան խանություններում իր մահմեդական կամակատարների աջակցությունից: Անդրրկովկասում Պարսկաստանի գերիշխանության վերականգնման համար: 1797 թ. գարնանը Աղա-Մահմեդը դարձյալ ներխուժեց Անդրկովկաս, սակայն այստեղ ռուսական զորքեր արդեն չկային:

Այսպիսով, գեներալ Չուբովի Կասպիական կորպուսի գործողությունները բաղկացած էին երկու փուլից: Առաջին փուլում՝ 1796 թ. գարնանից մինչ աշուն, դրանք ծավալվել էին Անդրկովկասի մերձկասպյան խանություններում և նպատակ ունեին վերացնելու Աղա-Մահմեդի Արևելյան Անդրկովկաս կատարած ներխուժման հետևանքները, ինչպես նաև ճնշելու դադեստանյան և թուրքակերտ կազմավորումների դիմադրությունը և վերացնելու հակառուսական դավադրությունը, որ կազմակերպել էր Իբրահիմ խանի կողմից գլխավորվող մահմեդական խանությունների դաշնադրությունը:

Գեներալ Չուբովի Կասպիական կորպուսի գործողությունների երկրորդ վերջնական փուլը սկսնավորված էր իրականացնել 1797 թ. գարնանը: Նախատեսվում էր այդ ժամանակ գեներալ Կորսակովի բրիգադի ուժերով ապատարել Լեռնային Ղարաբաղը՝ Ղարաբաղի հայերի կամավոր ջոկատների հետ Վրաստանի տարածքով Հայաստան արշավելու համար՝ հայերի և ռուսական ու լրացական զորքերի համատեղ ուժերով

Երևանի բերդը մահմեդական կազադրից մարքելու և հետագայում Արարսից հյուսիս ընկած հայկական հողերը ապատագրելու նպատակով:

Սակայն Պավել I-ինի գահ բարձրանալուց անմիջապես հետո Կասպիական կորպուսի զորքերը, ինչպես ասվեց, հետ կանչվեցին Ռուսաստան: Պավելի կողմից Սկառերինայի արտաքին քաղաքականության վերանայման հետ կառված այդ քայլի հետևանքով ձախողվեց Արևելեյան Հայաստանը Պարսկաստանի տիրապետությունից ապստաղրելու փորձերի ծրագիրը: Աղա-Մահմեդ շահը Անդրկովկասում Պարսկաստանի գերիշխանությունը վերականգնելու երկրորդ փորձի ժամանակ սպանվեց Շուշում:

Հետապոտոյների ուշադրությունից լրիվաբար է, որ գեներալ Չուբովը նախ ավարտին հասցրեց Կասպիական կորպուսի գործողությունները մերձկասպյան խանություններում, որպեսզի զրկի Իբրահիմ խանին մահմեդական դաշնագրության մեջ ընդգրկված խաների աջակցությունից:

Ամերիկյան ժամանակակից պատմաբան Մուրիել Էթկինի կարծիքով, «Պավել I-ինն իր առջև ուներ այն դժվարությունների նմուշը, որոնց Վալերիան Չուբովը հանդիպել էր Ղարաբաղում, Շիրվանում և Շեքիում, և չէր կարող իր վրա վերցնել պարտադրման մարտավարության հետ կապված ռիսկը»: Այս կապակցությամբ Մ. Էթկինը հիշատակում է Պավելի՝ Թիֆլիսում իր քաղաքական գործակալին գրած խոսքերը. «Մի չանաստանալ որևէ ձեռքբերում, բայց այն անձանցից, ովքեր կամովին կփնտրեն իմ պաշտպանությունը: Լավ է ունենալ դաշինքում շահագրգռված դաշնակիցներ, քան վստահության ոչ արժանի հպատակներ»²⁷:

Էթկինը Պավելին համարում է «Վալերի դեմը XVIII դ. վերջի—XIX դ. սկզբի ռուսաստանյան կառավարության բարձրաստիճան անձանց մեջ այն բանի համար, որ նա կարող էր հավանապ իրան-

²⁶ ЦГВИА, ф. ВУА, л. 2801, лл. 1–12 об.

²⁷ M. A. Atkin, *Russia and Iran 1780–1828*. The University of Texas, Minneapolis, 1980, p. 53.

ցիներին և կովկասցիներին այն առումով, որ նրանք ունեն տերությունների շահերից անվախ շահեր: Պավելի ձգտումը՝ Ռուսաստանը պահելու պատերազմներից հեռու, գահակալման սկզբում ստիպել նրան խուսափել Աղա-Մահմեդի վերաբերյալ Եկատերինա 2-րդի հրահանգների կատարումից²⁸: Պավելը «մաքաչափ անգամ չէր գիջի Կովկասում երկու կայսրությունների շահերի բախման հարցում, սակայն այս հակամարտությունը նա դիտում էր որպես ոչ մեծ թվով յուրահատուկ, ընդ որում՝ լուծելի վեճերի շարքում մի սահմանափակ երկվորյոթ: Ի դեպ այդ վեճերը նա դիտում էր ոչ որպես լուսավորյալ քաղաքակրթության և ասիական բարբարոս ուժերի միջև կիսնավոր բախում, ինչպես դա տնտես էր Եկատերինա 2-րդը»²⁹:

Մինչև իսկ ժամանակ Մ. Էթլինը գիտակցաբար շրջանցում է և ոչ մի խոսք չի ասում այն բանի մասին, որ Աղա-Մահմեդ խանը անպատիժ հրդեհեց Թիֆլիսը, կողոպտեց Էջմիածինը, պարանձերով կապել շուշեցիներին և մասնակց կատաղած ձիերի սմբակներին, որոնք տարրում էին կենդանի մարդկանց: Էթլինն Աղա-Մահմեդ խանին չի մեղադրում ստրկավաճառության շուկաներում վաճառված հազարավոր երկխաների և կանանց ճակատագրի համար, չի դատապարտում Պարսկաստանում մարդկային գանգերից կիսված բուրգերի շինության համար: Էթլինը չի նիշատակում և այն մասին, թե ինչպես վարվեց Աղա-Մահմեդ շահն այն բանից հետո, որ Պավել 1-ինը հետ կանչեց գեներալ Ջուրովի կորպուսը, թեև նրան հայտնի է, որ ի սբատասխան Պավել 1-ինի այդ խաղաղասիրական քայլի Աղա-Մահմեդը Պավելին մեղադրեց վախկոտության մեջ և գրեթե գեներալ Կորսակովի բրիգադի հետքերով կրկին ներխուժեց Անդրկովկաս: Մուրիել Էթլինը քաջահայտորեն սքողում է գեներալ Ջուրովի մարդասիրական քաղաքականությունը, որի շնորհիվ հակապուրոլյան դավադրու-

թյան մասնակիցները ոչ միայն չեն թարկվել, այլև մահապատժի, այլև նույնիսկ չձերբակալվել են ռուսական հրամանատարության կողմից:

Ըստ Մ. Էթլինի, «Պավելը երբեք չի կամավածել, որ Ռուսաստանը պետք է սկսի գեր խաղա Եկատերում: Իր մարմնան, նա իրանցան արշավանքները գնահատում էր դրանց օպերատիվական օգտավետության համար և հավիած էր թուրքերին հեռու պահելու այդ տարածաշրջանից»³⁰:

Հայ ժողովրդի համար Երևանի, Կարաբաղի և Գանձակի ազատագրման նախօրեին գեներալ Ջուրովի Կասպիական կորպուսի հայրենադարձվելը Ռուսաստանի հակազակյան ոտերեցություն էր: Բանի որ տատան Օդյով-Գենիսովի կողմից վորքերը Հնդկաստանի արշավային Օրենբուրգով, այլ ոչ թե Պարսկաստանի մերձկասպյան մարզերով, Կասպիական կորպուսը չէր խանգարում այդ վորքերի արշավանքին: Ընդ որում, այն բանից հետո, որ Արուսիի մոտակայքում ծովակալ Եկատերի անգլիական նավատորմը ջախջախեց ֆրանսիացիների ծովային դեամուսը, իսկ Հնդկաստանում անձնատուր Երան ֆրանսիացիների դաշնակիցները Մալտոս իշխանությանից, ֆրանսուսական արշավանքը դեպի Հնդկաստան կորցրեց իր իմաստը, հատկապես, որ 1801 թ. անգլո-պարսկական պայմանագրով փոխվեցին Պարսկաստանով և Աֆղանստանով դեպի Հնդկաստան տանող զամարային ուղիները, Աբախանով, Կասպիական կորպուսի Անդրկովկասում գանգեր չէր կարող վնասել ֆրանսուսական հաղթանակների, և ոչ մի անհրաժեշտություն չկար այդ կորպուսը հետ կանչելու Ռուսաստան: Մուստի Պավելի այդ քայլը բոլոր ասումներով ներկայանում է որպես նրա կողմից թույլ ստիպած կողմն ախայ, որը հանգեցրեց տարածաշրջանում պատերազմների և հակամարտությունների՝ բազմաթիվ նոր տառապանքներ բերելով հայ ժողովրդին:

Լեռնային Կարաբաղի անվտան-

²⁸ Մ. Էթլին, նշված աշխատ., էջ 53:

²⁹ Նույն տեղում:

³⁰ Նույն տեղում, էջ 50:

գոյության և անկախության հիմնաստոր-
քերը, ինչպես և անկյարուս, շարունակում
են մնալ սկրտորեն կապված Ռուսաստա-
նի, Իրանի, Թուրքիայի և մյուս սահմա-

նակից երկրների շահերի հետ: Գարաբա-
ղի անվտանգությունն այսօր էլ հանդես
է գալիս որպես ուժերի տարածաշրջա-
նային հավասարակշռության գործոն:

ВОЕННАЯ ИСТОРИЯ

ВОЕННО-ПОЛИТИЧЕСКАЯ ОБСТАНОВКА В ЗАКАВКАЗЬЕ В КОНЦЕ XVIII ВЕКА. ЗУБОВСКИЙ ПРОЕКТ ОСВОБОЖДЕНИЯ ЕРЕВАНА И КАРБАХА

Б. П. БАЛАШИН, подполковник, доктор исторических наук, профессор

РЕЗЮМЕ

В конце XVIII века борьба за господство в Закавказье велась по двум основным перпендикулярным направлениям: с севера на юг — между Российской империей и Персией, а с востока на запад — внутри региона — между грузинским царем Ираклием II и мусульманской коалицией, возглавляемой карабахским ханом Ибрагимом.

Накануне вторжения персидских войск в Закавказье основной претендент на персидский престол Ага-Мохаммед-хан пытался воспользоваться ослаблением позиций России в Грузии в преддверии русско-турецкой войны, так как Ираклий II, опасаясь превращения территории своей страны в арену этой войны, заключил с ахалцихским пашой Сулейманом договор о ненападении, а Турция взамен потребовала вывода из Грузии русских батальонов полковника Бурнашева, что неизбежно приводило к прекращению действия Георгиевского трактата 1783 г. Персия добивалась того же, но для того, чтобы восстановить в Грузии свое господство. С этой целью Ага-Мохаммед-хан с одной стороны обещал Ираклию II увеличить льготы по сбору гани на армянских территориях, а с другой — для оказания давления на грузинского царя сжег Тифлис осенью 1795 г.

Одновременно Ага-Мохаммед-хан добивался ослабления протурецки настроенной мусульманской коалиции Ибрагим-хана в Восточном Закавказье. С этой целью еще до вступления персидских войск в Закавказье он пытался заманить в Персию карабахского хана и убить его. А когда это не удалось, Ага-Мохаммед-хан стал провоцировать карабахских армян на борьбу с Ибрагим-ханом. Однако, как сообщает Раффи, карабахские армяне ориентировались на Россию и не поддались на эту провокацию. К тому же в этом случае не исключалась возможность столкновения карабахских армян со всей мусульманской коалицией, что могло привести к взаимному истреблению противоборствующих сторон.

Ранеей весной 1795 г. 50-тысячная персидская армия вторглась в Закавказье. Третий корпус действовал на Карабахском направлении с задачей овладеть крепостью Шуша и построить там укрепленный район.

В обороне Шуши участвовали 15 тысяч карабахских армян и отряд грузинского царевича Александра. Крестьяне Дизакского, Хаченского, Варандийского и других меликств в лесах и на дорогах непрерывно нападали на

противника, угоняли лошадей и верблюдов, захватывали его караваны.

Между тем связи Ираклия II с Турцией негативно отразились на русско-грузинских отношениях. Когда в начале сентября 1795 г. персидские войска вторглись в Грузию, там уже не было русских войск.

12 сентября у южных ворот Тифлиса произошло решающее сражение. Захваченная столица Грузии была разграблена и сожжена, а тысячи грузин и армян, защищавших город, были взяты в плен. Женщины и дети продавались в рабство на чужеземных рынках.

Командующий Кавказским корпусом российских войск генерал Гудович начал ответную операцию с большим опозданием. Выделенные им два отряда были направлены в обход войск Ага-Мохаммед-хана. Однако один из них достиг Тифлиса, когда там уже не было персидских войск, а другой задержался в районе Дербента. Как видно, генерал Гудович решил напугать Ага-Мохаммед-хана возможностью окружения его войск со стороны Грузии и Каспийского моря, тогда как Ага-Мохаммед-хан, вернувшись в Персию, объявил там о своей победе над русскими войсками, с которыми не вступал в соприкосновение, и благодаря этому стал шахом Ирана.

Борьба за господство в Закавказье продолжалась. Генерала Гудовича заменил 24-летний командующий Каспийским корпусом генерал Валерий Зубов. Столь раннему возвышению по службе он был обязан своей храбрости при штурме Измаила, а за заслуги в русско-турецкой войне он был произведен в генералы.

10 мая 1796 г. войска Каспийского корпуса овладели Дербентом. Во время осады и штурма этой крепости большую помощь русским войскам оказывали армяне Дербента и окрестных деревень. Глава армянской епархии России архиепископ Иосиф Аргутинский (князь Овсен Аргутянц), будучи советником генерала Зубова, обратился к дербентским армянам с речью, в которой отмечал: «Пришел конец гнету неверных, рассеялась тьма, удалились притеснители и закончилась их варварская власть».

Иосиф Аргутинский был энергичным представителем армянского духовенства и национально-освободительного движения армян, автором проекта Договора между двумя нациями — армянской и русской, принимал активное участие в переселении в Россию крымских и бессарабских армян, был участником русско-турецкой войны 1787 — 1792 гг., участвовал в основании армянских городов Новой Нахичевани и Григориополя, поднимал восстание дербентских армян для их присоединения к России, вел активную переписку с армянскими общественными деятелями в Индии Иосифом Эмином, Шагамиром Шагамиряном, Мовсесом Баграмяном, с грузинским царем Ираклием II, видными общественными и государственными деятелями России, с карабахскими меликами.

В непрерывных боях русские войска заняли Баку, Кубу, Ширван и Шеки.

30 октября 1796 г. майор штаба Каспийского корпуса Богданян представил генералу Зубову составленную им по приказу командующего корпусом «Записку» об освобождении Ереванской крепости. Эта «Записка» была рассмотрена и одобрена Военным советом Каспийского корпуса и для утверждения отправлена в Петербург. Освобождение Ереванского ханства при участии карабахских армян связывалось в «Записке» с освобождением большей части Восточной Армении.

Операции Каспийского корпуса генерала В. Зубова планировались в два

этапа. На первом этапе, с весны до осени 1796 г., бои велись в прикаспийских ханствах Закавказья для преодоления последствий нашествия Ага-Мохаммед-хана и для ослабления мусульманской коалиции Ибрагим-хана (путем разоблачения его антизубовского заговора).

На втором этапе бригада генерала Римского-Корсакова, благодаря дипломатическому искусству архиепископа Иосифа Аргутинского, без единого выстрела овладела Гандзаком, чтобы весной 1797 г. освободить Нагорный Карабах и вместе с карабахскими армянами освободить от господства Персии Ереванскую крепость и армянские земли севернее Аракса. Однако с приходом к власти Павла I зубовский план освобождения Еревана и Карабаха не был осуществлен из-за отзыва Каспийского корпуса в Россию, что было просчетом, допущенным Павлом I, и обернулось трагедией для армянского народа. Последствиями этой акции были новые конфликты и войны, причинившие армянскому народу неисчислимые страдания.

Проблемы безопасности и независимости Нагорного Карабаха, как и в прошлом, продолжают находиться в тесной взаимосвязи с интересами России, Ирана, Турции и других сопредельных стран, а безопасность Карабаха и ныне является фактором регионального равновесия сил.

В статье критически использованы труды армянских, русских, иранских и американских историков.

MILITARY HISTORY

THE MILITARY AND POLITICAL SITUATION OF THE TRANSCAUCASUS AT THE END OF THE 18th CENTURY: ZUBOV'S PROJECT

B. P. BALAIAN, Lieutenant-Colonel, Doctor of History, Professor

SUMMARY

At the end of the 18th century, the struggle for domination in Transcaucasia was, on the one hand (and most importantly), between the Russian Empire and Persia. On the other hand, within Transcaucasia, there was a fight between the Georgian King Irakley the Second and the Muslim coalition led by Khan Ibrahim of Karabagh.

On the eve of the invasion of Persian troops into Transcaucasia, Agha Mohammed-Khan attempted to take advantage of the weakened position of Russia in Georgia just before the Russian-Turkish war. Fearing that the territory of Georgia might become a war zone, King Irakley the Second concluded a non-aggression pact with Khan Suleiman of Akhaltsikh. Turkey demanded that colonel Bournashov's Russian battalions be withdrawn from Georgia while aiming to denounce the Treaties of Georgievsk (1783).

Persia, in turn, also sought the liquidation of this Treaty with the aim of restoring Persia's domination over Georgia. Having this in mind, Agha Mohammed-Khan, on the one hand, promised King Irakley the Second to extend tax privileges on Armenian territories, while on the other hand, he set Tiflis on fire in the Autumn of 1795.

Concurrently, Agha Mohammed-Khan sought the weakening of Ibrahim Khan's Muslim coalition in Eastern Transcaucasia.

He tried to trap Ibrahim Khan in Persia in order to kill him before the invasion of Transcaucasia by Persian troops. When his attempt failed, he provoked Karabagh Armenians to rebel against Ibrahim Khan. However, according to Raffi, Karabagh Armenians, having a Russian orientation, did not succumb to the provocation. Besides, as things stood, there was a looming danger of ethnic clashes between Karabagh Armenians and the whole Muslim coalition which might have ended in the mutual extermination of the confronting parties.

In the early Spring of 1795, a fifty thousand-strong Persian army invaded Transcaucasia. The task of the third corps moving in Karabagh's direction was to capture Shusha and turn it into a stronghold. Fifteen thousand Karabagh Armenians and the Georgian Prince Alexander with his detachment defended Shusha. Karabagh peasants of Dizak, Khachen, Varanda and other Principalities waged a guerilla war in the forests and mountains: attacking the enemy, stealing horses and camels, and seizing caravans.

Meanwhile, the friendly relations between King Irakley the Second and Turkey had a negative impact on Russo-Georgian relations. Thus, when Persian troops invaded Georgia at the beginning of September 1795, the Russian army was not there.

On September 12, at the southern gates of Tiflis, a decisive battle took place. The city was occupied by Persian troops and was plundered and burnt.

Thousands of Georgians and Armenians who participated in the battles were taken prisoner. Women and children were sold into slavery in foreign markets.

The Commander of the Caucasian corps, General Goudovich, began retaliatory operation with great delays. The allotted two detachments were sent on an encircling manoeuvre around the Persian troops. However, one of them reached Tiflis when Persian troops had already withdrawn. The other detachment was detained in the Derbent region.

Probably, General Goudovich decided to frighten Agha Mohammed-Khan by encircling Persian troops from the territory of Georgia and the Caspian Sea. Meanwhile, in Persia, Agha Mohammed-Khan declared his victory over Russian troops, when, in fact, he had never fought them. He proclaimed himself Shah of Persia.

The fight to dominate Transcaucasia went on. General Goudovich was replaced by the 24-year old Commander of the Caspian corps, general Valerian Zubov. His rapid promotion in service was due to his bravery during the attack of Ismail. For his outstanding services in the Russo-Turkish war, he was promoted to the rank of general. On May 10, 1796, the Caspian corps of general V. Zoubov captured Derbent. During the siege and assault of this fortress, Armenians living in Derbent and the neighbouring villages greatly helped the Russians. The head of the Armenian Church in Russia, Archbishop Iosif Argoutinsky (Prince Hovsep Argoutiants), was general Zubov's advisor.

He addressed the Armenians of Derbent with the following words: «An end has come to the yoke of infidels, the darkness spread by the oppressors has left and their barbaric power has come to an end». Later, when the brigade of general R. Korsakov laid siege to Gandzak, Archbishop Iosif Argoutinsky managed to effect the capitulation of this city (without firing a single shot) through negotiations with Javad Khan.

Iosif Argoutinsky was an energetic representative of the Armenian clergy and

the national liberation movement, and the author of the project of the Treaty between the two peoples — Armenian and Russian. He took an active part in organizing the migration of Armenians living in the Crimea and Bessarabia and the foundation of the Armenian cities of New Nakhichevan and Grigoriopol.

He also participated in the Russo-Turkish war of 1787—1792. He convinced the Armenians of Derbent to rebel for union with Russia. Throughout his life, he carried on a lively correspondence with Armenian public figures in India such as: Iosif Emin, Shahamir Shahamirian, Movses Bagramian, Georgian King Irakley the Second, prominent public and state figures of Russia, and with Karabagh meliks.

After many battles, Russian troops occupied Baku, Kuba, Shirvan and Sheki.

On October 30, 1796, Bogdanian, a major at the headquarters of the Caspian corps, wrote a memorandum-proposal, on the orders of general Zubouy, on how to liberate the fortress of Yerevan. This «memorandum» was considered and approved by the Military Council of the Caspian corps and was sent to St. Petersburg for further confirmation. According to this «memorandum», the liberation of the Yerevan Khanate meant the liberation of the major part of Eastern Armenia: including Nakhichevan, Karabagh, Shouragel, Lori, Pambak, Shamshadin, Kazakh, Kapan and Zangezour. The operations of general Zubouy's Caspian corps were carried out in two stages. The first stage lasted from the Spring to the Autumn of 1796. Battles were waged in the out-lying Caspian Khanates of Transcaucasia in order to overcome the consequences of Agha Mohammed-Khan's invasion and to weaken the Muslim coalition of Ibrahim Khan (after the exposure of his anti-Zubouy plot).

In the second stage, general R. Korsakov's brigade (with the participation of Archbishop Iosif Argoutinsky) captured Gandzak with the aim of liberating Mountainous Karabagh in the Spring of 1797. Together with Karabagh Armenians, he was to free the Yerevan fortress and Armenian territories to the North of the Arax river from Persian domination. But with the accession to power of Pavel the First, the Zubouy's project for the liberation of Yerevan and Karabagh was terminated. The Caspian corps was recalled to Russia. In all respects, this was a blunder of Pavel the First and a tragedy for Armenians.

The problem of the security and independence of Mountainous Karabagh, as in the past, has always been closely related to neighbouring countries. The present security of Karabagh is a factor in the correction of the equilibrium of the region.

In his research, the author has used the works of Armenian, Russian, Persian and American historians.

ՌԱԶՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԶԳԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՖՂԱՆՍԱՆԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Հ. Ա. ԲՈԹԱՆԶՅԱՆ, գեղապետ, քաղաքագիտության պոստդոկ, պրոֆեսոր

Ներկայացվող հոդվածում հեղինակը ընթերցողին հաղորդակից է դարձնում Աֆղանստանում ժամանակին գործած վերլուծաբանների և բանակցողների խմբերից մեկի աշխատանքային փորձին, որը վերաբերում է ջիհադի ձևով մղվող պատերազմի ընթացքի կառավարման և տեղաշին ցինված բախումների ստեղծման՝ սոփիստիկացված ռազմական քաղաքականության համար նոր աղբյուրների որոնմանը:

Աֆղանստանում ցինված բախման օրինակով ուրվագծվում են ջիհադի՝ սրբազան պատերազմի, ներքին բազմազանության վերլուծության հիմնական չափումները: Բնվում են ինչպես այդ պատերազմի կառուցվածքի բազմաակարգակալությունը (ջիհադ, ջանգ, արյան վրեժ), այնպես էլ ստեղծագործչին և միջոցառչին միությունների (քաղմերի) սահմաններում նրա ազգատարածքային հատվածավորման դինամիկան:

Տվյալ հիմնախնդիրները բնվում են ջիհադի՝ Աֆղանստանում կատարված ռազմաքաղաքական արդիականացման համատեքստում: Հեղինակը ցինված հակամարտությունների կարգավորման մեջ ներգրավված գործընկերների ուշադրություն է հրավիրում այն բանի վրա, որ խաղաղարար բանակցությունների նրբերանգված մշակման և ցինվեդազարի տեղաշին գոտիների հաստատման ու ընդարձակման միջոցառումների իրականացման գործընթացում մեծ կարևորություն ունի տարածաշրջանային պատերազմների կոնկրետ մասնակիցների ազգաքաղաքական յուրահատկության հաշվառումը¹:

¹ Ինչպես Աֆղանստանում քաղաքական վեր-

* * *

Ջիհադի մեկնարկության պատմական հիմքը խլամի սրբազան հավատի գոյության և դրսևորման դեմ ուղղված սպառնալիքին դիմադրավոր սկզբունքն է, որը ձևավորվել է իրենց գոյապահպանման և հաստատման համար առաջին մահուղղված համալսրների (ուսմանների) մղած պայքարի առաջակական ժամանակներում:

Ջիհադի արմատյան մեկնակերպը, որն ընդունված է որպես դասական սահմանում, Ռ. Փետերսը ձևակերպում է որպես «առավելագույն ջանքերի գործադրում... «անհավատների» դեմ պատերազմ մղելիս՝ նրանց ռազմական հարվածներ հասցնելու, նրանց ունեցվածքն ազգրավելու, նրանց սրբավայրերն ավերելու, նրանց իլեգալները պսակագեղծելու միջոցով»²:

Ուսմանյի առավելագույն մորիցիլիզացման կոչի ռազմաքաղաքական բացատրության էությունն այն է, որ անհրաժեշտ է գրավել «պատերազմի տունը»³, որից ծագում է ալլահի թշնամիների կողմից սպառնալիքը, այդ սպառնալիքն արմատախիղ անելու և «պատերազմի տունը» «խլամի տան» կազմի մեջ լուծության հարցերով մշտապես գործող խորհրդակցության կոորդինատորը՝ հեղինակը օգտվել է թարգմանիչների մի մասնադասարան խմբի, ինչպես և գիտական խորհրդատուների մասնաբաժնի անդամ և իր կախարհագիտությունն է, հայտնում թարգմանիչներ Միսթիմին, Փոլաթին, Սայթո թիմին և Հայթին, ինչպես նաև Աֆղանստանում ցեղերի և ազգությունների նախաքաղաքական խորհրդակցության պրոֆեսոր Մ. Ֆ. Սիմսին:

² R. Peters. Islam and Colonialism. The Doctrine of Jihad in Modern History. - N. Y., 1979, p. 10.

³ «Տունը»-ը այստեղ կրկին, տեղի այսպիսիական անվանումն է:

մտցնելու նպատակով: Այսպիսով, մահ-
մեղական պետությունները սրբապան
պատերազմի պատճառակալն պայմանա-
վորվածության ակունքներում դնում են
իսկամի՝ որպես աստվածատուր գաղա-
փարախոսության, և ումմայի՝ որպես
այն կրողի ու պաշտարանողի դեմ ագրե-
սիային հակազդելու «հարկադրական
անհրաժեշտությունը»: Ջիհադի պատ-
մաքաղաքագիտական հիմնավորման
տվյալ հարմարամշակումը՝ որպես «ում-
մայի անհրաժեշտ ինքնապաշտպանու-
թյան», ժամանակակից մահմեդական
քաղաքաբեկոններին հնարավորություն է
տալիս ջիհադը դիտելու ագրեսիայի
բնորոշման միջազգային-իրավական չա-
փանիշներին, համապատասխան քաղա-
քական և ռազմական դոկտրինաների,
ինչպես նաև ագրեսիայի հետմղման
կազմակերպման գործնական մեխա-
նիզմների մշակման համակարգում⁴:

Միջազգային հարաբերությունների
վերաբերյալ ժամանակակից մահմեդա-
կան հայնցակարգը ջիհադի նախապա-
դրումը հիմնում է իսլամական համայն-
քի դեմ ագրեսիային դիմագրավելու
վրա՝ անհրաժեշտ համարելով վերա-
կանգնել արդարությունը, որի խախ-
տումը վնաս է հասցրել մահմեդական-
ներին, ալլահովել մահմեդական պաշ-
տամունքի ալլատ դրսևորումը, հաստա-
տել խաղաղություն և անվտանգություն:

Ժամանակակից ջիհադի բովանդա-
կության և ձևերի հետապոտողներ Ն.
ժդանովը և Ա. Իզնաստենկոն տարբերա-
կում են ջիհադի մի քանի տեսակ՝ ջիհադ
ալլահի թշնամիների դեմ, իսլամական
պետության սահմանների անձևումսե-
լիության նկատմամբ ոտնձգություն
կատարողների դեմ, հավատորուսյների,
ճնշողների և բռնակալների դեմ, «մարկ
վճարելուց հրաժարվող ավազակների
դեմ»⁵: Այստեղից բխում է, որ ջիհադ կա-
րող է հայտարարվել ոչ միայն մահմեդա-
կան պետությունից դուրս, այլև նրա

ներսում: Ջիհադի օբյեկտ կարող են
լինել պետություններ, հանրություններ
և խմբավորումներ, կազմակերպու-
թյուններ և առանձին ֆիզիկական ան-
ձինք: Բերված դասակարգումից կարելի
է երրակայնել, որ բացառված չէ ջիհադ
մղելը ոչ միայն ոչ մահմեդական, այլև
մահմեդական պետության դեմ, եթե
նրա դիրքորոշումը բնորոշվում է որպես
«ոչ աստվածահաճո» (օրինակ՝ Իրաքի
դեմ Իրանի վերջին պատերազմը): Չի
բացառվում նաև ջիհադի մեթոդներով
պայքարն առանձին իշխող կամ ոչ
կառավարական կազմակերպու-
թյունների և անձանց դեմ ինչպես միևնույն
մահմեդական պետության մեջ (օրինակ՝
«Հեյբոլլահ» — «Ամար» Լիբանանում, Աֆ-
ղանստանի ժողովրդադեմոկրատական
կուսակցություն — Աֆղանստանի իսլա-
մական կուսակցություն, Աֆղանստանի
իսլամական ընկերություն Աֆղանստա-
նում և այլն), այնպես էլ այլ երկրների
տարածքում, որոնք պատերազմի մեջ
չեն այն մահմեդական երկրի հետ, որ-
տեղ գտնվում է ջիհադի սուբյեկտը (սլա-
դեստիչյան կազմակերպությունների ա-
հաբեկչությունը խաղաղության գործիչե-
րի դեմ աշխարհի տարրեր երկրների
տարածքում):

Ջիհադի սուբյեկտ կարող են լինել
առանձին մահմեդական պետու-
թյուններ, առանձին կառավարական և ոչ
կառավարական կազմակերպու-
թյուններ, ինչպես և խմբավորումներ:

Ջիհադը կարող է հայտարարվել
միայն հեղինակավոր մահմեդական գոր-
ծիչի կողմից՝ ումմայի առջ իսլամա-
տասխան փաստարկված հիմնավորու-
մով (Ղուրանի հիման վրա):

Աֆղանստանում պատերազմի յու-
րահատկությունը, իհարկե, շատ ավելի
«հին արմատներ» ունի, քան ԱժԳԿ-ի
վարչակազմի դեմ ընդդիմության ներ-
քին քաղաքացիական պիսված հակա-
մարտությունը, որը միջազգայնացվեց
ԱԳՀ-ի տարածքը խորհրդային զորքեր
մտցվելու հետևանքով:

1979 թ. խորհրդային զորքերի քա-
նակակազմը Աֆղանստան մտցվելուց

⁴ Տե՛ս Շ. Ի. Скакунов. Самооборона в меж-
дународном праве. — М., 1973, с. 176.

⁵ Տե՛ս Ի. В. Жданов, А. А. Игнатенко. Ис-
лам на пороге XXI века. — М., 1989, с. 214—237.

հետո սկսեցին գործել միջինարևելյան տարածաշրջանում խախտված ռազմական և քաղաքական իրավիճակի հավասարակշռման մեխանիզմները: ԱՄՆ-ը և նրան բարեկամ պետությունները, ինչպես և մի շարք մահմեդական պետություններ սկսեցին աֆղանական ընդդիմությանն օգնել իրականացված ագրեսիայի դեմ նրա ռազմական և ռազմաքաղաքական դիմադրման գործում: Գրա հետ մեկտեղ գերատերությունների կողմից գլխավորվող բյուրոների՝ որպես ուժի կենտրոնների, երկրներ համակարգի առանձնահատկությունները, տարածաշրջանային բախման բնդհանրականացման և միջուկային պատերազմի սանձադրմանն սպառնալիքի կազմակերպումը, բացառեցին բախման մեջ ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների ուղղակի ներգրավումը աֆղանական վիճված ընդդիմության կողմում:

Մահմեդական աշխարհի այլ երկրների և կազմակերպությունների, ինչպես նաև Արևմուտքի երկրների ոչ կառավարական կազմակերպությունների միջոցով ԱՄՆ-ի միջնորդավորված մասնակցությունը խորհրդային կողմը բնորոշեց որպես «շփոթարարված պատերազմ Աֆղանստանի շուրջ»: Ապախտով, և՛ ԱՄՆ-ում, և՛ ԽՍՀՄ-ում բարոյչական կամքանիշներն ուղղված էին իրադարձությունների լուսարաններ որպես դիմակայող գերտերությանն ուղղակի կամ միջնորդավորված սգրեսիայի հետևանքով ծագած տարածաշրջանային միջապգային հակամարտություն:

Այս առջև նպատակ չդնելով հատուկ ուսումնասիրության ենթարկելու, տվյալ միջապգային-իրավական, քաղաքական և ռազմական հիմնախնդիրը՝ նշելով, որ այս դեպքում վրադրվել և հակասությունների բարդ հանգույցի մեջ միախուռվել են տարամակարդակ միջքաղաքակրթային շփման հակամարտներուժերը⁶: Բազմամակարդակ քաղա-

քակրթային վերլուծության մեթոդաբանությունը, որն այլ աշխատություններում առաջարկել է հեղինակը, թույլ է տալիս աֆղանական հակամարտության օրինակով բացահայտել միջքաղաքակրթային հակամարտային մոդելների բոլոր հիմնական մակարդակային տարբերակների առկայությունը:

Ավելի վաղ մշակված վերլուծական սխեմայի «վրադրումը» դիտարկվող նյութի վրա ցույց է տալիս, որ առկա են՝

— բնդհանրական միջքաղաքակրթային շփում՝ որպես միջնորդավորված հակամարտություն երկու՝ արևմտյան և կոմունիստական «գաղափարախոսական քաղաքակրթությունների» միջև.

— տարածքային քաղաքակրթային հակամարտություն այն պետությունների խմբերի միջև, որոնք ներկայացնում են մահմեդական քաղաքակրթային շրջանը և աթեիստական կոմունիստական տարածքը, միջքաղաքակրթային հակամարտության տվյալ չափումը ներառում է նաև քրիստոնեական (օրոհները և Ռոսաստանի մյուս քրիստոնյաները) և վանդական-պատմական բնդհանրում և իսլամական քաղաքակրթային տարածքների միջև բախման փոխակերպված ձևը.

— սպգային-քաղաքակրթային բախում վիճված աֆղանական բնդդիմության և ԱժԳԻ-ի «անհավատ» վարչակարգի միջև, այստեղ հակամարտության կառուցվածքի մեջ ներակայված է մահմեդական պետությունների մասնակցությունը աֆղանական իսլամական բնդդիմության կողմում.

— ներքաղաքակրթային հակամարտություն սպգամիջյան մակարդակում՝ Աֆղանստանի ցեղերի միջև.

— աղյան վրեժի ներապգային բախում աֆղանական «վեներատայի» կողմերը ներկայացնող կղանների, տոհմերի և ընտանիքների միջև, այն կարգավորում է աղաթների (սովորության այսփունքի նորմերի) համակարգով:

Ապախտով, Աֆղանստանում սպտերազմի համակարգը կարող է ներկայացվել հինգ մակարդակների քաղաքական-գաղափարախոսական, ռազմաքաղաքա-

⁶ Shu F. C. *Komangjyan*. Цивилизационный аспект национальной безопасности, «Безопасность», Инф. сб. Фонда национальной и международной безопасности. — М., 1992, N 2.

կան և թուն ռազմական հակամարտությունների բարդ փոխադրեցության մեջ:

Միջցեղային զինված հակամարտությունների և միջկրակային արյան վրեժի ձևով պատերազմը (չանգ) Աֆղանստանում առկա է անընդմեջ և ազգային-քաղաքակրթային նույնականության յուրահատուկ հատկանիշ է: Տվյալ մակարդակի պատերազմները սակավ շարժուն են և ծավալվում են որոշակի տարածքում, որը որոշվում է ցեղային կամ կրակային նույնականության ասիմետրիայով: Այստեղ ռազմական բախումը կարգավորվում է ոչ միայն և ոչ այնքան շարիաթով, որքան ադաբների սովորույթաիրավական մեխանիզմներով: Օրինակ՝ փուշթուն ցեղերի տարածքում միջցեղային պատերազմի կարգաբերումն իրագործվում է գերազանցապես «Փաշթուն-վալա» ազաթների համակարգով (փուշթունի պատվի օրինակարգով): Այս մակարդակում պատերազմն ամենից առաջ իշխանության ուժի, զինվորական կազմակերպվածության, մարդկային, տարածքային և ֆինանսական ռեսուրսների ցուցադրում է: Ադաթների մանրակրկիտ մշակված կանոնակարգերին և համաշարիաթային նորմերին համապատասխան՝ միջցեղային և կրակային պատերազմը մղվում է՝ անընդհատ ուղեկցվելով բանակցությունների գործընթացներով:

Դրա հետ կապված՝ այս մակարդակների պատերազմների յուրօրինակությունն է՝ ներքաղաքակրթային շիման փոխըմբռնումային-հակամարտային սցենարների մեծ շարժունությունը: Ռազմական գործողությունների և բանակցությունների նպատակն մեծ մասամբ ուժի և հեղինակության ցուցադրումն է: Սովորաբար այդպիսի պատերազմներում հակառակորդի պանգոյաժային ոչնչացում տեղի չի ունենում, աֆղաններն իրենք ասում են, որ իրենք «աղանում են որոշակի մարդկանց, որոնց պետք է ազաներ»: Տվյալ սկզբունքը հատուկ բժախնայությամբ պահպանվում է արյան վրեժի հարցում:

Տվյալ պատերազմների կարգաբեր-

ման մեջ հատուկ տեղ է գրավում ռազմական գործողությունները «արյան գնի» («դեյմաթ-ե խուն») պայմանավորված վճարումներով փոխարինելու մեխանիզմը: Ցեղերի և կրանների միջև խաղաղության յուրահատկությունն է նաև այն, որ տղամարդիկ միշտ ասոր պենք և հրապեն են կրում և փոխհարաբերությունները՝ շնորհիվ «պատասխանը վերադարձնելու» պարտականության անկաակնություն հետևանքով հուզերանական լարվածությամբ ներթմված «թոշնամանքի» և «հյուրընկալության» օրինակարգերի, կրկնօրինակվում են հավասար իրավունքների ինչպես անհատական, այնպես էլ կոլեկտիվ տարյակակների ու օբյեկտների միջոցով:

Պատերազմը՝ մեր դասակարգման մեջ որպես ցիհադ, ներկայացված է Աֆղանստանում հակամարտությունների տարածքային քաղաքակրթային և ազգային մակարդակներով: Տրիադի ընդհանուր հատկորոշումները լրացնելով նրա կարգաբերման կոնկրետ քաղաքագիտությամբ՝ պետք է նշել տվյալ քաղաքակրթային մակարդակի նորմատիվ և արժեքային բազայի արմատական տարբերությունը ցեղային և կրակային նույնականության բովանդակությունից և մակարդակից: Սրբազան պատերազմն իր բովանդակությամբ վեր է կանգնում ցեղային մակարդակի տեղային արժեքային կողմնորոշումներից և խլամի մաքրության պահպանման կոչի գերիշխման հետևանքով աչքի է ընկնում կրոնագաղափարախոսական ուղղափառությամբ, իսկ որոշ դեպքերում՝ կրոնական անհանդուրժողության, անգամ մոլեռանդության դրսևորումներով:

Հարկ է նշել ցիհադի կադաստրման նկատմամբ եղած ավանդական մոտեցման որոշակի սահմանափակությունը, ըստ այդ մոտեցման դա պատերազմ է, որ մղվում է բայառապես ումմայի և մուլլաթի մակարդակում: Պատերազմի էթնիկական-ցեղային տեսանկյան այդօրինակ անտեսումն աղքատացնում էր ցիհադի քաղաքակրթային բազմապատկության ըմբռնումը և վերջին հաշվով նվա-

վելնուձ էր պատերազմի և խաղաղարարության ընթացքի կառավարման արդյունավետությունը:

Աֆրանատանում պատերազմի արմատական փոխակերպումը միջցեղային և միջկլանային բախումների հարթությունից ջիհադի դրսևորվում էր տեղային պատերազմների որոշակի չափով մարման և ցեղերի միջև ժամանակավոր խաղաղության հաստատման ձևով:

Միջցեղային և միջկլանային մակարդակից ջիհադին անցման ժամանակ պատեկյազի բովանդակության և մասշտաբների փոփոխությունը կարելի է նկատել սրբազան պատերազմի մասնակիցների կազմի, նրա բուն գործընթացին ուղեկցող հասկացությունների և տերմինների փոփոխության մեջ: Ջիհադը գործնականում գերակա էր ջանգի նկատմամբ, և դա իր արտացոլումն էր գտնում նաև առօրյա խոսքում:

Ի տարբերություն ջանգը իրականացնողների, պիևվորի (փուշթունի, տաջիկի, խավարաբու կամ դուռանի, գիլգայ ցեղերի անդամների և այլն) փոխարեն ջիհադի սուբյեկտ դարձավ «մուշահեղը»՝ հավատի համար մարտնչողը, որը «բաֆիրի» (անհավատի) դեմ կռվում է հանուն իսլամի մարտության և հաղթանակի. պատերազմող ցեղավաճերի կողմից որպես միջցեղային պատերազմների թատերաբեմ վրասդեյվոլ տեղային տարածությունների (բազմերի) փոխարեն սկսում է գործել «մելլաթը», այսինքն՝ մահմեդական ազգը և տարածքը, որը որոշվում է նվաճումների վերընթաց կամ կորուստների վարընթաց գծով: Որպես գոհեր հանդես են գալիս ոչ թե սպանվածները («քոշթե»), այլ հանուն հավատի սուրբ նահատակ դարձածները («շահիդ»):

Ինչպես վերն արդեն նշվել է, ջիհադի ընթացքում ներքաղաքակրթային և միջքաղաքակրթային հակամարտությունների կարգաբերման մեջ գերիշխող պլան մոլեկ դասական մահմեդական իրավունքի նորմերի համակարգը՝ շարիաթի մեխանիզմներով: Սակայն մուշահեդի պիևվորական վարքագծի դրսև-

վորման մեջ շարունակում էր որոշակի տեղ գրավել սովորու թախավական կարգավորումը՝ հիմնված պիևվորի վարքի օրինակարգը որոշող համամահմեդական սովորու թախավական նորմերի (Ադաբ) և փուշթունական սոլաթների (Փաշթունվալայ) համակարգի ընդհանուր հասկացությունների վրա, ինչպիսիք են «նամուսը» (պատիվը), «խեյպաթը» (համբավը), «մերանան» (արիությունը, խիստակությունը) և այլն:

Փաշթունվալայր ցուցումներ է տալիս մարտադաշտում որոշակի նորմերի կատարման վերաբերյալ: Անս գլխավոր պահանջներից մի բանվալ՝ մեջքով դեպի թշնամին չբռնել, սպանվածներին մարտադաշտում չթողնել, թույլ չտալ, որ նրանք ընկնեն թշնամիների ձեռքը և ենթարկվեն ծանախումների, անմիջապես առաջին օգնություն ցույց տալ վիրավորներին և նրանց դուրս բերել կրակի տակից, դեկավարներին՝ տեղում գնդակահարել ամեն մեկին, ով կմոխյի մարտադաշտից, և այլն:

Որպես, մի կողմից՝ մահմեդական իրավունքի, մյուս կողմից՝ սովորու թաների կարգաբերիչ համակարգերի բովանդակային փոխկապակցության և հարաբերական ինքնակառուցության ծանրակշիտ հաստատում կարող է բերվել հայտնի ֆրանսիացի իրավագետ Բենն Գավիդի կրթակառուցությունը: Երա կարծիրով՝ մահմեդական իրավունքը «սովորույթի նրկատմամբ այնպիսի դիրքորոշում ունի, ինչպիսին է արևմտյան իրավունքի դիրքորոշումը հոժարակամ կամ հաշտ գործարքի վերաբերյալ վերապահման նրկատմամբ... Բայամր կարող էր տարածվել աշխարհում միայն այն պատճառով, որ հանդուրժողական դիրքորոշում էր պահպանում և չէր պահանջում գոհարել սովորույթով սրբագործված սպրեյակերպը»⁷: Այսպիսով, ջիհադի՝ սրբազան պատերազմի իսլամական տեսաբանների աշխատությունների հիման

⁷ Տես P. Davuy. Прииспособление мусульманского права к современному обществу. Основные правовые системы современности. - М., 1988, с. 392-398.

վրա շարադրված մոդելը⁸ անշուշտ արտացոլում է Աֆղանստանում ԽՍՀՄ-ի վիճված ուժեր մտցվելուց հետո վիճված բախման կրոնաքաղաքական տեսանկյունները: Սակայն տվյալ մոդելով որպես սրբազան պատերազմի թատերաբեմ են դիտվում սոսկ ումմայի և մելլաթի տե-

ցարկված չէ ցեղերի կյանքի և նրանց միջև պատերազմի սովորութաիրավական տրամաբանության կանոնավորգումով: Քանի որ տվյալ մոդելը սահմանափակվում է միայն վերցնելային կրոնական պատերազմի սահմաններով, ուստի ուսումնասիրությունից դուրս է



Փուշթունական ցեղերից մեկի ռազմական ավագանին
(Աֆղանստան, Ազատ ցեղերի գոտի, 1982 թ.)

ղաբաշխման սահմանները որպես միասնական տարածություն, որը կառու-

թողնվում ցեղերի՝ ադաթների համա-

⁸ *Shu Bashormi. Требования мусульманской науки Афганистана. Издание «Национального фронта спасения Афганистана». Б. м., 1985 / Пер. с дари., Казы Шахид Гази Абдулкадыр Абдуварис аль-Кашгари. Догматы о необходимости.-Дамаск, 1971.-Пер. с дари; Гульбегдин Хекматъяр. Бог говорит: создавайте исламское государство. Текст выступления (1359 г. Хиджры) перед племена-*

ми Афганистана. Б. м., б. г., / Пер. с дари. Վկայակոչման մեջ Ե. և Ե. ր. տառերը նըշանակում են, համապատասխանաբար, «առանց հրատարակության տեղի նշման» և «առանց հրատարակության տարեթվի նշման»: Աֆղանստանում ցիհադի յուրահատկության հետ կապված՝ վիճված ընդդիմության շատ հրատարակություններում գաղտնապահության նկատառումով չեն նշված լույսընծայման տեղը, երբեմն և ժամանակը:

գաբարաբարականության և ազգահոգեբանության հարուստ աշխարհը: Գա հիմք է տալիս պնդելու, որ միջնդային պատերազմից ջինադի գործնականորեն լլիով անջատվածության վերաբերյալ հայեցակարգը Աֆղանստանում պատերազմական հակամարտության՝ որպես ազգադավանական և ազգաբարաբարական երևույթի, իրական ամբողջականության բավական պարզեցված մոդել է:

Փորձներ պարզել, թե ինչ ազգաբարաբարաբարական հիմք ունի իսլամական կուսակցությունների ռազմաբարաբարականությունը վերահսկվող գոտիներում, որոնք ընդգրկում են ցեղերի՝ ավանդական ազգատարածքային ամբակցման և համախմբման սահմանները (քաղմեր):

Իսլամական կուսակցությունները ջինադի կատավարման իրենց ռազմաբարաբարական կառույցներով՝ իսլամական կոմիտեներով, նախադրյալներ են ստեղծել աֆղանական ավանդական ռազմական դիմադրության էական բընուբազմերից մեկի՝ նրա ռազմավարական անշարժություն, համախմբման կամ համերաշխության տարածքով սահմանափակվածության արմատական փոփոխության համար: Համերաշխության տարածքը՝ քաղմը, իր էություններկայացնում է ազգաժողովրդագրական և կոնվենցիոնալ-ֆեոդալական սահմանների ազգաբարաբարական կուբակցման հնամենի ակունքները:

Անընդմեջ միջնդային և միջլլանային պատերազմի և թշնամական ու դաշնակցային կապերի փոխադասավորության՝ այդ գործընթացով պայմանավորված շարժունության առնչությամբ քաղմը իբրև երևույթ ներկայանում է որպես համերաշխության փոխկապակցված տարածքների՝ քաղմերի ցանցերի, դիմախիկ համալիր: Այդպիսի տարածքներ են ձևավորում երապրությունները, էթնիկական խմբերը և նույնիսկ քաղաբարական կուսակցությունները իրենց ճակատներով, որոնք ներկառուցված են ջինադի մրցակցող սուբյեկտների ճակատների մեջ: Աֆղանստանի տարածքի

մեծ մասում թեև ջինադը իրականում մոդում էր ամբողջ մամայի կողմից, այն իրագործում էին որոշակի ցեղերի և կլանների՝ իրենց քաղմերում անշարժ տեղակայված մոշահեղները, ինչը կենդանի ուժի յուբահատուկ «ստատիկ ռազմական պորաշարժ» էր: Աֆղանստանի ողջ տարածքով ալլատ պորաշարժ կատարող՝ կենտրոնական իշլանությունների կանոնավոր բանակին և խորհրդային բանակին դիմագրավելու՝ անցյալում առկա անիբաժնետության պայմաններում սակ սեփական քաղմի տարածքում ազգոթիակ ստատիկ դիմագրությունը ռազմավարական ասումով անշուշտ կորստարեր էր: Ալլայիտով, համընդգրկուն պատերազմին, որը մրդում էին ԱԳՀ-ի կենտրոնական կառավարությունը և ժամանակին՝ խորհրդային բանակը, գործնականում հակադրվում էր ումմայի համընդհանուր սրբական պատերազմի, որն իրագործվում էր տեղային ցեղային պատերազմի միջոցներով: Աֆղանստանում ձևավորված ավանդույթների համաձայն՝ նույնիսկ ադեռայի փորձությունների և սպանալիթների ժամանակ ցեղը կամ կլանը վատ են քնկալում ուրիշ ցեղի տարածքն անցնելու նախատվաբարություն վերաբերյալ խորհուրդները (իրամաններն այդպիսի դեպքերում անհնար են): Նման դեպքերում նախընտրելի է համարվում Պակիստանի կամ Իրանի տարածքներ տեղափոխելը, քանի որ այդ տարածքները գնահատվում են որպես յուբահատուկ ջեղր գոտիներ:

Աֆղանստանում ռազմաբարաբարական իրադրության վերբուծությունը սակ ազգային մակարդակում կատարած քաղաբարաբարները հաշվի չլին ասում «համընդհանուր ջինադի» իրական ազգաբարաբարական մեխանիզմները, որոնք այն վերածում էին խստիվ տեղաշնայված և վատ փոխամաձայնեցված ցեղային ջինադների խճակարի: Խորհրդային պորբեր ԱԳՀ մայկելուն նախորդած և հաջորդած տարիներին պատերազմ վարելու ավանդույթների

վատ իմացությունը իրադրության ռազմաքաղաքական քննությունը սահմանափակում էր աֆղանական ազգաբաղաքական բազմազանության մակերեսային վերլուծության մոդելներով և դրանց վրա հիմնված հանձնարարականներով: Չուտ տեսական և մեթոդաբանական քաղաքագիտական վրիպումները գործնականում առաջ էին բերում քաղաքական, դիվանագիտական, ռազմական մեծ կորուստներ ԽՍՀՄ-ի կողմում, դառնում էին աֆղանական պատերազմի բոլոր մասնակիցների մեջ րոհերի չարդարացված մեծ քանակի պատճառներից մեկը:

Իսլամական կոմիտեներն իրենց աշխատանքներում ավելի ու ավելի մեծ ուշադրություն էին դարձնում դիմադրության առանձին անկլավային ուժերի միջև ռազմաքաղաքական վտխրմբռնման և մարտական համագործակցության ռեզերվների ու հնարավորությունների ձևավորմանը, սկզբում՝ գերազանցապես քաղմերի ուղղաձիգ ցանցերով, որոնք, որպես կանոն, առնչակից էին կենտրոնաեզրամասային կուսակցական-ազգաքաղաքական կառավարման կառույցների ստորակարգությանը:

Ջիհադի ազգաքաղաքականության հիմնախնդիրների վերաբերյալ բոլոր նախորդ խորհրդածությունները կարելի է հանգեցնել հետևյալ քաղաքագիտական եզրակացությանը՝ ջիհադի ռազմաքաղաքական արդիականացումն Աֆղանստանում արդեն 1980-ական թվականների սկզբին կապված էր զինված ընդդիմության համար էական մի խընդրի իմաստավորման հետ, այն է՝ պատերազմի ազգաքաղաքականության փոփոխություն, ամենից առաջ՝ հրաժարում ջիհադի այնպիսի ռազմական կառույցների, որի հիմքն է սրբազան պատերազմի տարածքի բաժանվածությունը քաղմերի:

Հենց էթնիկական-ցեղայինից ազգային տարածք ջիհադի ազգաքաղաքական փոխադրման անհրաժեշտությամբ էր պայմանավորված զինված ընդդիմության գործունեության փոխարյուրմը խճանկարային «գերիլյային» մա-

կարդակից աֆղանական ազգային բանակի մղած համընդգրկուն պատերազմի ռազմավարական թատերաբեմ:

Պատերազմի ուսումնասիրումը ցույց է տալիս, որ զինված ընդդիմության առաջնորդներից ոմանք արդեն այն շրջանում գիտակցում էին ջիհադի տվյալ արդիականացման կարևորությունը: Փորձներ ցույց տալ այդ գործընթացի բարդությունը Ահմադ Շահ Մասուդի՝ Աֆղանստանում ամենահեղինակավոր դաշտային հրամանատարներից և Աֆղանստանի իսլամական ընկերության ռազմաքաղաքական մտավորական առաջնորդներից մեկի կողմից լուծումների արդյունավետ որոնման օրինակով:

ԱԳՀ-ում հեղինակի գտնվելու ժամանակ Ահմադ Շահը հայտնի էր որպես Փանջշիրի ռազմաճակատի հրամանատար, տաղանդավոր ռազմական կազմակերպիչ, ինչպես նաև խորամանկ և ճկուն բանակցող: Փանջշիրի դաշտավայրի ծնունդ լինելով՝ նա իր համերկրացիների նկատմամբ գլխավորություն էր ստացել 1980 թ. խորհրդային բանակի ստորաբաժանումների դեմ հանդուգն հարձակման շնորհիվ: Փանջշիրի ռազմական կազմակերպման առաջին փուլերում Ահմադ Շահի ռազմաճակատը ծավալվում էր քաղմերի ավանդական կառույցվածքով: Սակայն ժամանակի ընթացքում նա մշակեց և ընդդիմության ռազմաքաղաքական առաջնորդների մեջ առաջինն իրականացրեց պատերազմի այնպիսի մոդել, որը մոջահեդներին թույլ էր տալիս ճեղքել համերաշխության տարածքը և դուրս գալ ազգային թատերաբեմ: Վերջապես 1985 թ. Ահմադ Շահի վորքերում հայտնվեցին կանոնավոր զինվորական ստորաբաժանումներ («բաթեհան մարքայի»), որոնց մեջ հավաքագրումը սկսեց կատարվել քաղմերի ցանցերից անկախ:

Այդ ընտրյալ միավորումների ըստեղծման և դրանց համազգային կազմակերպության առավելությունների ցուցադրման պահից Ահմադ Շահը գործունեություն ծավալեց իր ռազմական

կազմակերպության մեջ ուրիշ համընթացության տարածքներ ներգրավելու ուղղությամբ: Մասնագետները նշում էին, որ Մասուղը ազգային կանոնավոր ծագման կազմակերպության կառուցման սկզբունքները ներառում էր քաղմեքի սահմաններում հատվածավորված ջիհադի ծագմանազգայնացման համակարգի մեջ: Նա, մասնավորապես, վերագատրատման էր քննարկում ոչ փանջջիդյան խմբերին և նրանց տեղական դաշտային հրամանատարներին, որոնք, ըստ Ահմադ Շահի ստացած հետախուզական տվյալների, լարված հարաբերությունների մեջ էին ավանդական առաջնորդների հետ: Վերապատրաստությունը գործնականում լուրջացնում էին արդիականացված պատերազմի մոդելը, համոզվում դրա աստվերության մեջ, ապա փանջջիդյան հրահանգիչներին և խորհրդակցանքների ուղեկցությամբ ներգրավվում էին իրենց ծննդավայրերի ցեղային գոտիների քաղմեքի մեջ: Այս ամենը Ահմադ Շահին թույլ էր տալիս ջիհադը հետևողականորեն ձևափոխել էթնիկական-ցեղային համընթացության տեսլային տարածքների սահմաններից, այսինքն՝ գործնականում արդիականացնել ծագմանազգայնացման դոկտրինը և նրա ազգայնացման ազգաբազմային պրակտիկան:

Ահմադ Շահ Մասուղը, լինելով ոչ ավանդական մտածողության ներկայացուցիչ և միաժամանակ էթնիկական-ցեղային մշակույթի լավ գիտակ, օգտագործում էր նաև իր ծագմանազգայնացման դոկտրինի «մարդկայնացման» և ջիհադի տարամակարդակ բաղաբաղադրային մասշտաբավորման գործընթացի անձնավորված կառավարման սուբյակտիվ գերանակման գործոնները: Երբ դաշտային հրամանատարները, որոնք վերջին հաշվով ներկայացնում էին որոշակի ցեղեր ու կլաններ, մոջահեդների ավանդական պարագլուխների համեմատությամբ ավելի շատ գիտելիքներ և ավելի լայն մտահորիզոն ունեին և դրանով իսկ «անաստված հակառակորդի» համ-

ընդգրկում պատերազմին ծագման գիմագրավման ստավիկ սայխանայ տեխնոլոգիաների կրողներ էին: Երբ սերնդի հրամանատարները Ահմադ Շահի շարժման մեջ գտնում էին իրենց սուբյուկտիվակազմի ստավիկ ժամանակակից ձևը («սովորածների» ստաջբաշվելը՝ շրջանցելով ցեղերի և տոհմերի նահապետական ստորակարգությունները): Մասուղը, անձնատվակի թողնելով ավանդական գյուղական ազգասուբյակակազմի կառուցվածքը, ջիհադի ազգայնացման իր համակարգն իրագործում էր գերազանցապես վերելից ծագմանազգայնացման կառավարման արդիականացման միջոցով: Այդ նպատակով 1985 թ. նա ստեղծեց «Հյուսիսի հեղուրության խորհուրդը» («Շուրախ նապա»), իրենից սուբյուկտիվ կառավարման մի կառույց, որը կոչված էր հաղթանակելու ցեղային համընթացության տարածքներում սրբազան սրտեբազմի ազգաբազմային հատվածավորումը՝ օգտագործելով Ալթրանտանի Բյալամական քննիչության բաղաբաղադրային հնարավորությունները և նրա ազգայնացման առաջնորդ Բուրխանուդդին Մադրանի օժանդակությունը:

Որպես Ահմադ Շահ Մասուղի բազմաշա բարենորոգչական ծագմանազգայնացման գործունեության արդյունք՝ նրա շարժումակ վիճված խմբերը հետևողությունը ստացան անտրեկ շրջանակում («Հյուսիսի խորհուրդ» կազմից վերահսկվող ողջ տարածքում):

Հատուկ հետաքրքրություն է օժտված այն միջոցառումների համակարգը, որոնք ժամանակին իրականացվել են Ահմադ Շահի խմբավորման վրա ծագման ճնշումը և Փանջջիդի սուբյու-

⁹ Երբ Բուրխանուդդին Մադրանին անցավ իշխանության գլուխ, Ահմադ Շահ Մասուղն առաջադրվեց Ալթրանտանի առաջադրված բանակաբարձ միաժամանակ կանոնավոր ազգայնացման ստեղծելու նպատակադրումով: Անդրհամադիր առաջնորդ Գուրելդին Հերմաթիայի ճնշման տակ բանակցություններից հետո Ահմադ Շահը հրաժարական ավելի շարժանկելով համարվել իր երկրի ծագմանազգայնացման առաջնորդներից մեկը: Ըստ որոշ տվյալների՝ նա Տաթևիստանի վիճված քնդիմության ստավիկ ազգայնացման գործակալն է:

ճակատի հրամանատարի կողմից վերահսկվող տարածքում պինտյադարի ու պինված բախման սառեցման վերաբերյալ բանակցությունները զուգակցելու նպատակով:

Զիհադի առանձին արգաքաղաքական հատվածներում անգամ կարճատև և տեղային խաղաղության հաստատման այդպիսի փաստերը (հատկապես Լ. Ի. Բրեժնևի մահից հետո ընկած ժամանակներում) նպաստում էին սանձազերծված պատերազմի հեռանկարների ռազմապետականը, պինված բախումը կարգավորելու հումանիտար կողմնորոշման առաջընթացին, ինչը կարված էր ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ դեսպանորդի՝ այն ժամանակվա համար նոր խաղաղարար առաքելության ծավալման հետ:

Նկատենք, որ սովյակ վերլուծաբանական և քաղաքական-դիվանագիտական աշխատակիցը ժամանակին օգնեց ռազմաքաղաքական գիտամեթոդական հիմք ստեղծելու այն բանի համար, որ հռչակվի Աֆղանստանում ապգային համաձայնության կուրսի գերակայություն և ապա խորհրդային պորթբիլը դուրս բերվեն այնտեղից:

Մեր կարծիքով՝ անլիճեյի է ՄՍՀՄ-ի քաղաքական կենտրոնի մասնակցությամբ ինչպես Աֆղանստանում, այնպես էլ սեփական տարածքում ժամանակին սանձազերծված պինված բախումների հակասական դասերի համեմատական վերլուծության ծավալման նպատակահարմարությունը:

* * *

Հայտնի է, որ Աֆղանստանի մոջահեդները դեռ ոչ հեռու անցյալում բավական գործուն մասնակցություն էին ունենում Ղարաբաղում մարտական գործողություններին ադրբեջանական կողմում, ինչպես նաև շարունակում են կռվել Չեչնիայում և Տաջիկստանում: Ղարաբաղյան հակամարտության մեջ աֆղանապի «հավատի համար մարտընչողների» ներկայությունը հակառակորդն օգտագործում էր իր պինձառայողների մարտական ոգին բարձրացնելու համար: Մոջահեդի կերպարը ադրբեջանական բանակի անձնակազմի շրջանում քարոզվում է որպես ջիհադի արժեքների վրա հիմնվող ռազմական վարքի էտալոն: Հատկանշական է, որ դարաբաղյան բախման մեջ զոհված ադրբեջանացիները պաշտոնական մամուլում որակվում են որպես շահիդներ՝ հանուն հավատի զոհված սուրբ նահատակներ:

Եթե հաշվի առնենք, որ վարձկան մոջահեդները կարող են ներկայացնել աֆղանական ջիհադի տարբեր տոհմացեղային, ռազմակյրոնական և քաղաքական տարրեր, ապա ոչ վաղ անցյալի սըրբազան պատերազմի արգաքաղաքականության յուրահատկությունների խմբությունը կարող է հիմք դառնալ հակառակորդի ռազմական հոգեբանության ավելի լավ ըմբռնման, ինչպես նաև տարածաշրջանում իրադրության վրա ներգործելու քաղաքական և դիվանագիտական միջոցների նրբերանգման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Г. С. Котанджян. Схема ориентирования мероприятий по организационному обеспечению перехода вооруженных отрядов хазарейского населения на сторону народной власти (на примере предложений по склонению к сотрудничеству бандформирований Саида Джаграна). Кабул, 1983.

2. Г. С. Котанджян. «Джихад» как двигатель общественного прогресса.—М., «Россия», 1992, 22—29 июля.

3. Г. С. Котанджян. Тбилисская встреча ветеранов афганской войны.—М., «Безопасность», Инф. сб. Фонда национальной и международной безопасности, 1992, N 1.

4. Г. Котанджян, С. Абрамян. Методология урегулирования конфликтов (сущность и механизмы Гарвардского проекта).—Е., ГИУА, 1995 (на англ. яз.).

ВОЕННАЯ ПОЛИТИКА

ЭТНОПОЛИТИКА «СВЯЩЕННОЙ ВОЙНЫ» НА ПРИМЕРЕ АФГАНИСТАНА

Г. С. КОТАИДЖЯН, полковник, доктор политических наук, профессор

РЕЗЮМЕ

В статье автор делится опытом своей работы в Афганистане в составе группы аналитиков и переговорщиков, занимавшейся изысканием новых для традиционной военной политики ресурсов управления ходом войны и замораживания локальных вооруженных конфликтов в составе войны, осуществляемой противником в форме «джихада» («священной войны» мусульман).

На примере вооруженного конфликта в Афганистане очерчиваются основные измерения анализа внутреннего разнообразия «священной войны», рассматриваются как многоуровневость ее структуры («джихад», «джанг», «кровная месть»), так и динамика ее этнотерриториальной сегментированности в границах родо-племенных и межплеменных союзов («кадм»).

Данные проблемы рассматриваются в контексте имевшей место в Афганистане военно-политической модернизации джихада. Автор обращает внимание коллег, вовлеченных в процессы урегулирования вооруженных конфликтов, на возможность использования этнополитической специфики конкретных участников региональных войн в процессе нюансированной разработки портфеля миротворческих переговоров и реализации мероприятий по установлению и расширению локальных зон перемирия.

Автор отмечает, что толкование джихада в своей исторической основе имеет принцип отражения угрозы существованию и отправлению «священной веры» ислама, сложившейся во времена борьбы первых мусульманских общин («уммы») за свое выживание и утверждение.

Западная версия джихада, принятая в качестве классической дефиниции, сформулирована Р. Петерсом как «приложение максимальных усилий... в ведении войны против «исвержных» путем нанесения им военных ударов, изъятия их собственности, разрушения их святилищ, развенчивания их идеолов...». Суть военно-политического объяснения призыва к максимальной мобилизации уммы заключается в необходимости захвата «дома войны», откуда исходит угроза врагов Аллаха, с целью искоренения этой угрозы и включения «дома войны» в состав «дома ислама» (равнозначное толкование — «дома мира»). Таким образом, мусульманские государства или отдельные авторитетные мусульманские деятели, объявляя джихад при его соответствующем аргументированном обосновании (на основании Корана), в истоках детерминации «священной войны» помещают тезис о «вынужденной необходимости» противодействия агрессии против ислама, как богоданной идеологии, и против уммы, как ее носителя и защитника. Данная адаптация историко-политологического обоснования джихада как «необходимой самообороны уммы» позволяет современным мусульманским политологам рассматривать джихад в системе международно-правовых норм определения агрессии, соответствующих политических и военных доктрин, а также практических механизмов организации отражения агрессии.

Автор отмечает, что «наложение» разработанной аналитической схемы на рассматриваемый конкретный материал обнаруживает наличие:

- глобального межцивилизационного контакта,
- национально-цивилизационного конфликта,
- внутрицивилизационного конфликта на межэтническом уровне между племенами, так как война (джанг) в форме межплеменных вооруженных конфликтов и кровной межклановой мести не исчезает полностью, а присутствует и при джихаде, но в редуцированной форме и представляет специфический атрибут национально-цивилизационной идентичности.

По мнению автора особый интерес представляет система осуществленных в свое время мероприятий по сопряжению военного давления на группировку Ахмад Шаха с переговорами о перемирии и замораживании вооруженного конфликта на территории, контролируемой Командующим Пан-джширским фронтом.

Подобные факты установления даже относительно непродолжительного и локального мира в отдельных этнополитических сегментах джихада способствовали рациональному переосмыслению перспектив развязанной войны (особенно после кончины Л. И. Брежнева), продвижению гуманитарных установок на урегулирование вооруженного конфликта в связи с развертыванием новой для того времени миротворческой миссии специального посланника Генерального Секретаря ООН.

Данная политическая и дипломатическая работа помогала создавать научно-методическую и военно-политическую основу для декларирования приоритета «политики национального согласия» в Афганистане с целью последующего вывода из него советских войск.

Автор отмечает, что «моджахеды» («борцы за веру») Афганистана еще в недавнем прошлом активно участвовали в боевых действиях против Карабаха, а сейчас продолжают воевать в Чечне и Таджикистане. Присутствие афганских «борцов за веру» в Карабахском противостоянии используется Азербайджаном для нагнетания боевого духа своих военнослужащих. Образ моджахеда среди личного состава азербайджанской армии пропагандируется в качестве базирующегося на ценностях джихада эталона военного поведения. Симптоматично то, что погибшие в карабахском конфликте азербайджанцы в официальной прессе своей страны квалифицируются как «шахиды» — «святые мученики за святую веру».

Автор обращает внимание на то, что моджахеды-наемники могут представлять различные родо-племенные, фундаменталистские военно-религиозные и политические элементы афганского джихада, а следовательно знание особенностей этнополитики недавней «священной войны» может стать подспорьем для лучшего понимания военной психологии контрпартнера, а также нюансирования военно-политических и дипломатических инструментов влияния на обстановку в регионе.

На взгляд автора неоспорима целесообразность сравнительного военно-политологического анализа противоречивых уроков вооруженных конфликтов, развязанных в свое время с участием политического центра СССР как в Афганистане, так и на собственной территории.

MILITARY POLITICS

ETHNIC POLITICS OF THE «HOLY WAR»:
THE CASE OF AFGHANISTAN

H. S. KOTANJIAN, Colonel, Doctor of Political Sciences, Professor

SUMMARY

In this article, the author shares his experience gained in Afghanistan as a member of the group of analysts and negotiators in search of new (for traditional military politics) resources to control wars and freeze local armed conflicts, wars of the «Jihad» type (the «Holy War» of Muslims).

The analysis of the armed conflict in Afghanistan outlines the internal diversity of «Jihad», its inner structures (jihad, jung, blood feud) and the dynamics of ethnic territorial segmentation within the boundaries of tribal and inter-tribal unions.

These problems are considered in the context of the military-political modernization of the «Jihad» in Afghanistan. Those who are involved in the settlement process of armed conflicts will find useful information on the possibility of using ethnic peculiarities of individual participants in regional wars, in the process of the subtle elaboration and development of the implementation of measures to establish and expand local peace zones.

The author notes that the historical interpretation of the origin of «Jihad» involves the idea of rebuffing a threat to the existence and the rites of the «Holy Belief»: Islam. It came into existence during the battles of the first Muslim communities (Umma) for their survival and assertion.

In the West, the concept of «Jihad» is defined by R. Peterson as «the use of maximum efforts... in the war waged against «infidels» by delivering military attacks and confiscating their property, destroying their sanctuaries and dethroning their ideals». The military-political explanation of the appeal to maximal mobilization of «Umma» lies in the necessity to capture the «House of war» from which comes the threat of the enemies of Allah.

The aim is to eradicate this threat and include the «House of War» in the «House of Islam» (this is equivalent to the «House of Peace»). Thus, when some Muslim states or prominent Muslim figures declare a «Jihad», they base their argumentation on the Koran and, when giving the definition of the «Holy War» they use the thesis of «compelling necessity», i. e. the rebuff of an aggression against Islam, a God-given ideology, and against the «Umma» as the barrier and defender of this ideology. This adaptation of the historical and politicological explanation of «Jihad» as a «necessary self-defence of the «Umma», allows modern Muslim politicologists to regard the «Jihad» within the international system of legal norms defining aggression with corresponding political and military doctrines. It also provides practical mechanisms to repel aggression.

The author notes that when this analytically elaborated scheme is factually analysed, it turns out that there are:

- global inter-civilizational contacts*
- nationat-civilizational conflicts*
- intra-civilizational conflicts on an inter-ethnic level between tribes, war («jung»), as in inter-tribal armed conflicts and inter-clan blood-feuds may also be*

termed a «Jihad», even though in milder form. It is typically of a national, intra-cultural dimension.

The author thinks that the series of actions (taken at the time) which combined military pressure on the Ahmad Shah group, with peace talks and the freezing of armed conflicts on the territory controlled by the Commander of the Pangshir Front may be of special interest.

Similar facts concerning the establishment of a relatively short and local peace in different ethnic, political parts of the «Jihad» contributed greatly to the rational rethinking of the perspectives of war (especially after Brezhnev's death) breaking out. This promoted a humanitarian approach to the settlement of armed conflicts with respect to the development of the new (at that time) peace mission of the special envoy of the U. N. Secretary General.

This kind of political and diplomatic work helped to create the military, political, rational and methodological basis for the «national agreement» in Afghanistan with the subsequent withdrawal of Soviet troops.

The author notes that Afghan «mojahedeen» (fighters for a belief) participated actively in military hostilities against Karabagh and are now fighting in Chechnia and Tajikistan.

The presence of Afghan «fighters for a belief» in Karabagh is used by Azerbaijan to uplift the fighting spirit of the army. The image of «mojahedeen» is presented in the Azeri army as one based on the values of «Jihad», and follows that pattern of military behaviour. It is noteworthy that those Azeris who perished in the Karabagh conflict are regarded as «shahidler»—holy martyrs for their belief.

The author notes that «mojahedeen» mercenaries represent different tribal, military, fundamentalist-religious and political elements of the Afghan «Jihad». Thus, knowledge of the peculiarities of ethnic policy in the recent «Holy War» may help to better understand the military psychology of the opponent and use this knowledge in the military, political and diplomatic spheres to influence the situation in the region.

The author thinks that it may be of interest to do a comparative military and political analysis of the controversial lessons of armed conflicts unleashed at the time by the political centres of the USSR in Afghanistan and on the own territory of the former USSR.

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԿԱԳՐԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ,
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒԵԿՏԻՎՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՏԵՄԱՆԿՅՈՒՆՆԵՐԸ

Ռ. Ռ. ՂԱՄԲԱՐՅԱՆ, փոխդոցարտ

Հայաստանի բանակը ստեղծվել է արտակարգ բարդ պայմաններում, անհավասար մարտերում: Նրա ծնունդը արդյունք էր սեփական երկրի պաշտպանության անհրաժեշտության: Մարդիկ, վերցնելով պապերից մնացած զենքը, կանգնեցին հայրենի օջախների, գյուղերի պաշտպանության դիրքերում: Մենք խոնարհվում ենք բոլոր նրանց առջև, ովքեր առաջինը ոտքի կանգնեցին պաշտպանելու իրենց երկիրը: Ասկայն ժամանակակից աշխարհում անհնար է պապենական մեթոդներով արտերազմել, առավել ևս, որ մեր ժողովրդի առջև ծառայավ նաև պետականության ստեղծման խնայիրը, իսկ պետությունը ենթադրում է նաև, որպես անհրաժեշտ հատկանիշ, ռազմական գործի արդի համաշխարհային փորձի հաշվառումով կանոնավոր հիմքի վրա կառուցված բանակի առկայությունը:

Եվ ահա սկսվեց բանակի ստեղծման երկրորդ փուլը: Անշատ-անշատ, առանձին գործող խմբերը ռազմական գործին շատ թե քիչ ծանոթ մարդկանց ղեկավարությամբ հենց տեղում, մարտական գործողությունների ընթացքում, անասելի դժվարություններ հաղթահարելով, ցուցաբերելով ռազմական իմաստություն, սկսեցին միավորվել, համախմբվել, և սկսեց ստեղծվել պետական բանակ:

Ո՞ր թևն օդուքայուն ուներ բանակի ստեղծման պատմական փորձ, սակայն ուրիշի, նույնիսկ ժամանակային ու աշխարհագրական առումով մեկ մոտիկ փորձը ամբողջությամբ ընդունելն անհնար էր, քանի որ յուրաքանչյուր կոնկ-

րետ դեպքում խնդիրներն ու մտաշտարները միանգամայն տարբեր են, իսկ կրկնությունը միշտ չէ, որ հաջող է լինում:

Այսօրվա դրությամբ բանակի ստեղծման գործընթացն արդեն դրված է պետական հիմքերի վրա: Գժվարությամբ, որոնումների ու սխալների ճանապարհով ստեղծվեց գործուն համակարգ, որը, սակայն, դեռ կատարելագործման կարիք է պահում, քանի որ գերծ չէ թերություններից, դեռ կան չլուծված շատ խնդիրներ: Գրանցից ամենաուրջը սպայական կայքերի խնդիրն է:

ԽՍՀՄ-ում գոյություն ուներ սպայական կողքերի պատրաստման հատուկ համակարգ՝ սովորողյան դպրոցներ, պինդորական ուսումնարաններ, ակադեմիաներ: Հայաստանում դրանք նոր են ստեղծվում: Բայց ժամանակը չի սպասում, ուստի և գործունյա, բանիմաց սպաների պատրաստման խնդիրը դառնում է առանձնապես հրատապ:

Այսօրվա դրությամբ համալրման հիմնական բազան նախկին ԽՍՀ Միության ՁՈՒ-ի սպաներն են, որոնցից շատերը ծառայության են անցել ՀՀ ՁՈՒ-ում: Սակայն այդ անցումը ոչ միշտ է կատարվում հարթ ու անհիվանդաբին, և դա կարված է այն բանի հետ, որ վերջին 5-6 տարում լուրջ փոփոխություններ են տեղի ունեցել երկրի ավանդական հիերարխիական հարաբերություններում, դա էլ իր հերթին հանգեցրել է անձնական համոզմունքների ու արժեքների լուրջ վերանայման անհրաժեշտության: Ժամանակն ի հայտ է բերել նոր, ոչ պա-

կաս լուրջ արժեքներ, բայց այլ համակարգում ու միջավայրում դաստիարակված հասուն մարդու համար այնքան էլ հեշտ չէ վերափոխվել, ընկալել նոր գաղափարները, նույնիսկ էթե դրանք ավելի տրամաբանական և առաջադիմական լինեն: Նշված հանգամանքներն առաջ են բերել հոգեբանական լուրջ խնդիրներ, որոնք անհրաժեշտ է շտապ կարգով լուծել:

«Չ ՁՈՒ-ի համալրման մյուս աղբյուրը պահեստապորի սպաների գորակոչն է վիճվորական ծառայության: Ներանցիկ շատերը սպայական կոչում են ստացել բուռնում ուսանելու ընթացքում և վիճվորական կյանքի դպրոց չեն անցնել: Նրանց նույնպես հարկավոր է հատուկ ուշադրություն նվիրել, այսինքն՝ հաշվի առնել, որ արդեն հասուն տարիքում, կտրված լինելով սովորական խաղաղ մասնագիտությունից, նրանք ներգրավում են լոկ դասագրքերից իրենց ծանոթ գործընթացների մեջ: Նրանց տեսական գիտելիքներն ամրապնդված չեն պրակտիկայով, ուստի նրանց առջև նույնպես ծառայում են հոգեբանական բնույթի պահպան խնդիրներ:

Չի կարելի անջրպետ անցկացնել մարտական և պահեստապորից գորակոչված սպաների միջև, թեև վերջիններս հանդիպում են նաև այլ հոգեբանական դժվարությունների, և այդ նկատառումով նրանք պետք է արժանանան հրամանատարության, կադրային սպաների հատուկ ուշադրությանը: Մենք այստեղ կաշխատենք ընդհանուր առմամբ կենտրոնանալ հայկական բանակի սպաներին ներկայացվող պահանջների վրա՝ նրանց չբաժանելով մարտական սպաների և պահեստապորից եկածների և հուսալով, որ վերջիններս մարտական սպաների օգնությամբ արագորեն փորձ կլրտակեն և արժանապատվությամբ կկատարեն իրենց պարտքը հայրենիքի հանդեպ:

Կադրային շատ սպաներ գերադասում են գործել հին ձևով, նրանց չի հաջողվում վերափոխվել և գործել նոր իրողությունների պայմաններում: Նրանց առջև ծառայած են տարբեր հոգեբանա-

կան խնդիրներ, ինչպիսիք են, օրինակ, վախը նոր իրադրության հանդեպ, անփառնգությունը կորցնելու, շտորված ճանապարհից շեղվելու երկյուղը, սեփական ուժերին չհավատալը: Երբեմն մարդիկ պարզապես չեն ունենում նոր պայմաններում անհրաժեշտ ստեղծագործական հմտություններ, և դա նրանց տանում է փակուղի, որից ինքնուրույնաբար դուրս գալու համար հաճախ չեն բավականացնում նրանց ուժերը: Այդպիսի սպաներին անհրաժեշտ է օգնել հոգեբանական արգելքների հաղթահարման գործում: Ճիշտ է, նման դեպքերում հարկ է հիշել, թե որքանով են իրական ու կրնկրես նրանց ներկայացվող պահանջները: Իսկ սպաներին պահանջներ ներկայացնելու իրավունքի համար բանավում պետք է, ստեղծել պահանջների ամբողջական համակարգ՝ ուսումնասիրելով դրանց բավարարման հոգեբանական տեսանկյունները:

ՁՈՒ-ի ծառայությանը վիճվորագրված մարդուն ներկայացվող գլխավոր պահանջներից մեկը իրեն կատարելու կարողությունն է: Սա յուրաքանչյուր գիտակից մարդու վարքագծի կարևոր առանձնահատկություններից մեկն է, բայց որոշակի իրավունքներով օժտված, մի խումբ վիճվորներ ղեկավարող և նրանց կյանքի համար պատասխանատու սպայի համար այն դառնում է առանձնապես անհրաժեշտ: Սպան պետք է հրտակորեն գիտակցի, որ իր վարքացումը գլխավորապես կառավարում է հենց ինքը: Ուստի դրվում է ինքն իր վրա, իր մասնագիտական մակարդակի բարձրացման վրա մշտապես աշխատելու հարյր: Ընդ որում սպան պետք է հստակորեն հիշի, որ կրթության ու վարքացման ընթացքում մարդը ստիճանների մեջ կաշկանդված չէ և միշտ էլ տեղ կա յուրացնելու նորը և՛ մասնագիտական հմտությունների խմատում, և՛ այնպիսի մի բարդ հարցում, ինչպիսին է վերաբերմունքը շրջապատի մարդկանց՝ թե՛ ենթակաների, թե՛ ղեկավարների նրկատմամբ:

Սպան պետք է խմանա, թե որքանով

են բանական անձնային արժեքները, որի համար պետք է հասակորեն որոշի դրանք, և, որ ամենագլխավորն է, նա պետք է պատրաստ լինի ընդունելու իր սխալները: Չէ՛ որ ոչ ոք պերճ չի, սխալներից: Հնարավոր չէ անսխալական լինել, և հարցն այն է, որ սպան ժամանակին գիտակցի իր սխալները և ձգտի ուղղելու դրանք: Այդ հարցում շատ կարևոր դեր է խաղում շրջապատի հակապոզիտիվությունը, այն օգնում է կանոնավորելու գործողությունները: Պետք է հիշել, որ շրջապատից սովորելու մեջ սանթափ ոչինչ չկա: Սա վերաբերում է ոչ միայն ևրիտասարդ, այլև փորձով իմաստնայած, մարտական ծառայությունների ունկնդրող սպաներին:

Հենց մարտական փորձ ունկնդրող սպաների մեջ կարող է մեծամիտ վերաբերմունք լինել «ևրիտասարդների» նրկատմամբ: Այստեղ ևս անհրաժեշտ է հիշել, որ մարտական գործողություններին մասնակցելը պատվաբեր է, բայց ոչ մի դեպքում իրավունք չի տալիս իրեն բարձր դասելու շրջապատից: Սպան պետք է իր փորձն օգտագործի պինվորական կողմկտիվի ստեղծման ու կատարելագործման համար:

Կողմկտիվներն ըստ դրանցում տիրող փոխհարաբերությունների լինում են երկու տիպի: Առաջին, երբ խումբն ստեղծվել է ընդհանուր դրական շահերի, բարեկամության ու փոխօգնության ձգտումների, ընդհանուր պարտքի գիտակցման հիմքի վրա: Այդպիսի կողմկտիվի ստեղծումը գործնականում լիովին կախված է սպաներից: Ու թեև այդ կողմկտիվներում ստեղծվում են նաև միկրոխմբեր ըստ բնավորության գծերի, հայրենակցական սկզբունքի, շահերի, սակայն առողջ կողմկտիվում դրանք բացասական ֆոն չեն ստեղծում, այլ նպաստում են միմյանց նկատմամբ բարյապակամության մթնոլորտ ստեղծելուն, ընդհանուր գործի ամբողջականության ըմբռնմանը: Սա ոչ միայն նպաստում է պարտականությունների լավագույն ու ավելի վստահ կատարմանը, այլև մարդկանց օգնում է հեշտությամբ տանելու

պինվորական ծառայության դժվարությունները:

Զինվորական կողմկտիվի երկրորդ տիպն այն է, որի առանձին անդամներ հակված են լինում խախտելու պինվորական կարգապահությունը, խտամելու իրենց պարտականությունների կատարումից, դրանք գցելու ուրիշների վրա, բնդ որում այստեղ էլ հաճախ առաջանում են միկրոխմբեր: Ստեղծվում է լարված մթնոլորտ, երբ հոգևրանական հավասարություն չկա ինչպես առանձին անհատների, այնպես էլ միկրոխմբերի միջև: Եվ այնուամ միկրոխմբերը դառնում են բացասական գործոն, որի դեմ սպաները պետք է պայքարեն, այնպես կարող են խախտվել առանձին պինվորականության իրավունքները, կողմկտիվում կարող է թուլանալ պինվորական կարգուկանոնը: Այդպիսի միկրոխմբերի եեա պետք է տանել հրմտություն, համբերություն ու ժամանակ պահանջող բարդ, քրտնաջան աշխատանք: Գրանցից գրոխ հանել ի վիճակի է միայն հմուտ, բարձր կազմակերպված սպան: Գրա համար նա ինքը պետք է բարոյապես կալուն ու հետևողական լինի:

Բանավում կողմկտիվի դերն ավելի մեծ է, քան որևէ այլ տեղ: Կողմկտիվի համախմբվածությունը, նրա անդամների միջև գործառույթների հստակ բաշխումը էապես հեշտացնում են աշխատանքը: Սպան պետք է կարողանա իր շուրջը համախմբել ընդունակ և ակտիվ օգնականների, պինվորական կողմկտիվում նրանց առաջքաշումն ու նրանց մեջ ենթակաների նկատմամբ հարգանքի ու վստահության սերմանումը կարևորագույն գործոններ են: Վստահությունն անբաժանելի է պահանջկոտությունից, որը ոչ մի դեպքում չի կարելի շփոթել կոպտության ու դաժանության հետ: Ներապղել շրջապատի վրա չի նշանակում ճնշել մարդկանց, վիրավորել նրանց արժանապատվությունը: Սպան պետք է հիշի, որ կոպտությունը և դաժանությունը առաջ են բերում վախ, ատելություն, մարդկանց թույլ չեն տա-

լին լիովին բացառապես իրենց ընդունակություններն ու հնարավորությունները և կոլեկտիվում առեղծվում է անվստահության, աստիճանապաշտության, աստրաբարձության մթնոլորտ:

Ղեկավարելու ունակությունը սպառի կարևոր գծերից է: Բանակում բազմազան փոխհարաբերությունները հնարավոր չէ կանոնավորել միայն կանոնադրություններով ու որոշումներով, ուստի սպայի համար պակաս կարևոր գործոններ չեն նաև մարդկային հոգատարությունը, նրբազգացությունն ու զգայուն վերաբերմունքը: Չէ՞ որ պիսկորակյան կոլեկտիվներում լինում են տարբեր մարդիկ, ումանք բանակ են գալիս սրտի թելադրանքով՝ ցանկանալով ամբողջ կյանքը նվիրել ռազմական գործին, բայց կան նաև պորակոչով եկածներ, որոնք երապում են երկու տարի հետո վերադառնալ խաղաղ կյանքի: Նրանք առանձնապես ծանր են տանում հարավատներից, բարեկամներից կտրվելը, իրադրության փոփոխությունը: Սպան պետք է կարողանա ամեն ինչ անել, որպեսզի թեթևացնի նրանց հարկադրական հայտնվելը իրենց համար ոչ բնական միջավայրում, բայց և միաժամանակ պետք է աշխատի նրանց սովորեցնել ռազմական գործի ողջ խորիմաստությունը, խոր ու խրթին կողմերը:

Այդ նկատառումով սպան պետք է ոչ միայն սովորեցնի ենթականերին, այլև կարողանա ճանաչել և օգտագործել նրանց ընդունակությունները: Սպայի

համար կարևոր է նաև անձնական օրինակը: Նրա խոսքը գործից չպետք է տարբերվի. ոչ մի բան այնքան չի բարոյալքում կոլեկտիվին, որքան պետի խոսքի և գործի միջև եղած տարբերությունը: Այն ոչ միայն անվստահություն է առաջացնում պետի նկատմամբ, այլև խիստ բացասաբար է անդրադառնում աշխատանքային մթնոլորտի վրա: Խնդիրները արագորեն և արդյունավետ կերպով լուծելու ընդունակությունը դառնում է սպայի գործունեության ավելի ու ավելի կարևոր մասը: Դրա համար էլ ոչ միայն մարտում, այլև ամենօրյա կյանքում նա պետք է իր առջև իրական ժամկետներ ու խնդիրներ դնի:

Մենք հեռու ենք այն մտքից, թե հողվածում կարողացանք արտապղել այն բոլոր հոգեբանական խնդիրները, որոնք բանակում կարող են տեղ գտնել սպա—պիսկոր, սպա—սպա հարաբերություններում: Կյանքը շատ ավելի բարդ ու բազմազան է, և հնարավոր չէ նույնիսկ կռահել, թե հոգեբանական բնույթի ինչ կոր խնդիրներ կարող են առաջանալ բանակում, առավել ևս, որ մեր բանակը նոր-նոր է ձևավորվում և դեռ չունի արմատացած ավանդույթներ: Կարելի է, որ սպաները պատրաստ լինեն կատարելու իրենց պարտքը հայրենիքի հանդեպ, ցանկանան անխնայ կերպով կատարելագործել իրենց վարպետությունը, և այնժամ առաջին հայացքից անլուծելի թվացող շատ խնդիրներ հեշտությամբ կլուծվեն:

ԳՐԱԿԱՆ ՈՒՑՅՈՒՆ

1. А. Ф. Шрамченко. Вопросы психологии в управлении войсками, Воениздат, М., МО СССР, 1973.
2. «Военная психология». Под ред. В. В. Шеляга и др., Воениздат, М., МО СССР, 1972.
3. «Социология». Рук. авт. колл. Г. В. Осипов, М., «Мысль», 1990.

ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ И ПЕДАГОГИКА

ПСИХОЛОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ ВЫБОРА И РАСПРЕДЕЛЕНИЯ КАДРОВ, ОРГАНИЗАЦИИ ВОИНСКИХ КОЛЛЕКТИВОВ

Р. Р. ГАМБАРЯН, подполковник

РЕЗЮМЕ

Основной базой для пополнения Вооруженных сил РА на сегодняшний день еще являются офицеры бывшей советской армии. Происшедшие за последние годы серьезные изменения в общественно-политической жизни страны вызвали необходимость пересмотра личных убеждений в другой системе и среде, принятия новых, нередко более логичных и последовательных решений. Однако, к сожалению, многим кадровым офицерам не удалось изменить себя, преодолеть инерционность мышления. Они предпочитают действовать по-старинке, не сообразуясь с новыми критериями и реалиями. Иногда у них просто не хватает творческой инициативы, диктуемой ходом формирования и развития национальной армии, а это создает психологические проблемы.

Другим каналом пополнения ВС РА является призыв на службу офицеров запаса. Многие из них офицерские звания получили во время учебы в гражданских вузах. Знание теории у них чаще всего не подкреплено практическими навыками, поэтому у них возникают проблемы психологического порядка.

Таким офицерам необходимо помогать в преодолении психологических барьеров, а это, по мнению автора, возможно лишь при условии выработки на научной основе целостной системы психологических требований к армейским кадрам.

Одним из главных требований является способность офицера управлять собой. Поэтому возникает вопрос о необходимости постоянной работы над самим собой, над повышением своего профессионального уровня. Это возможно только при воспитании в себе умения признавать свои ошибки, от которых никто не застрахован. Вопрос в том, чтобы их вовремя осознавать и стремиться исправлять.

У офицеров, имеющих боевой опыт, порой возникает высокомерное отношение к «молодым». Но всегда надо помнить, что участие в боевых действиях — это честь, ни в коем случае не дающая права ставить себя выше окружающих, проявлять к ним высокомерие и нетерпимость.

В армии, как нигде более, велика роль коллектива. Его сплоченность, четкое распределение функций между членами коллектива намного облегчают работу.

Автор считает, что по сложившимся взаимоотношениям воинские коллективы бывают двух типов. В одном случае коллектив складывается на общности положительных интересов, основанных на дружбе, взаимопомощи, понимании общего долга и осознании своих индивидуальных задач и обязанностей в рамках общей системы. Несмотря на то, что в этих коллективах возникают микрогруппировки по отдельным интересам, принципу землячества и т. п., однако в этом случае они лишь способствуют успеш-

ному выполнению общей задачи. Создание такого коллектива во многом зависит от личных качеств офицера.

Другой тип воинского коллектива характеризуется склонностью отдельных военнослужащих к нарушению воинского порядка, уклонению от выполнения своих обязанностей. В таких коллективах возникновение микрогруппировок усугубляет нездоровый морально-психологический климат, становится дестабилизирующим фактором. Работа с подобными коллективами требует от офицеров специальной психологической подготовки, умения, терпения и времени.

Автор статьи подчеркивает, что офицер должен уметь собирать вокруг себя способных и активных помощников, умело опираться на них в своей работе по поддержанию здорового морально-психологического климата и устранению негативных явлений, растить у них доверие и уважение к подчиненным. Доверие неотделимо от требовательности, которую при этом в коем случае нельзя смешивать с грубостью и жестокостью, порождающими страх, ненависть и трусость, которые резко снижают боеспособность армии.

При работе в коллективе очень важным является и фактор личного примера офицера. Его слова не должны расходиться с делом, так как в этом случае может возникнуть недоверие к начальству. Офицер должен уметь четко ставить конкретные задачи и назначать реальные сроки их выполнения не только в бою, но и в повседневной жизни. Авторитет офицера среди военнослужащих является залогом успешного руководства воинским коллективом.

Автор отмечает необходимость правильного определения личностных ценностей и обращает внимание командиров на важность овладения основами военной психологии и педагогики для успешной работы с личным составом, славивания воинских коллективов, формирования в них здорового морально-психологического климата, нацеленного на повышение боеготовности и боеспособности национальной армии РА.

MILITARY PSYCHOLOGY AND PEDAGOGY

PSYCHOLOGICAL ASPECTS OF THE CHOICE AND DISTRIBUTION OF PERSONNEL AND THE ORGANIZATION OF MILITARY BODIES

R. R. GAMBARIAN, Lieutenant-Colonel

SUMMARY

The source for the reinforcement of the Armed Forces of the Republic of Armenia is the officers of the former Soviet Army. Lately, important changes in the socio-political life of the country uncovered the necessity to reconsider personal convictions in a different system and environment: new-often more logical and advanced ideas-had to be accepted. Many regular officers, however, prefer to act in the old ways: they sometimes fail to change so as to act according to the new conditions. They sometimes experience a lack of creative skills which have become necessary in

the course of the development of a national army. This creates psychological problems.

Another channel for the reinforcement of the Armed Forces of the Republic of Armenia is the call-up of officers in reserve. Many such officers receive their rank while studying at higher educational establishments. Their theoretical knowledge is very often unconsolidated by practice. Therefore, they also have psychological problems. These officers need help to overcome such barriers. The author thinks that the army should have an integrated system of psychological demands of army personnel.

One of the main requirements is the officer's ability to control himself. This calls for continuous self-improvement as well as the improvement of professional skills. There must be a willingness to admit mistakes since no one is immune from them. The question is to identify them in time and try to put them right.

Officers who have had combat experience may display arrogance towards the «young». They must understand that participation in hostilities is an honour which by no means gives them the right to feel superior.

The author is of the opinion that, given established relationships, military bodies may be of two kinds. In one case, the group is formed on the basis of common positive interests: friendship, mutual aid and the sharing of common duties. The creation of such a group largely depends on the commanding officer: even though some small groups may appear within the body based on social patterns—such as common birthplace and so on. Yet they, too, only help to fulfill common tasks.

Another type of military body is formed when some servicemen are prone to breaches of military order. They avoid completing their duties and put the blame on others. In this situation, small groups become a negative factor against which officers have to struggle in order to prevent breaches of order. Working with such groups demands skill, patience and time.

In the army, more than anywhere else, the group has a great role. Its solidarity is based on a clear-cut distribution of functions among members of the community. This greatly facilitates the work to be done.

The author of the article emphasizes the fact that the officer must be able to gather capable and energetic assistants: cultivating in them confidence and respect for subordinates. Confidence is an inseparable part of exactness which must not be confused with rudeness and cruelty which breed fear, hatred and cowardice. It is important for the officer to set a good example. His words must conform to his deeds in order not to arouse mistrust of leaders. The officer must set realistic tasks—including the date of their fulfilment—not only in battle but in everyday life too. The authority of the officer among servicemen guarantees the successful management of the community.

In conclusion, the author draws the commander's attention to the importance of mastering the basics of military psychology and the pedagogy for successfully dealing with all personnel. This encourages the creation of a healthy, normal psychological atmosphere in the community. It also maintains combat preparedness and efficiency at proper levels.

ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԵՏԱՆՈՒ ՄԱՐՏԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՄՀԲ-ի (ՄՀԳ-ի) ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՆՏԱՌԱՍՅՈՒՄՆ ԵՏՂԱՆԲՈՒՄ

Վ. Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, գեներալ-մայոր

1. ՀՐԵՏԱՆՈՒ ԿԱԶՄԸ
ԵՎ ՆԱԽԱՆՇԱՆԱԿՈՒՄԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հրետանին պորտառապա է և հանդես է գալիս որպես հակառակորդի կրակային խոցման հիմնական միջոցներից մեկը, որպես մոտոհրաձգային և տանկային պորքերին կրակային շջակցությունն ցույց տալու առավել արդյունավետ միջոց: Հրետանին օժտված է հրաձգության մեծ հեռահարությամբ, հարվածների ու կրակի հզորությամբ և ճշգրտությամբ, լայն պորաշարժունակությամբ, իրադրության և եղանակի ցանկացած պայմաններում հակառակորդին հանկարծակի և արագ կրակային հարված հասցնելու ունակությամբ:

Հրետանին նախանշանակված է խոցելու համար հակառակորդի միջուկային հարձակման միջոցները (ՄՀՄ) և քիմիական հարձակման միջոցները, բարձր ճշգրտության զենքի համակարգերը, հրետանին, տանկերը, ՀՄՄ-ները, հակառանկային և կրակային այլ միջոցները, ուղղաթիռները վայրէջքի հրապարակներում, կենդանի ուժը, կառավարման կետերը (ԿԿ), ՀՕՊ-ի և ռադիոէլեկտրոնային միջոցները, կործանելու նրա ամրաշինական կառույցները, դիստանցիոն եղանակով ականապատելու տեղանքը, իրականացնելու լուսային ապահովում, առաջացնելու աերոպոլային ծածկույթ (ծխածածկույթ) և կատարելու այլ խնդիրներ:

Ժամանակակից պատերազմում կրակային գերազանցություն կարելի է ստանալ միայն պորտառապաների այն

բոլոր մարտական միջոցների համատեղ կիրառմամբ, որոնք գտնվում են համապորային հրամանատարի տրամադրության տակ: Դրա հետ մեկտեղ կրակային գերազանցության նվաճումն ինքնուրույն օպերատիվ խնդիր է, որի լուծման կարգն ու եղանակները պետք է դառնան մարտի (օպերացիայի) վարման վերաբերյալ համապորային հրամանատարի որոշման մի բաղկացուցիչ մաս:

Հրետանու դերն ու նշանակությունը ծանրակշիռ են մնում նաև պինված պայքարի վարման ժամանակակից պայմաններում: Համույիչ լինելու համար բերենք մի օրինակ:

Ըստ արտասահմանյան մամուլի հաղորդման Պարսից ծոցի գոտում տեղի ունեցած պատերազմի ընթացքում օպերացիայի հարյուրժամյա ցամաքային փուլում բազմազգ ուժերի հրետանու կրակից Իրաքի պորքերի կրած կորուստները էապես գերազանցում էին այն կորուստները, որ պատճառեցին նրանց ավիացիայի հարվածները 38 օրվա ընթացքում¹: Այսպես, իրաքյան դիվիզիաներից մեկում անձնական կազմում և սպառապիւնության մեջ հրետանու կրակի և առաջին հերթին «ՄՈՍ» ՀԿՌՀ-ի (համապարկային կրակի ռեակտիվ համակարգ) հարվածների պատճառած կորուստները կազմում էին 87 տոկոս, իսկ ավիացիայի պատճառած կորուստները՝ միայն 13 տոկոս: Զգալի վնաս է հասցվել նաև մյուս պորտառապաներին: Իրաքյան գնդերից մեկի հրամանատարը հայտարարել է, որ գրոհի հրետանային նախապատրաստության ժամանակ Մեծ Բրի-

¹Stu «Armed Forces Journal International», 1991, May, p. 37.

տանիայի 4-րդ պրահատանկային բրիգադի գործողությունների ուղղությունում իր գունդը կորցրել է անձնական կազմի 90 տոկոսը և համարյա ամբողջ մարտական տեխնիկան²:

«Նոր տեխնոլոգիաների պատերազմում» գործերի կրակային աջակցության ժամանակ հրետանին կրկին դրսևորեց իր մարտական մեծ հնարավորությունները: «Փոթորիկ անապատում» օպերացիայում նրա կիրառության փորձը ցույց տվեց, որ մոտոհեռակազորային (տանկային) ստորաբաժանումների հրամանատարները պետք է իրենց տրամադրության տակ ունենան բավարար քանակությամբ հրետանի՝ անկախ ընդհանուր աջակցության միջոցներից: Միայն դա կարող է նրանց համար ապահովել մարտավարական մեծ շարժունակություն և ինքնուրույնություն մարտական գործողությունների վարման ժամանակ:

Այսպիսով, Պարսկյ ծոցի գոտում տեղի ունեցած պատերազմի արդյունքները հիմք են տալիս վերագնահատելու հրետանու դերը ժամանակակից օպերացիայում (մարտում) և հաստատում են, որ այն առաջվա նման մնում է որպես վճռական գործոն ցամաքային գործերի կրակային հզորության մեջ, դրանց կրակային աջակցության հուսալի միջոց:

ՀՀ ՁՈՒ-ի երիտասարդ հրետանավորներն արդեն կուտակել են հրետանու մարտական կիրառման որոշակի փորձ: Հայաստանի սահմանների պաշտպանությանը, մի շարք մարտերի և օպերացիաների հաջող տնցկացմանը շատ բանով նպաստել է հրետանու հմուտ կիրառումը:

Սակայն մեր հրետանու հետագա վարգապումը և մարտական խնդիրների համար նրա պատրաստության կատարելագործումը հիմնականում կախված են այն բանից, թե նրա հրամակայվող որքանով է տիրապետում հրետագիտությանը և ինչ վիճակում է գտնվում հրետանու կոլեկտիվի մասը:

Պրակտիկան ցույց է տալիս, որ

² Slu «Allgemeine Schweizerische Militärschrift», 1992, N 5, S. 230-234.

պաշտպանության մեջ մեծ հաջողությունների է հասնում այն համապարային հրամանատարը, որը քրտնաջան կերպով աշխատում է հրետանային ստորաբաժանումների պատրաստության վրա, մշտական մարտական պատրաստության մեջ նրանց պահպանման վրա, հոգացողություն է ցուցաբերում անձնական կազմի նվազմամբ, խնրապես գիտի հրետանու կիրառման սկզբունքները, կարողանում է հստակորեն և ժամանակին խնդիրներ դնել և վերահսկել դրանց կատարումը:

Հրետանին բաղկացած է թնդանոթային, ռեակտիվ, հակատանկային հրետանու, ակասանետների, հակատանկային կառավարվող հրթիռների (ՀՏԿՀ) միավորումներից, գորսամակրից, ստորաբաժանումներից, ինչպես նաև պրամասերի սպառազինման համայնքների և հրետանային հետախույզության ստորաբաժանումներից:

Հրետանին ընդհանրապես բաժանվում է երեք տեսակի՝

- կենտրոնական ենթակայության հրետանի (գլխավոր հրամանատարության ղեկավար),
- բրիգադի (գնդի) հրետանի,
- գումարտակի հրետանի:

Կենտրոնական ենթակայության (ԿԵ) հրետանին կոչված է լուծելու խնդիրներ ի շահ ՁՈՒ-ի, ինչպես նաև գլխավոր ուղղությունում գործող համապարային միավորումների ու պրամասերի ուժեղացման համար: Այն բաղկացած է հրետանային միավորումներից և պրամասերից, հեռահար թնդանոթային, ծանր հատրիցային, ռեակտիվ և հակատանկային (ՀՏ) հրետանիներից:

Գնդի (բրիգադի) հրետանին նախատեսված է լուծելու համար խնդիրներ ի շահ գնդի (բրիգադի), ինչպես նաև գլխավոր ուղղություններում գործող գումարտակների ուժեղացման համար: Այն բաղկացած է գնդի (բրիգադի) հրամանատարի անմիջական ենթակայության տակ գտնվող հատրիցային, ՀՏ հրետանու, ՀՏԿՀ-ի, սկանանետների (ՄՄ-ների) ստորաբաժանումներից:

Գումարտակի հրետանին նախատեսված է լուծելու համար խնդիրներ ի շահ գումարտակի: Այն բաղկայած է գումարտակի հրամանատարի ենթակայության տակ գանվող ակամանիտների (հրանոթների), ՀՏ հրետանու և ՀՏԿ-ների ստորաբաժանումներից:

Համագործակցություն միավորման (գործաժամ) ստորաբաժանման հրամանատարը պատասխանատու է ենթակա հրետանու մարտական պատրաստության համար:

2. ՀՐԵՏԱՆՈՒ ԽՆԳԻՐՆԵՐԸ ՄՀԲ-Ի (ՄՀԳ-Ի) ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ, ԼԵՌՆԱՆՏԱՌԱՅԻՆ ՏԵՂԱՆՔՈՒՄ ԵՐԱ ՄԱՐՏԱԿԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄՀԲ-ի (ՄՀԳ-ի) հրետանու խնդիրները պաշտպանությունում, լեռնաանտառային տեղանքում նրա կիրառման առանձնահատկությունները բերվում են ստորև.

— պաշտպանությունում հրետանին հակառակորդի գորքերին խոցում է պաշտպանության հեռավոր մասուղյակներում, դեպի առջևի եզր նրանց շարժման ժամանակ և ծավալման բնագծերում (հարձակման համար ելակետային շրջաններում).

— ճնշում է հակառակորդի հրետանին, զենիթային, ռադիոէլեկտրոնային միջոցները և կառավարման կետերը.

— մասնակցում է տանկերի և հետևազորի գրոհների հետմղմանը.

— ճնշում և ոչնչացնում է հակառակորդին, երբ նա սեպրվում է պաշտպանության մեջ.

— խոցում է նրա օդային դեասնտը.

— իրականացնում է յուրային գորքերի երկրորդ էջերունների (ռեպերվների) հրետանային նախապատրաստությունը և աջակցում է դրանց հակագրոհին:

Բացի դրանից, հրետանին աջակցում է առաջավոր դիրքերը (ապահովման գոտին) պաշտպանող ստորաբաժանումներին (գորամասերին) և

մարտական պահպանության համար առանձնացված ստորաբաժանումներին, կրակով ծածկապաշտպանում է ստորաբաժանումների և գորամասերի թևերը, նրանց միջակայքները, ինչպես նաև հակառակորդի միջուկային (քիմիական) հարվածների հետևանքով առաջացած ճեղքերը, կատարում է դիտանցիոն ականապատում:

ՄՀԲ-ի և ՄՀԳ-ի հրետանին լեռնային պայմաններում պաշտպանության ժամանակ լուծում է հիմնականում նույն խնդիրները, ինչ որ հարթակայության տեղանքում պաշտպանության ժամանակ: Բայց պետք է հաշվի առնել, որ այս դեպքում խոցման համար նախատեսված նշանակետերի մի պզույ մասը կգտնվի հակադիր կողմի թեք լանջերին, կիրճերում, նեղ հովիտներում և այլ թաքնված տեղերում, ինչպես նաև լեռների գագաթներին ու բարձունքներին: Այդ պայմաններում հակառակորդի կրակային խոցման համար կիրառվում է առավելապես հատիքիցային հրետանու և ակամանեաների կրակը:

Լեռնային պայմաններում պաշտպանության ժամանակ դիվիզիոնը (գումարտակը) կրակ է նախապատրաստում հակառակորդին խոցելու համար պաշտպանության առջևի եզրի մասուղյակներում, թևերում և հեռավորների միջակայքներում, բարձունքների դեպի հակառակորդի կողմը նայող լանջերին, ճանապարհների հանգույցներում, կիրճերի, թունելների, լեռնային հովիտների, նեղ ձորակների ելքերում, հարմար գետանցատեղերում, խնձահովիտների անցատեղերում, ինչպես նաև այնպիսի ուղղություններում, որոնք հակառակորդը կարող է օգտագործել շրջանցման համար:

Լեռներում պաշտպանության ժամանակ հրետանու խմբավորում պետք է ստեղծել՝ հաշվի առնելով այն ուղղությունները, որոնք կարող են հնարավորություն ընձեռել հակառակորդին խոցող ուժերով հարձակման համար: Այդ ուղղություններում պետք է կենտրոնացվի ՄՀԲ-ի և ՄՀԳ-ի կրակային

միջոցների հիմնական վանգվածը: Գրծվարամատչելի տեղամասերի պաշտպանության համար առանձնացվում են հրետանու սահմանափակ քանակով ուժեր ու միջոցներ: Լեռնային պայմաններում հրետանու համար ԿԳ-եր (կրակային դիրքեր) ընտրվում են ստեղծվող խմբավորման և նրա լուծելիք խնդիրների հաշվառումով:

Հրետանային դիվիզիոնը կարող է մարտակարգ գրավել՝ մարտկոցների միջև զգալի հեռավորությամբ: Հրանոթների (ՀՏԿՀ-ների կայանքների) համար ԿԳ-երն ընտրվում են ճամփեկրերին, անտառեկրերին, անտառուղիներում և բացատների եկրերին այն հաշվով, որ ապահովվի հրաձգության առավել մեծ հեռահարություն:

Հրետանային փորձասանի և ստորաբաժանումների հրամանատարական դիտակետերը (ՀԴԿ) և դիտակետերը (ԴԿ) տեղավորվում են այնպես, որ ապահովվի բոլոր վտանգավոր ուղղությունների, հատկապես մերձավոր մատուցների տեսանելիությունը՝ լեռնային պայմաններում առաջադիր և կողային ԴԿ-երի լայն օգտագործմամբ:

Առաջին շարակարգի (1:շեղուն) բրիգադների և գնդերի հակատանկային ռեզերվները պաշտպանության ժամանակ պետք է ստեղծել տանկավտանգ ուղղություններում: Եթե պաշտպանության գոտում կա լեռնաշղթայով, խոր կիրճով կամ այլ կերպ իրարից մեկուսացած երկու տանկավտանգ ուղղություն, ապա նպատակահարմար է բրիգադում ստեղծել երկու հակատանկային ռեզերվ:

Բրիգադի հակատանկային ռեզերվի համակենտրոնացման շրջանները նշանակվում են այն ճանապարհների հանգույցներին մոտ, որոնք կարող են ապահովել ռեզերվի փորաշարժը դեպի այլ տանկավտանգ ուղղություններ: Լեռներում պաշտպանության ժամանակ հրետանու փորաշարժը կատարվում է մեկ ուղղության սահմաններում ճակատով և խորությամբ, իսկ մյուս բոլոր ուղղություններում՝ միայն խորքից:

Լեռներում հրետանիով հակառակորդի կրակային խոցման պլանավորման ժամանակ նախատեսվում են՝

— հակառակորդի հրետանային և ականանետային մարտկոցների խոցում,

— հակառակորդի կենդանի ուժի և կրակային միջոցների խոցում հակադիր լանջերին, կիրճերում, հովիտներում և այլ թաքնված տեղերում,

— յուրային փորքերի հենակետերի մատուցների և այլ հենակետերի միջակայքների ծածկապաշտպանություն հրետանու կրակով:

Կրակի համակարգը պետք է առանձնապես սերտ կապված լինի ճարտարագործական (ինժեներային) արգելափակումների (փայտի կուտակների, ականապատ դաշտերի և այլն) և բնական խոչընդոտների համակարգի հետ, ընդ որում բնական խոչընդոտները տեղանքի տվյալ պայմաններում կարևոր նշանակություն են ստանում:

Լեռներում հրետանու կրակի համակարգի կազմակերպման ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվում այն բանի համար կրակի նախատարատությունը, որ խոցվեն հակառակորդի կենդանի ուժը և կրակային միջոցները պաշտպանության առջևի ելքի մոտ, պաշտպանության շրջանների թևերում և հենակետերի միջակայքներում, բարձունքների դեպի հակառակորդի կողմը նայող լանջերին, կիրճերում, հովիտներում և այլ թաքնված տեղերում, ինչպես նաև բազմաշերտ թևային և խաչաձև կրակի ստեղծմանը ճակատից անխոցելի տեղամասերի ծածկապաշտպանության համար:

Լեռնային տեղանքը նպաստում է բազմաշերտ և խաչաձև կրակի ստեղծմանը առջևի ելքի մատուցներում, հենակետերի միջակայքներում, կցվանքներում և թևերում, ինչպես նաև պաշտպանության խորքում:

Բազմաշերտ թևային և խաչաձև կրակի ստեղծման համար նպատակահարմար է լայնորեն օգտագործել ուղիղ նշանառությամբ հրաձգության համար առանձնացված հրանոթները և

ՀՏԿՀ-ների կայանքներ, որոնք պետք է տեղադրել «յեպի հավառակորդի կողմը նայող լանջերին» ըստ բարձրության շարակարգված, և սարերի կատարներին:

Ճակատից անխոցելի տեղամասերում տեղափոխված նշանակետերի վրա նախատեսվում է ուղղել հարևան տեղամասերում գտնվող մարտկոցների կամ առանձին հրանոթների (ՀՏԿՀ-ների կայանքների) թևային կրակը:

Հրետանու մարտական գործողությունների նախապատրաստման ժամանակ պետք է հաշվի առնել օդերևութաբանական պայմանների հանկարծակի փոփոխությունների հնարավորությունը, ինչպես նաև հորդառատ անձրևների և ուժեղ ձնհալի շրջանում՝ ցամաքած գետերի հունների, հեղեղատների, ձորակների ջրածածկման, հողի և ձյան փլակուտակների առաջացման հնարավորությունը:

Մարտի ընթացքում հրետանու տարաշարժը (մասեր) պգալիորեն դժվարանում է, խակ նրբեմն էլ բորբոքվին անխրագործելի է դառնում: Այդ նկատառումով էլ հրետանու ըստ ուղղությունների սկզբնական խմբավորումը հատկապես կարևոր նշանակություն է ստանում լեռներում պաշտպանության ժամանակ: Գնդի հրետանին օգտագործվում է առավելապես այն նշանակետերը ուղիղ նշանառությամբ խոցելու համար, որոնք անխոցելի են փակ ԿԳ-երից հրետանու կրակի հանդեպ, ինչպես նաև առջևի եզրի մոտ և խորքում կրակ վարելու համար: Ուղիղ նշանառությամբ հրաձգության համար առանձնացված հրանոթները, ՀՏԿՀ-ների կայանքները տեղադրվում են պաշտպանության խորքում տարբեր բարձրությամբ և շարակարգված այնպես, որ ապահովվի թևային և խաչաձև կրակի վարումը պաշտպանության առջևի եզրի առաջ և խորքում:

Լեռներում հրետանային հետախույզության կազմակերպման ժամանակ առանձին դժվարություն է ներկայացնում ԳԿ-երի համար տեղի ընտրությունը:

Փորձը ցույց է տալիս, որ դիտարկման համար հարմար առանձին բարձունքների վրա, եթե չկա կառավարման կետերի տեղադրման համար շրջանների կենտրոնացված բաշխում, սովորաբար կուտակվում են հետախույզության մեծաքանակ ուժեր և միջոցներ: Գա բացասաբար է սպդում ԳԿ-երի դիմացկունության և հետախույզության արդյունավետության վրա: ՈՐստի ՄՀԲ-ի (ՄՀԳ-ի) շտաբը և հրետանու պետք պետք է ենթակա հրամանատարներին ցուցում տան, թե նրանք ինչ ԳԿ-եր և որտեղ պետք է ունենան:

Հաշվի առնելով, որ ռազմական գործողությունների մեր թատերաբեմում կան անտառային պանզավածներ, անհրաժեշտ ենք համարում համառոտակի անդրադառնալ անտառային պանզավածում պաշտպանության ժամանակ հրետանու գործողություններին:

Անտառային պայմաններում պաշտպանության ժամանակ ուժերի և միջոցների բաշխումը, որպես կանոն, կատարվում է անհավասարաչափ: Հիմնական սպառնալի ուղղություններում ստեղծվում են ճարտարագործական առումով լավ սարքավորված և կրակային միջոցներով լավ հագեցած ՀԿ-եր: Այդ ուղղություններում պաշտպանության համար առանձնացվում են ՄՀԲ-ի (ՄՀԳ-ի) հիմնական ուժերն ու միջոցները և ուժեղացման միջոցների մեծ մասը: Մյուս ուղղություններում օգտագործվում է պաշտպանության ուժերի և միջոցների փոքր մասը: Իսկ որոշ (դժվար անցանելի) տեղամասեր կորքերն ընդհանրապես չեն պաշտպանում. դրանց նկատմամբ կազմակերպվում է միայն հետախույզություն և դիտարկում:

Անտառում պաշտպանության մեջ հրետանու մեծ մասը տրվում է առաջին շարակարգի ստորաբաժանումներին և կիրառվում է առավելապես ուղիղ նշանառությամբ հրաձգության համար՝ վաշտի և դասակի՝ շրջանաձև պաշտպանության պատրաստված հենակետերի համակարգում:

Հակատանկային ռեզերվներն ըս-

տեղծվում են, ինչպես սովորական պայմաններում:

Տանկի համար մասշեղի տեղանքում ՄՀԳ-ի պաշտպանությունում ՀՏԿՀ-ի հատիքային մարտկոցը կարող է տրվել առաջին շարակարգի գումարտակներին, ամեն դասակին մեկ հատ, հակառակորդի՝ ճանապարհների, անտառուղիների երկայնքով գործող առանձին րա-հսպատ նշանակետերի խոցման համար:

Անտառում պաշտպանության ժամանակ հրետանու համար նախատեսված փակ ԿԳ-երն ընտրվում են բացատներում, անտառուղիներում, ծառահատման վայրերում, երիտասարդ անտառամասերում կամ թփուտներում: Յուրաքանչյուր ԿԳ-ի ընտրության անհրաժեշտ պայման է այն ամենավորք թվով նշանառությունների ճշգրիտ որոշումը, որոնք կապահովեն դրված խնդիրների կատարումը և կրակով լայն անարաշարժի հնարավորությունը: Բաց ԿԳ-երի համար տեղ է ընտրվում անտառուղիների խաչմերուկներում, անտառեզրերում և բացատներում: Առանձին հրանոթներ և ՀՏԿՀ-ների կայանքներ տեղադրվում են ճանապարհների կտրուկ շրջադարձերից հետո՝ հակառակորդի տանկերի և այլ շարժվող նշանակետերի խոցման համար:

Տեղանքի լավագույն տեսանկյունային համար ԿԳ-երը կարող են ասրքավորվել ծառերի վրա կամ հատուկ կառուցված աշտարակների վրա:

Անտառում պաշտպանության ժամանակ հրետանու կառավարումը կենտրոնացվում է գլխավոր ուղղությունում: Այդ պայմաններում հրետանու կրակի կառավարման գործում լայն նախաձեռնության հնարավորություն է ընձեռվում մարտկոցների (դասակների) և դիվիզիոնների հրամանատարներին, որոնք կրակային խնդիրները կատարում են՝ համագործակցելով աջակցությունն ստացող վաշտերի և գումարտակների հրամանատարներին հետ:

Հաստիքային և գնդերին տրվող հրետանին տեղաբաշխվում է գնդերի պաշտպանության տեղամասերի սահ-

մաններում, որպես կանոն՝ առաջին դիրքի սահմաններում և առաջին ու երկրորդ դիրքերի միջև, առջևի երկրից 2—4 կմ հեռավորության վրա:

Պաշտպանության հեռավոր մատուցներում հակառակորդի խոցման համար կարող են նշանակվել ժամանակավոր ԿԳ-եր՝ տեղավորված առջևի երկին մոտ: Գեղյի մյուս ուղղությունները տարաշարժ կատարելու համար և այն դեպքի համար, եթե հակառակորդը խրվի պաշտպանության խորքը, պատրաստվում են ԿԳ-երի պահեստային շրջաններ և դեպի դրանք տանող տարաշարժի ուղիներ:

ՀՏ ռեզերվի կենտրոնացման համար շրջաններ են նշանակվում տանկավտանգ ուղղություններում՝ բնական լավ քողարկում ունեցող տեղերում, այն ճանապարհների հանգույցներին կամ երթուղիներին մոտ, որոնք տանում են դեպի ծավալման բնագծերը: Գեղյի ՀՏ ռեզերվի համար կենտրոնացման հիմնական շրջանը նշանակում են առաջին և երկրորդ դիրքերի միջև կամ երկրորդ դիրքում: Նրա համար կենտրոնացման պահեստային շրջաններ կարող են նշանակվել կենտրոնացման հիմնական շրջանից 3—5 կմ դեպի մի կողմ կամ հետևում: Գեղյի ՀՏ ռեզերվի ծավալման բնագծեր են նշանակվում տանկավտանգ ուղղություններում՝ առաջին դիրքի սահմաններում, առաջին ու երկրորդ դիրքերի միջակայքում և երկրորդ դիրքում, ինչպես նաև գեղյի պաշտպանության տեղամասերի թևերում, ճակատի առջև և գեղյի երկրորդ շարակարգի (ռեզերվի) հակագրոտի համար ծավալման բնագծերի թևերում ու ճակատի առջև: Ընդամին ծավալման բնագծերը նշանակվում են այն հաշվով, որ եթե գեղյի ՀՏ ռեզերվը գրավի դրանք, ապա դրանով ապահովվի նրա համագործակցությունը տանկերի դեմ պայքարի մյուս միջոցների հետ (ՀՄՄ, ՋՓ):

Պաշտպանությունում հակառակորդի կրակային խոցումը կարող է իրականացվել ըստ հետևյալ շրջանների.

1. կրակային (հրետանային) հակա-
նախապատրաստություն,

2. հակառակորդի վորքերի առաջ-
խաղացման և ծավալման կրակային
(հրետանային) կասեցում,

3. հակառակորդի գրոհի կրակային
(հրետանային) հետմղում,

4. կրակային (հրետանային) ա-
ջակցություն պաշտպանվող վորքերին
պաշտպանության խորքում,

5. հակառակորդի կրակային (հրե-
տանային) խոցում հակազորոհների կամ
հակահարվածների ժամանակ:

Համառոտակի բնութագրենք հա-
կառակորդի կրակային խոցման յուրա-
քանչյուր շրջանը:

1. *Հրետանային հակաճախապատ-
րաստությունը* կազմում է հակառա-
կորդի կրակային խոցման հիմքը: Այն
կատարվում է կենտրոնացող կամ հար-
ձակման պատրաստված հակառակորդի
գլխավոր խմբավորման ուղղությամբ
կլման շրջաններում, նրա հարձակումը
խափանելու նպատակով:

Հրետանային հակաճախապատ-
րաստությունը պետք է կանխի հակա-
ռակորդի կրակային նախապատրաս-
տությունը:

2. Հակառակորդի վորքերի առաջ-
խաղացման և ծավալման *հրետանային
կասեցումն* իրականացվում է խորքում,
հակառակորդի կողմից հարձակման
համար ելման դիրքի գրավման դեպ-
քում, սկսված առաջխաղացման պարզու-
մով և շարունակվում է մինչև հակա-
ռակորդի անցումը գրոհի: Այն նպատակ
ունի կանգնեցնելու և կազմալուծելու
հակառակորդի ծավալումը, խախտելու
վորքերի կառավարումը և իջեցնելու
նրա կրակային նախապատրաստու-
թյան արդյունավետությունը:

3. Հակառակորդի գրոհի *հրետանա-
յին հետմղումը* փակ ԿԳ-երից վանգվա-
ծային կրակով ուղիղ նշանառությամբ
կազմում է հակառակորդի, ամենից
առաջ նրա տանկերի կրակային խոցման
հիմքը: Այս շրջանում առավելագույն
չափով օգտագործվում են հրետանու
հնարավորությունները հակառակոր-

դին խոցելու համար անմիջականորեն
առջևի եզրի առաջ և առաջին դիրքի
համար մղվող պայքարում՝ լայնորեն
կիրառելով կրակի տարբեր տեսակներ
(ՉԿ, ԿԿ, ՇԽԿ և այլն):

Գրոհի հրետանային հետմղումը
կատարվում է մինչև առաջին դիրքի
համար մղվող մարտի սովորաբար:

4. *Պաշտպանվող վորքերի հրետա-
նային աջակցությունը* նպատակ ունի
խոցման այլ միջոցների հետ համագոր-
ծակցությամբ պաշտպանության մեջ
սեպված հակառակորդին պատճառելու
առավելագույն կորուստներ և կասեց-
նելու նրա ճեղքումը դեպի պաշտպա-
նության խորքը:

5. Այն շրջանում, երբ կատարվում է
*հակառակորդի հրետանային խոցում
հակազորոհների ժամանակ*, հրետանին
լուծում է խորքում հակառակորդի կրա-
կային խոցման և նոր ի հայտ բերված
նշանակետերի՝ ուրիշ ուղղություննե-
րից և խորքից խոցման խնդիրները:

3. ՀՐԵՏԱՆՈՒ ԿՐԱԿԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ (սխեմաներ 1 և 2)

Մարտում կրակային խնդիրներ
կատարելու ժամանակ հրետանային
ստորաբաժանումները կարող են ինք-
նուրույն կերպով կիրառել կրակի հե-
տևյալ տեսակները՝

1. կրակ առանձին նշանակետի վրա,

2. կենտրոնացված կրակ,

3. միակի անշարժ և շարժուն խա-
փանիչ կրակ,

ինչպես նաև կարող են հրետանային
խմբի կազմում կամ նրա հետ մեկտեղ
ներգրավվել վարելու՝

4. վանգվածային կրակ,

5. կրակի հաջորդական կենտրոնացում,

6. կրակապատնեշ,

7. շարժուն կրակային գոտի,

8. խոր անշարժ և կրկնակի խափա-
նիչ կրակ:

Համառոտակի բնութագրենք հրետա-
նային կրակի յուրաքանչյուր տեսակը:

1. *Կրակն առանձին նշանակետի
վրա* ինքնուրույն կերպով վարվում է

մարտկոցի, դասակի կողմից կամ հրանոթով (ակտանանետով, ՄՄ-ով, ՀՏԱՀ-ի կայանքով), փակ ԿԳ-երից կամ ուղիղ նշանառությամբ:

2. *Կենտրոնացված կրակը* (ԿԿ) միաժամանակ մի քանի դիվիզիոններ (մարտկոցներ) վարում են շատ կարճ ժամկետում խոցելու համար մեկ մեծածավալ նշանակետ (կամ տեղամաս կազմած մի խումբ նշանակետեր):

3. *Ձանգվածային կրակը* (ՁԿ) վարում է միաժամանակ ամբողջ հրետանին կամ նրա մեծ մասը՝ խնդիր ունենալով կարճ ժամկետում վճռակա նորեն խոցելու մեկ կամ մի քանի կարևոր օբյեկտ (նշանակետ): Ձանգվածային կրակի յուրաքանչյուր շրջանին տրվում է մի որևէ մոլորակի անուն («Մարս», «Յուպիտեր» և այլն), իսկ նրա մեջ մտնող յուրաքանչյուր նշանակետին՝ համար ըստ կարգի (1, 2, 3, 4 և այլն):

4. *Անշարժ խափանիչ կրակը* (ԱԽԿ) կիրառվում է հակառակորդի հետևազորի և տանկերի գրոհների (հակազրոհների) հետմղման համար: Ընդամին հրետանին ստեղծում է հոծ հրաձածկույթ մեկ բնագծի վրա (միակի ԱԽԿ) կամ միաժամանակ մի քանի բնագծի վրա (խոր ԱԽԿ):

Մեկ բնագծի վրա կրակի վարման համար հատկացվում է մեկ հրանոթին ոչ ավելի քան 50 մ: Բնագծերի միջև եղած հեռավորությունը կախված է հակաօսկորդի գրոհի արագությունից (նրա գրոհող մարտակարգի խորությունից) և խոր ԱԽԿ-ի դեպքում կարող է լինել 200 - 300 մ: ԱԽԿ-ի բնագծերին պայմանականորեն տրվում են ծառերի անուններ («Թխիկ», «Կեչի», «Ալպյուխ» և այլն), իսկ խոր ԱԽԿ-ի յուրաքանչյուր բնագծին, սկսած ամենահեռու գտնվողից՝ համար ըստ կարգի (1, 2, 3, 4 և այլն): ԱԽԿ-ի մերձավորագույն բնագծի հեռավորությունը յուրային պորքերից կախված է նրանց թաքնվածության աստիճանից և կարող է լինել 200—400 մ:

Կրակը բացվում է այն պահին, երբ հակառակորդի հետևազորն ու տանկերը

մոտենում են ԱԽԿ-ի բնագծին, և վարվում է, այնքան ժամանակ, մինչև հետևազորը կտրվի տանկերից և դադարեցնի գրոհը:

5. *Շարժուն խափանիչ կրակով* (ՇԽԿ) ստեղծվում է հոծ հրաձածկույթ մեկ բնագծի վրա (միակի ՇԽԿ) կամ միաժամանակ երկու բնագծի վրա (կրկնակի ՇԽԿ) հակառակորդի գրոհող (հակազրոհող) տանկերի (ՀՄՄ-ների, ՋՓ-ների) ճանապարհին, ընդ որում այդ հրաձածկույթը, կրակի գոտույց տանկերի (ՀՄՄ-ների, ՋՓ-ների) դուրս գալու համեմատ, հաջորդաբար փոխադրվում է այլ բնագծերի վրա: Միակի ՇԽԿ-ի բնագծերի միջև հեռավորությունը 400—600 մ է, կրկնակի ՇԽԿ-ի բնագծերի միջև՝ 150—200 մ, իսկ այդպիսի բնագծերի լամբերի միջև՝ 400—600 մ: Տեղամասի լայնությունը նշանակվում է մեկ հրանոթին (ականանետին) 25 մ հաշվով:

Յուրաքանչյուր տանկավտանգ ուղղությունում բնագծերի խմբին (ՇԽԿ-ի գոտուն) տրվում է որևէ գիշատիչ կենդանու անուն («Առյուծ», «Վագր» և այլն), իսկ յուրաքանչյուր բնագծին, սկսած ամենահեռու գտնվողից՝ համար ըստ կարգի (1, 2, 3 և այլն): Միակի ՇԽԿ-ի դեպքում կրակը բացվում է այն պահին, երբ հակառակորդի գլխավորող տանկերը մոտենում են առաջին բնագծին, և վարվում է մինչև տանկերի հիմնական պանզավաժի դուրս գալը պայթյունների գոտույց, որից հետո կրակը տեղափոխվում է հաջորդ բնագծի վրա:

6. *Կրակի հաջորդական կենտրոնացումը* (ԿՀԿ) կենտրոնացված կրակն է նշանակետերի վրա գրոհող յուրային պորքերի ճակատի առջև և թևերում, ընդ որում կրակը հաջորդաբար տեղափոխվում է բնագծից բնագծի՝ դրանց տեղաշարժման համեմատ:

7. *Կրակապատնեշը* (ԿՊ) մի հոծ հրաձածկույթ է, որն ստեղծվում է մեկ բնագծի վրա (միակի ԿՊ) կամ միաժամանակ երկու բնագծի վրա (կրկնակի ԿՊ) գրոհող յուրային պորքերի ճակատի առջև:

ԱՐԽԵՄԱ 2

ՀՐԵՏՍՆՈՒ ԿՐԱԿԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ԿՐԱՎԱԿԻ ՇԱՐՖՈՒՄԻՆ ԽՂՔԱՆԵՐԸ ԿՐԱԿ, միաժամանակ երկու բնագծերի վրա ստեղծելու հոմ կրածովությունը, կիրառվում է լայն փառանդոված մարտահարկի դեպքում տանկերի գրոնի (նակագրոնի) հետնորձան համար

- ներգրավվում է ոչ փակառ քան երկու ՀՐԻ
 - բնագծերի միջև հեռավորությունը՝ 150-200 մ
 - տեղամասի արևույթուող՝ մեկ դրամոնին 25 մ հազվով

ՎԱՐՖՈՒՄ
 1 2 3 4

ԳՀՆ

ԳՀՆ

ՇԱՐՖՈՒՄԻՆ ԽՂՔԱՆԵՐԸ ԿՐԱԿ (ՀՐԻԿ), հոմ կրածովությունը, որը ստեղծվում է մի քանի բնագծերի վրա, վարվում է մի բնագծի վրա՝ հակառակորթի տանկերի շարժման ճանապարհին և հաջորդաբար փակարկվում է մյուս կողմակված բնագծերի վրա՝ կրամի գառույց տանկերի դուրս գալու համեմատ

Անվտանգության բնագիծ

ՎԱՐՖՈՒՄ
 400-600 մ
 1 2 3 4

ԳՀՆ

ԳՀՆ

ՋԱՆԳԱՎԱՍՏԵՐԻՆ ԿՐԱԿ (ԶԿ) ԲԱՇՅՈՒՄՈՒՎ, կիրառվում է, երբ տեղամասն է միաժամանակ լայնի հակառակորթի ինժեներական խնամարձանն մի քանի կարևոր կետանկետներ՝ տեղակարկված մեկ տարածաշրջանում (շրջանում)

ՎԱՐՖՈՒՄ
 1 2 3 4 5 6 7 8

ԳՀՆ

ԳՀՆ

ՋԱՆԳԱՎԱՍՏԵՐԻՆ ԿՐԱԿ (ԶԿ) ՄԱԿԱԿՐՈՒՄՈՒՎ, գնդի ամբողջ կրեստում, կամ կրա սնծ մասի կրամ, որը միաժամանակ վարվում է՝ ուղեկարգված կարճ ժամանակահատվածում կրամակտի վճռակրան լայնության խոնդի

Հետևադոր և տանկեր

ՎԱՐՖՈՒՄ
 1 2 3

ԳՀՆ

ԳՀՆ

8. Շարժուն կրակային գոտին (ՇԿԳ) հրետանային աջակցության մեթոդ է, որի էությունն է գրոհող զորքերի ճակատի առջև խոր, հոծ, շարժուն հրաժածկույթի ստեղծումը հակառակորդի կենդանի ուժը և կրակային միջոցները խցելու համար:

* * *

Վերը շարադրվածից կարելի է այն եկրակայություն հանգել, որ ժամանակակից համապորային մարտում, մանավանդ միայն սովորական զենքի կիրառման դեպքում, հրետանու կրավը հակառակորդի խոցման հիմնական միջոցներից մեկն է: Դա բացատրվում է նրանով, որ հրետանին օժտված է կոր և ճշգրիտ կրակով, հրաձգության մեծ հեռահարությամբ, կարևորագույն նշանակետերի վրա կրակի լայն ու արագ կենտրոնացման ունակությամբ: Հրետանին ունակ է խցելու ամենաբացմտական նշանակետեր՝ բաց և թաքնված, շարժուն և անշարժ, դիտվող և չդիտվող, ցերեկը և գիշերը:

ՄՀԲ-ի (ՄՀԳ-ի) հրետանին պետք է միշտ պատրաստ լինի կրակային խրնդիլները կատարելու կարճ ժամկետներում և վինամթերքի նվազագույն ծախսումով: Հրամանատարների խրնդիլն է՝ աջակցել հրետանային ստորաբաժանումներին մշտական մարտական պատրաստության ուղղությամբ.

առավելագույնա հաշվի առնել հրաձգության բոլոր պայմանները, ապահովել կրակային խնդիլների կատարումը լիակատար պատրաստության հիման վրա, հաշվի առնել լեռնային կրաձգության առանձնահատկությունները, պատրաստ լինել կրակով և անխնդրով տարաշարժին:

Հակառակորդի խոցման պլանավորումը, կազմակերպումը և իրականացումը պաշտպանության մեջ գլխավոր խնդիրն էն, համապորային հրամանատարի և շտաբի պարտականությունը:

Հակառակորդի կրակային խոցումը միաժամանակյա և հաջորդական համալիր կրակային ներգործությունն է, նրա վրա՝ զինված ուժերի տարբեր տեսակների միջոցներով, սովորական և հրկիպող նյութերով օժտված հրթիռներով ու վինամթերքով: Այն նկատում է՝

— հրթիռառմբային հրավճումը ավիացիայի կողմից,

— կրակի բոլոր տեսակների վարումը հրետանիով և տանկային ու մոտոհրաձգային զորքերի միջոցներով,

— դիտանկյիտն ականապայթուցիկ արգելափակոցների և հրետանային, քիմիական ու ճարտարագործական զորքերի հրկիպիչ զենքի կիրառումը:

Պաշտպանության մեջ հաջողության կհասնի այն հրամանատարը, որը ուսուցված հետևազորի հետ ունի նաև լավ հանդերձված և պատրաստված հրետանի:

ՄՈՏՈՀՐԱԶԳԱՅԻՆ ՎԱՇՏԻ ՀԵՆԱԿԵՏԻ ՃԱՐՏԱՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՐԲԱՎՈՐՈՒՄԸ

Բ. Բ. ՄԱՅԻԼՅԱՆ, գնդապետ, Ֆ. Ֆ. ԲՄԳՐԱՏՅԱՆ, մայոր

Մոտոհրաձգային վաշտը պաշտպանությունում գրավում է հենակետ:

Վաշտի հենակետի ճայտատրագործական սարքավորումն սկսվում է այն բանից անմիջապես հետո, երբ որոշվում են ստորաբաժանումների և հրամիջուցների դիրքերը կրակի համակարգի կազմակերպմամբ հանդերձ: Որոշ դեպքերում այն կարող է սկսվել դեռ պաշտ-

պանական դիրքերի գրավումից առաջ, բայց լրիվ ծավալով սովորաբար իրագործվում է ստորաբաժանումների կողմից հենակետերի գրավմանը բուզրնթայ և անընդմեջ շարունակվում է ամբողջ պաշտպանական մարտի ընթացքում: Այն իրագործվում է պաշտպանության ամբողջ խորքով այնպիսի հաջորդականությամբ, որն ապահովում է

ստորաբաժանումների մշտական պատրաստությունը՝ հեռ մղելու հակառակորդի գրոհը և պաշտպանվելու խոչընդոտ միջոցներից, կառավարում է ծածուկ, ուժերի լիակատար լարումով, հավաքովի ամրաշինական կառույցների, շինվածքների և տեղական շինանյութի առավելագույն օգտագործմամբ:

Հավառակորդի հեռ անմիջական շփման բացակայության պայմաններում հենակետի ճարտարագործական սարքավորումն իրագործվում է մեքենայային միջոցների լայն կիրառմամբ: Վաշտի հենակետի սարքավորման համար հատկացվում է 3 օր: Բայց լեռնային բարդ պայմաններում այս ժամկետը կարող է երկարաձգվել: Աշխատանքները կատարվում են որոշակի հաշորդականությամբ:

Առաջին հերթին (I օր) պաշտպանության առջևի եզրի առաջ շինվում են ճարտարագործական արգելափակույցներ, բացվում են ահաժրի և գնդակոծման գոտիներ, մոտոհրաձգային ջուկերի, ինչպես նաև հետևազորի մարտական մեքենաների (գրահափոխադրիչների) և այլ կրակային միջոցների համար խրամատներ են փորվում, հրամանատարական դիտակետերի և բուժկետի համար շինություններ են կառուցվում, յուրաքանչյուր ջուկի, անձնակազմի համար սարքավորվում են վրաձածկված ձեղքեր, դասակային և վաշտային հենակետներում ստեղծվում են անընդմեջ խրամների հատվածներ, սպառաչիությունը և տեխնիկական քողարկվում են հակառակորդի հետախույզությունից և բարձր ճշգրտության պենքից պաշտպանվելու համար, իսկ ստորաբաժանումների միջև հատվածներում, պաշտպանության թևերում և խորքում ստեղծվում են արգելափակույցներ¹ (սխեմա 1)²:

¹ «Боевой устав сухопутных войск, ч. II (батальон, рота). Инженерное оборудование района обороны (опорного пункта). В первую очередь (I день)», Воениздат, М., 1989, с. 97.

² Հնդվածի սխեմաները պատրաստել է մայր Վ. Աղաբեկյանը:

Առաջին հերթին կատարվող աշխատանքների հարվարի	հարվարի		
	Անբաշխական կառույցներ	Կառույցների քանակը	Մեր.-համ / Կարգ.-համ
Մեկ և երկու հոգիանոց խրամատներ խրամատներ ԿԳ-ի, ԿԶԳ-ի և ՀԱՆ-17-ի համար	54	-	486
Խրամատներ հրաձգային ջուկի համար Խրամատներ ՀՍՄ-ի (ՁՓ-ի) համար ³	15	-	270
	3	0,5	90
Շինություններ գլխման համար	10	3,0	60
	4	-	40
Վրաձածկված ձեղքեր	9	-	135
	10	-	50
Ընդամենը	-	3,5	1131

Երկրորդ հերթին (II օր) վերջնասարքավորվում են դասակային հենակետերը և ջուկերի դիրքերը, խրամատներ են փորվում հետևազորի մարտական մեքենաների (գրահափոխադրիչների) և այլ կրակային միջոցների դիրքերում, կրակային բնագծերում և լրահախմբերի կենտրոնացման շրջաններում, ստեղծվում և մարտական ու տրետենակալում կատարելագործվում է խրամատների և հաղորդակցության ուղիների համակարգը վաշտի հենակետում, վերջնասարքավորվում են հրամանատարական դիտակետերը և բժշկական կետը, ստեղծվում են բլինդաձևերի յուրաքանչյուր դասակի, սպաստարան՝ վաշտի, թաքստոյներ՝ սպառաչիության և տեխնիկայի, պինամթերքի և այլ նյութական միջոցների համար, վաշտի հենակետում սարքավորվում են պահեստային և կեղծ օբյեկտներ, առջևի եզրի առաջ, հենակետերի միջև ընկած հատվածներում և թևերում լրացուցիչ սարքավորվում են արգելափակույցներ, ինչպես նաև պատրաստվում են մանևրման ուղիներ⁴:


³ ԿԳ՝ Կալաշնիկովի գնդացի, ԿԶԳ՝ Կալաշնիկովի ձեռքի գնդացի, ՀԱՆ՝ հաստոցային ավտոմատ նռնականետ, ՀՍՄ՝ հետևազորի մարտական մեքենա, ՁՓ՝ քրահափոխարկիչ:

⁴ «Боевой устав сухопутных войск, ч. II. Инженерное оборудование района обороны (опорного пункта). Во вторую очередь (II день)», Воениздат, М., 1989, с. 98.


ՄԵԿ ՀՐԱԶԳԱՅԻՆ ՎԱՇՏԻ ՀԱՄԱՐ ԴԻՐՔԵՐԻ ԱՄՐԱՇԻՆԱԿԱՆ ԱՄՐԱՎՈՐՄԱՆ ՀԱԶՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԸ¹

ՀԱԿԱՌԱԿՈՐԳ


ա)



բ)



գ)



ա - պատկաճ կրակելու համար մեկ հոգիանոց խրամատների սարքավորում
բ - խրամատների խորացում մինչև 1,1 մ, անձնական կազմի համար խոռոչների սարքավորում, 0,6 մ խրամով խրամատների միացում-վերածում ջրի համար խրամատների
գ - խրամների խորացում մինչև 1,1 մ, պահեստային կրակատների և հարթակների, բինդաժի կամ վրածածկված ճեղքի, կից խրամաբլիչների, վրածածկված կրակատների, պիլամբերի համար խոռոչների սարքավորում, հիմնական և պահեստային դիրքերում գտնվող ՀՄՄ-ի (ՋՓ-ի) համար խրամատների փորում և ջրզարկում, դեպի հիմնական դիրքում ՀՄՄ-ի (ՋՓ-ի) համար խրամատ, դասակի ՀԳԿ և այնուհետև թիկուհներ տանող հաղորդակցության ուղու փորում
Տեղի դիրքերի սարքավորման համար պահանջվում է հետևյալի բաժով աշխատակիւ՝ 300-400 մարդ-ժամ, սակրավորի բաժով՝ 150-200 մարդ-ժամ:

¹Որպես սինճա 1-ի հիմք վերցված է «Боевой устав сухопутных войск. ч. III (извод. отделение), приложение», Воениздат, М., 1983, с. 208-209.

Երկրորդ հերթին կատարվող աշխատանքների հաշվարկ

Ամրաշինական կառույցներ	Կառույցների քանակը	Մեք.-ժամ	Մարդ-ժամ
Խրամատների հրաձգային ջոկի համար Պահեստային խրամատներ ՀՄՄ-ի (ՋՓ-ի) համար	6	1	180
Վրածածկված ճեղքեր	10	3	60
Բլինդաժներ	3	-	51
Բլինդաժներ	3	-	300
Անպատրաստներ	1	-	105
Ընդամենը	-	4	696

Հետագայում (III օր) ծավալվում է հենակետի խրամատների և հաղորդակցության ուղիների համակարգը, ընդարձակվում է ճարտարագործական արգելափակոցների համակարգը, ընդլայնվում է ջոկերի մանևրների, մատակարարման և տարախանման ուղիների ցանցը, սարքավորվում են կեղծ հենակետեր, խրամներ, կրակային դիրքեր և այլ օբյեկտներ⁵:

Հետագայում կատարվող աշխատանքների հաշվարկ

Ամրաշինական կառույցներ	Կառույցների քանակը	Մեք.-ժամ	Մարդ-ժամ
Կրակային բնագծերում խրամատներ ՀՄՄ-ի (ՋՓ-ի) համար	10	3	60
Խրամներ և հաղորդակցության ուղիներ	1	3	-
Ընդամենը	-	6	60

Վաշտի հենակետի սարքավորման համար ընդամենը պահանջվում է մեք.-ժամ՝ 13,5, մարդ-ժամ՝ 1887:

Հակառակորդի հետ անմիջական շփման պայմաններում պաշտպանության անցնելու դեպքում ճարտարագործական արգելափակոցներ դրվում են սկզբնապես առաջին եզրի առաջ՝ կարևորագույն ուղղության վրա: Դիրքերը սարքավորելու ժամանակ ստորաբաժանումները նախ փորում են առանձին խրամատներ, որոնք այնուհետև միացվում դարձվում են խրամատ ջոկի համար և խրամ դասակի համար (սխեմա 2):

Հենակետի և դիրքերի ճարտարա-

գործական սարքավորումն իրագործվում է բոլոր, այդ թվում մարտական, տեխնիկական ապահովման ու թիկունքի ստորաբաժանումների ուժերով: Ճարտարագործական գորքերի տրված ստորաբաժանումները իրականացնում են առավել բարդ խնդիրները:

Մոտոհրաձգային վաշտի հենակետում սարքավորվում են երկու խրամներ, այն բաղկացած է լինում մոտոհրաձգային դասակների հենակետերից, վաշտի և տրված ստորաբաժանումների՝ միմյանց հետ կրակի միասնական համակարգով կապված կրակային միջոցների դիրքերից, ինչպես նաև վաշտի հենակետի սահմաններում արգելափակոցներից և հաղորդակցության ուղիներից (սխեմա 3):

Խրամները և հաղորդակցության ուղիները պետք է ապահովեն հատկապես թևային և խաչաձև կրակ վարելու հարմարությունը, անձնական կապի և կրակային միջոցների ծածուկ տեղաբաշխումը, ստորաբաժանումների արագ և գաղտնի մանևրումը ճակատով և դեպի խորք, ինչպես նաև հավառակորդի համար դժվարացնեն պաշտպանությունում մարտակարգի և կրակի համակարգի բացահայտումը:


Առաջին դիրքի առաջին խրամը հանդիսանում է պաշտպանության առջևի եզր, որը որոշվում է ավագ հրամանատարի կողմից:

Առաջին խրամն ընտրվում է հնարավորին չափ մոտ՝ բնական հակատանկային խոչընդոտներին, դրանց հետևում և պետք է ապահովի հակառակորդին լավագույնս դիտարկելու հնարավորություն, ինչպես նաև ստեղծի լավագույն պայմաններ հակառակորդի դեմ հոծ կրակ վարելու համար՝ ինչպես պաշտպանության թիկունքից, այնպես էլ առջևի եզրի առաջ, թևերից և միջանկյալ բնագծերից: Առջևի եզրի առաջ գըտնըվող տեղանքը պետք է հակառակորդի համար դժվարացնի հսկողություն կազմակերպելու, տանկերի ու հետևավորի կուտակման համար թաքնված շրջաններ ընտրելու և պաշտպանության առ-

⁵ Նշված կանոնադրությունը, էջ 99:

ՍԽԵՄԱ 2


ՄՈՏՈՂՐԱԶԳԱՅԻՆ ԳԱՍԱԿԻ ՀԵՆԱԿԵՏԻ ՃԱՐՏԱՐԱՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄԸ



1. Վրածածկված ձեռք
2. Քրամաբջիջ ավտոմատավորի համար
3. Հինմալան հարթակ գեղաքրի համար
4. Քրամաբջիջ նունակախեղի համար
5. Դահնառախի հարթակ գեղաքրի համար
6. Վրածածկված հրակետ
7. Հարթագեղաքրային սեղի
8. Քրամառ ՀՄՍ-ի համար (եկմական)
9. Քրամառ ՀՄՍ-ի համար (պահեստախն)
10. Ավանապտուժած դաշտ
11. Լարափակոյ
12. Անցում ակառնապտուժած դաշտի միջով
13. Գծվարանկար լարափակոյ
14. Հակառակախն խրամատ
15. Ուղեխեղ (կամառայուններ)
16. Քրամ
17. Գասակի Հ-ԳԿ
18. Բինդած
19. Արտաքնոյ

ՍԽԵՄԱ 3

ՎԱՇՏԻ ՀԵՆԱԿԵՏԻ ՀԱՐՏԱՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՐԲԱՎՈՐՈՒՄԸ



ՀԵՆԱԿԵՏԻ ՏԱՐԻԵՐԸ.

1. ճարտարագործական առգելափակյուններ
2. ջրակի դիրքը
3. դասակի դիտակետ
4. դասակի հենակետ
5. վաշտի հրամանատարական դիտակետ
6. վաշտի բաժնիկ
7. ճանապարհներ
8. անցում ականապատված դաշտի միջով

ջևի կարին գաղտնի մոտենալու գործը:

Նրկորդի խրամը սարքավորվում է առաջինից 300—600 մ հեռավորության վրա աչկախ, որ այն պաշտպանող ստորաբաժանումները կարողանան իրենց կրակով օգնել առջևի խրամն պաշտպանող ստորաբաժանումներին. ինչպես նաև կրակ վարել պաշտպանության առջևի կարի մատույցներում և կրակով ծածկապաշտպանել դրա առջև գտնվող արգելափակույցները:

Հատորդակցության ուղիներն օգտագործվում են ստորաբաժանումների գաղտնի մանևրման, ճեղքում իրագործած հակառակորդի դեմ մարտ վարելու, ինչպես նաև վիրավորներին տարահանելու, վնասվածները և սննդամթերք մատակարարելու համար:

Հատորդակցության ուղիները փորվում են կրակային միջոցների համար դիրքերի հետ միաժամանակ: Առաջին խրամից դեպի երկրորդը փորվում է առնվազն մեկ խրամ: Գա հնարավորու-

թյուն է քննառում անհրաժեշտության դեպքում կարճ ժամկետում կազմակերպելու շրջանաձև պաշտպանություն:

Հակառակորդի հրետանու կրակից և ափսայիայի հարվածներից կորուստները նվազեցնելու նպատակով խրամները և հաղորդակցության ուղիները պետք է պատրաստվեն լրիվ տրամադրի, իսկ առանձին հատվածներում խրամներն ամրացվում են թերությունների հագուստով: Խրամներում և հաղորդակցության ուղիներում անձնակազմ կազմի համար ստեղծվում են վրաձածկված հատվածներ, բլինդաժներ և ապաստարաններ, իսկ վնասվածների և այլ նյութական միջոցների համար փորվում են խոռոչներ:

Վաշտի հենակետի սարքավորման գծով ճարտարագործական աշխատանքների հաջող կատարումից շատ բանով են կախված մարտի հաջողությունը, անձնական կազմի և մարտական տեխնիկայի պահպանումը:

ТАКТИКА

БОЕВОЕ ПРИМЕНЕНИЕ АРТИЛЛЕРИИ В ОБОРОНЕ МСБр (МСП) В ГОРНО-ЛЕСИСТОЙ МЕСТНОСТИ

В. А. АЙРАПЕТАНИ, генерал-майор

РЕЗЮМЕ

В современных условиях артиллерия является одним из основных средств огневого поражения противника, наиболее эффективным средством огневой поддержки мотострелковых и танковых войск. Она обладает большой дальностью стрельбы, мощностью и точностью ударов и огня, способностью к широкому маневру, внезапному и быстрому нанесению огневых ударов по противнику в любых условиях обстановки и погоды.

Артиллерия предназначена для поражения средств ядерного нападения (СЯН) и химического нападения, систем высокоточного оружия, артиллерии, танков, БМП, противотанковых и других огневых средств, вертолетов на посадочных площадках, живой силы, пунктов управления (ПУ), средств ПВО и радиоэлектронных средств противника, разрушения его фортификационных сооружений, дистанционного минирования местности, светового обеспечения, постановки аэрозольных (дымовых) завес и выполнения других задач.

В современной войне огневое превосходство может быть достигнуто

лишь совместным применением всех боевых средств родов войск, имеющих в распоряжении общевойскового командира (командующего). Вместе с тем, отмечает автор, завоевание огневого превосходства является самостоятельной оперативной задачей, порядок и способы решения которой должны стать составной частью решения общевойскового командира (командующего) на ведение боя (операции). В этой связи в статье приводятся данные о потерях иракских войск от огня артиллерии в зоне Персидского залива, сравнительно с потерями иракских войск от ударов авиации. В одной из иракских дивизий потери от огня артиллерии составили 87 процентов, а от ударов авиации лишь 13 процентов. Автор статьи приходит к выводу, что артиллерия, обнаружившая свои высокие боевые возможности в операции «Буря в пустыне», подтвердила свою возросшую роль в современном бою. В статье отмечается, что наши мотострелковые (танковые) подразделения должны располагать большим количеством артиллерии, независимо от средств общей поддержки.

Заслуживают внимания и приведенные в статье данные об успехах молодых артиллеристов ВС РА, накопивших практический опыт применения артиллерии в боях за обеспечение безопасности границ Республики Армения.

В статье приводятся общие данные о соединениях, частях и подразделениях гаубичной, пушечной, реактивной, противотанковой артиллерии, минометов, противотанковых управляемых ракет (ПТУР), а также данные о комплексах вооружения артиллерийской разведки и анализируются задачи артиллерии в обороне мотострелковой бригады (МСБр) и мотострелкового полка (МСП), приведены характеристики видов огня артиллерии.

С учетом горного рельефа Армении в статье на большом фактическом материале анализируются особенности боевого применения артиллерии в горно-лесистой местности. Подчеркивается в частности, что значительная часть целей, предназначенных для поражения огнем артиллерии, должны располагаться на крутых обратных скатах, в ущельях, узких долинах и других укрытых местах, а также на хребтах и высотах. В этих условиях для огневого поражения противника автор статьи рекомендует применять огонь преимущественно гаубичной артиллерии и минометов, а при обороне в горах предлагает подготавливать огонь дивизионов (батарей) для поражения противника на подступах к переднему краю обороны, на флангах и в промежутках между опорными пунктами, на скатах высот, обращенных к противнику, в узлах дорог, на выходах из ущелий, горных долин, теснин, на переправах через реки и в проходах через каньоны, а также на направлениях, которые могут быть использованы противником для обхода. Автор статьи подчеркивает, что группировку артиллерии при обороне в горах необходимо создавать с учетом направлений, допускающих наступление крупных сил противника, а для создания многоярусного флангового и перекрестного огня предлагает использовать орудия, выделенные для стрельбы прямой наводкой. Установки ПТУР считает необходимым располагать на обращенных к противнику скатах и на вершинах гор.

В заключение автор подчеркивает, что планирование, организация и осуществление огневого поражения противника являются главной задачей в обороне и обязанностью общевойскового командира и штаба.

Теоретический материал подкреплен схемами, дающими наглядное представление о боевом применении артиллерии и видах ее огня.

ИНЖЕНЕРНОЕ ОБОРУДОВАНИЕ ОПОРНОГО ПУНКТА МОТОСТРЕЛКОВОЙ РОТЫ

Б. И. МАИЛЯН, полковник, Ф. Ф. БАГРАТЯН, майор

РЕЗЮМЕ

Мотострелковая рота в обороне занимает опорный пункт, инженерное оборудование которого начинается после определения позиций подразделений и огневых средств с организацией системы огня и продолжается непрерывно в ходе всего оборонительного боя.

Инженерное оборудование осуществляется одновременно на всю глубину обороны и в последовательности, обеспечивающей постоянную готовность подразделений к отражению наступления противника и защиту от всех средств поражения, проводится скрытно, с максимальным использованием сборных фортификационных сооружений, конструкций и местных строительных материалов.

В условиях отсутствия непосредственного соприкосновения с противником инженерное оборудование опорного пункта осуществляется с широким применением средств механизации.

На оборудование ротного опорного пункта отводится 3 дня. В горных условиях этот срок может быть значительно увеличен.

Работы выполняются в определенной последовательности и подразделяются на три этапа по дням.

В статье подробно обсуждены необходимые работы по инженерному оборудованию опорного пункта на каждом этапе, а также указываются объемы выполняемых работ и их трудоемкости.

При переходе к обороне в условиях непосредственного соприкосновения с противником инженерные заграждения устанавливаются первоначально перед передним краем на важнейшем направлении. При оборудовании позиций подразделения вначале роют отдельные окопы, которые затем соединяются в окоп на отделение и траншею на взвод.

Инженерное оборудование опорных пунктов и позиций осуществляется всеми подразделениями, в том числе и подразделениями боевого, технического обеспечения и тыла, а приданные подразделения инженерных войск выполняют наиболее сложные работы.

Опорный пункт мотострелковой роты оборудуется двумя траншеями и состоит из опорных пунктов мотострелковых взводов, позиций огневых средств роты и приданных подразделений, связанных между собой единой системой огня, а также заграждений и ходов сообщения в пределах опорного пункта роты.

Траншеи и ходы сообщения должны обеспечивать ведение флангового и перекрестного огня, укрытое расположение личного состава и огневых средств, быстрый и скрытый маневр подразделений по фронту и в глубину, а также затруднять противнику вскрытие боевого порядка и системы огня в обороне.

Первая траншея первой позиции является передним краем обороны, который назначается старшим командиром.

Первая траншея выбирается за естественными противотанковыми препятствиями и должна обеспечивать хорошее наблюдение за противником, а так же создать наилучшие условия для ведения сплошного огня по противнику как перед передним краем, так и на флангах, промежуточных рубежах и из глубины обороны.

